

ԿՐԹՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ  
ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ  
ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ



ԱՏՈՄ ՄԵԽԹԱՐՅԱՆ

ԱՐՄԵՆ ՃՈՒՂՈՒԻՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ  
ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ  
Ուղեցույց

ԵՐԵՎԱՆ

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն

2024

ՀՏԴ 37.014:34(075.8)  
ԳՄԴ 74.04+67g73  
Մ 793

Երաշխավորված է  
«Գիտությունների ազգային ակադեմիայի  
գիտակրթական միջազգային կենտրոնի  
գիտական խորհրդի կողմից

Մասնագիտական խմբագիր՝ ի.գ.թ. Ա. Բաբայան,  
«ԳԱԱ ԳԿՄԿ իրավագիտության ամբիոնի վարիչ

Մխիթարյան Ա., Ճուղուրյան Ա.  
Մ 793 Կրթության կառավարման օրենսդրական կարգավորումներ:  
Ուղեցույց/ Ա. Մխիթարյան, Ա. Ճուղուրյան. - Եր.: Գիտություն, 2024 – 143 էջ:

Ուղեցույցում ներկայացվում են տարբեր մակարդակների՝  
հանրակրթություն, նախնական և միջին մասնագիտական կրթություն, բարձրագույն և  
հետբուհական մասնագիտական կրթություն, կազմակերպման և կառավարման  
օրենսդրական հիմունքները, ինչպես նաև ներկայացվում են գիտական  
աստիճանաշնորհման ընթացակարգերը և առանձնահատկությունները:

Նախատեսված է բուհերի մագիստրոսական ծրագրերում սովորող ուսանողների,  
ինչպես նաև պրոֆեսորադասախոսական անձնակազմի, կրթության և գիտության  
ուլորտների վարչարարությամբ զբաղվող մասնագետների համար:

ՀՏԴ 37.014:34(075.8)  
ԳՄԴ 74.04+67g73

ISBN 978-5-8080-1524-1  
DOI: 10.54503/978-5-8080-1524-1

© Ա. Մխիթարյան 2024  
Ա. Ճուղուրյան

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	5
-------------------	---

### ԲԱԺԻՆ 1. ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

1.1 Օրենսդրական կարգավորումները և հիմնական հասկացությունները.....	7
1.2 Պետական քաղաքականությունը կրթության բնագավառում.....	11
1.3 Կրթության համակարգը և կրթության գործընթացի կազմակերպումը.....	13
1.4 Տարբեր մակարդակների կրթությունը և ընդունելությանը ներկայացվող պահանջները.....	16
1.5 Ուսումնական հաստատությունները.....	21
1.6 Կրթության համակարգի կառավարումը.....	24
1.7 Կրթության համակարգի տնտեսական հիմքերը և սոցիալական երաշխիքները.....	28

### ԲԱԺԻՆ 2. ԱՐՇԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

2.1 Նախնական և միջին մասնագիտական կրթության բնագավառի հիմնական հասկացությունները.....	32
2.2 Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության բնագավառի պետական քաղաքականությունը.....	34
2.3 Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության համակարգը.....	37
2.4 Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության կառավարումը.....	42
2.5 Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության համակարգի սուբյեկտները և տնտեսական հիմքերը.....	48

### ԲԱԺԻՆ 3. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

3.1 Բարձրագույն կրթության բնագավառի հիմնական հասկացությունները.....	52
3.2 Պետական քաղաքականությունը բարձրագույն կրթության բնագավառում.....	55
3.3 Բուհերի ինքնավարությունը, իրավասությունը և ակադեմիական ազատությունները.....	57
3.4 Բարձրագույն կրթության համակարգը.....	61
3.5 Բարձրագույն ուսումնական հաստատությունները.....	65
3.6 Բարձրագույն ուսումնական հաստատության կառավարումը.....	68

3.7 Ուսումնական գործունեության սուբյեկտները.....	70
3.8 Բարձրագույն մասնագիտական կրթության համակարգի կառավարումը.....	75

**ԲԱԺԻՆ 4. ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ**

4.1 Գիտական աստիճանաշնորհման և բարձրագույն կրթության երրորդ մակարդակին վերաբերող օրենսդրությունը.....	80
4.2 Ասպիրանտուրայում ընդունելության և ուսուցման կարգը.....	88
4.3 Գիտական աստիճանաշնորհման կարգը.....	96
4.4 Մասնագիտական խորհրդի աշխատանքի կանոնակարգը.....	120
4.5 Ատենախոսության և սեղմագրի ձևավորման պահանջները.....	125
4.6 Օրենսդրական բարեփոխումների անհրաժեշտությունը հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում.....	127
<b>Հավելվածներ.....</b>	<b>133</b>
<b>Օգտագործված գրականություն.....</b>	<b>141</b>

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթության համակարգը բնորոշվում է իր բազմաշերտությամբ և աստիճանակարգային մակարդակներով, որոնց մեջ ընդգրկված է երկրի ողջ ազգաբնակչությունը: Ուստի, առանց օրենսդրական կարգավորումների և իրավական նորմերի կիրառման, համակարգը պարզապես անկառավարելի կդառնա, քաոս կձևավորվի: Եվ պատահական չէ, որ այսօր իսկ արդեն, Հայաստանի Հանրապետությունում գործում են կրթական տարբեր մակարդակներին առնչվող օրենքներ, դրանցից բխող համապատասխան ենթաօրենսդրական ակտեր, որոնք թիրախավորում են ինչպես հանրակրթության, այնպես էլ մասնագիտական կրթության կարգավորումները: Հանրապետությունում կիրառվում է նաև որակավորումների ազգային շրջանակը, որտեղ ըստ կրթական առանձին մակարդակների ներկայացվում են կրթության գործընթացի նպատակադրումները և դրանցից բխող վերջնարդյունքները:

Հատկանշական է, որ բազմաբովանդակ է ոչ միայն կրթության համակարգը, այլև կրթական ծառայությունների շահառուների շրջանակը. պետությունից մինչև տնային տնտեսություններ, սովորողներից մինչև ուսումնական հաստատություններ, որոնց սպասումները կրթության համակարգից նույնպես օրենսդրական կարգավորումների դաշտում են գտնվում: Այս առումով, կարևորվում է սույն ձեռնարկը, որտեղ ներկայացվում է պետական քաղաքականությունը ինչպես հանրակրթության, այնպես էլ մասնագիտական կրթության տարբեր մակարդակներում:

Ուսումնական ձեռնարկում հատուկ վերլուծության են արժանացել կրթության տարբեր շահառուների իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև կրթօջախների գործունեության իրավական կարգավորումները: Թիրախավորվել են առանցքային իրավական նորմերը, որոնք իրավական կարգաբերումներ են ձևավորում կրթության տարբեր մակարդակներում, երաշխքներ են ստեղծում ոչ միայն դրանց անխափան գործունեության, այլև կրթության բոլոր մակարդակների փոխառնչությունների ներդաշնակեցման ոլորտում:

Սիրելի ուսանող, հուսով ենք, որ ուսումնական գործընթացում ձեռնարկի օգտագործումը ոչ միայն կբարձրացնի քո իրավագիտակցության մակարդակը, այլև կընդլայնի կրթության իրավական կարգավորումներին առնչվող անձնային հմտությունների և կարողությունների շրջանակը:

**Արմ Մխիթարյան**  
**Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, մանկավարժության**  
**դոցենտ, ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ**

**Արմեն Ճուղուրյան**  
**պնդեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՊՏՀ**

## **Ասույթներ իրավունքի և կրթության մասին**

Օրինավորը նա է, ով իր իրավունքը չափում է իր պարտքերով: *Լակոտդեր*

Ոչ ոք բնությունից իրավունք չի ստացել կարգադրելու ուրիշներին: *Դիդրո*

Արտոնության մերժումը իրավունքների սահմանափակում չէ: *Կուպե*

Որպեսզի երկիրը կարողանա ապրել, հարկավոր է, որ իրավունքներն ապրեն: *Միցկևիչ*

Ոչ թե իրավունքն է ծնում պարտքը, այլ պարտքը՝ իրավունք: *Շալոթերիան*

Ծովն ու օդը օգտակար են բոլորին, դրա համար օվկիանոսի սեփականության իրավունքը չի կարող պատկանել մի ժողովրդի: *Եդիսարեթ*

Պատիվն ու իրավունքը հաստատվում են բանականության, և ոչ թե զենքի միջոցով: *Ջեյմե*

Վատ օրենքները բռնակալության վատթար տեսակն են: *Բյորք*

Չկա օրենք, որ բոլորի սրտով լինի: *Կալո Ավագ*

Յուրաքանչյուր ոք սեփական կարծիքի լիակատար իրավունք ունի մի պայմանով, որ այն համընկնի մերին: *Հենրի Շոու*

Որոշ պետություններում օրինականությունը զգեստավորում են այնպիսի ձևով, որ նա դառնում է անօրենությունից ավելի սարսափովի: *Ջեյմե*

Կրթվածությունն այն է, ինչ մնում է, երբ մոռանում են այն, ինչ սովորել են: *Ա. Էյնշտեյն*

Կրթության ամբողջ նպատակը հայելիները պատուհաններ դարձնելն է: *Սիդնեյ Ջ. Հարիս*

Վատն է այն աշակերտը, որը ուսուցչին չի գերազանցել: *Լեոնարդո դա Վինչի*

# ԲԱԺԻՆ 1. ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

## Բաժնի բովանդակությունը

- Կրթության բնագավառի պետական քաղաքականությունը
- Կրթության համակարգի ընդհանուր կառավարումը



## Նյութի ուսումնասիրությունից հետո ուսանողը կարող է.

- նկարագրել կրթության բնագավառում օգտագործվող հիմնական հասկացությունները,
- մեկնաբանել կրթության բնագավառում վարվող պետական քաղաքականության սկզբունքները,
- բնութագրել կրթության համակարգը և մակարդակները,
- ներկայացնել տարբեր մակարդակների կրթության ընդունելության պահանջները և կրթության գործընթացի կազմակերպումը,
- բնութագրել տարբեր ուսումնական հաստատությունները,
- ներկայացնել կրթության համակարգի կառավարման սկզբունքները, տնտեսական հիմքերն ու սոցիալական երաշխիքները:

## 1.1 ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԴՐՈՒՅԹ

Օրենքը սահմանում է ինչպես ֆորմալ կրթությունը, այնպես էլ ոչ ֆորմալ կրթությունը կամ ուսուցումը, լրացուցիչ կրթությունը և ինֆորմալ կրթությունը



Կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները և կրթության համակարգի կազմակերպական-իրավական ու ֆինանսատնտեսական հիմքերը սահմանված են ՀՀ կրթության մասին օրենքով<sup>1</sup>:

Միաժամանակ, այն սահմանում է մի շարք հասկացություններ, որոնք օգտագործվում են ոլորտի օրենսդրական կարգավորումների շրջանակներում: Մասնավորապես, կրթությունն անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց է, որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելուն ու սերունդներին փոխանցելուն: Կրթական ծրագրով իրականացվող այն գործընթացը, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն նպատակաուղղված է անձի ուսումնառության կազմակերպմանը, իրականացմանը կամ դրա օժանդակմանը անվանում են ուսուցում:

Օրենքը սահմանում է ֆորմալ կրթությունը որպես հանրակրթական և մասնագիտական կրթական հիմնական ծրագրերի որոշակի

<sup>1</sup> ՀՀ օրենքը կրթության մասին, ՀՕ-297, ընդունված 14/04/1999թ

## ԱՌԱՆՅՔԱՅԻՆ

### ԴՐՈՒՅԹ

Պետական կրթական չափորոշիչը նորմատիվ է, որը սահմանում է կրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, սովորողների ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը և շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները



մակարդակ կամ ամբողջություն, որն իրականացվում է համապատասխան ուսումնական հաստատության կամ տարբեր հաստատությունների կողմից և հանգեցնում տվյալ մակարդակի որակավորման աստիճանի շնորհման և դիպլոմավորման: Ոչ ֆորմալ կրթությունը կամ ուսուցումը կրթության լրացուցիչ ուսուցման ծրագիր կամ ծրագրերի ամբողջություն է, որն իրականացվում է համապատասխան ուսումնական հաստատության կամ հաստատությունների կամ այդ գործառույթն իրականացնելու իրավասությունն ունեցող կազմակերպության միջոցով, սակայն չի հանգեցնում որակավորման աստիճանի շնորհման և ուսումնառության արդյունքների պաշտոնական ճանաչման: Իսկ լրացուցիչ կրթությունը առավելագույնը 5 ամիս տևողությամբ լրացուցիչ կրթական ծրագրով իրականացվող ոչ ֆորմալ ուսումնառությունն է: Օրենքը սահմանում է նաև ինֆորմալ կրթությունը՝ որպես անձի առօրյա և ընտանեկան կյանքի, հանգստի, ժամանցի, աշխատանքային գործունեության և այլ տարբեր գործողությունների արդյունքում ձեռք բերված ուսումնառության արդյունքներ, որոնք, որպես կանոն, կանխամտածված չեն անձի կողմից որպես նպատակային ուսումնառություն, կազմակերպված և համակարգված չեն ժամանակի կամ ռեսուրսների առումով, չեն հանգեցնում արդյունքների պաշտոնական ճանաչման:

Պետական կրթական չափորոշիչը նորմատիվ է, որը սահմանում է կրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, սովորողների ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը և շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները:

Կրթության համապատասխան մակարդակի բովանդակությունը և մասնագիտական ուղղվածությունը կրթական ծրագիրն է:

Հատուկ կրթությունը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց, ինչպես նաև հակասոցիալական վարք դրսևորած երեխաների ուսուցման և կրթության համակարգ է, որը մեկ կամ մի քանի կրթական ծրագրերի հիման վրա կարող է իրականացվել հատուկ կամ ընդհանուր հանրակրթական, մասնագիտական ուսումնական հաստատություններում:

Օրենքը սահմանում է նաև ուսումնական հաստատության հասկացությունը և դրա տեսակները: Այսպես, ուսումնական հաստատությունը իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն կամ դրա ստորաբաժանում է, որն իրականացնում է մեկ կամ մի քանի կրթական ծրագիր և ապահովում է սովորողների ուսուցումն ու դաստիարակությունն այդ ծրագրերի պահանջներին համապատասխան:

Մանկապարտեզը նախադպրոցական կրթության ծրագիր իրականացնող ուսումնադաստիարակչական հաստատությունն է,

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ

### ԴՐՈՒՅԹ

Ուսումնական հաստատություններ են մանկապարտեզը, դպրոցը, ուսումնարանը, քոլեջը, համալսարանը (ինստիտուտը, ակադեմիան)



իսկ հանրակրթական ուսումնական հաստատությունը՝ մեկ կամ մի քանի հանրակրթական հիմնական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատությունը: Կրթահամալիրը տարբեր կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների միավորում է:

Արհեստագործական ուսումնարանը իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն կամ դրա ստորաբաժանում է, որն իրականացնում է նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագիր, իսկ քոլեջն իրականացնում է միջին մասնագիտական կրթական ծրագիր:

Համալսարանը բարձրագույն ուսումնական հաստատություն է, որի գործունեությունը նպատակաուղղված է բնագիտական, հասարակագիտական, գիտության և տեխնիկայի, մշակույթի տարբեր ուղղությունների բարձրագույն, հետբուհական և լրացուցիչ կրթության, հիմնարար գիտական հետազոտությունների և ուսումնառության կազմակերպմանը: Ինստիտուտը ևս բարձրագույն ուսումնական հաստատություն է, որն իրականացնում է գիտության, տնտեսության և մշակույթի մի շարք ուղղությունների գծով մասնագիտական ու հետբուհական կրթական ծրագրեր և գիտական ուսումնասիրություններ: Ակադեմիան սահմանվում է որպես բարձրագույն ուսումնական հաստատություն, որի գործունեությունը նպատակաուղղված է որոշակի ոլորտում կրթության, գիտության, տեխնիկայի և մշակույթի զարգացմանը, իրականացնում է որոշակի ճյուղի կամ բնագավառի բարձր որակավորման մասնագետների պատրաստումը և վերաորակավորումը, հետբուհական կրթական ծրագրերը:

Ուսումնական հաստատության տարածքային առանձնացված ստորաբաժանումը մասնաճյուղն է, որն իրականացնում է մեկ կամ տարբեր կրթական ծրագրեր, մինչդեռ ուսումնական կենտրոնը կազմակերպություն է, որն իրականացնում է լրացուցիչ կրթական ծրագրեր:

Օրենքը սահմանում է մի շարք հասկացություններ, որոնք կարևոր են կրթության ոլորտը կառավարելու և կազմակերպելու տեսանկյունից: Այսպես.

լիցենզավորումը դա ուսումնական հաստատության գործունեության թույլտվության գործընթացն է,

ատեստավորումը՝ ուսումնական հաստատության գործունեության և նրա շրջանավարտների պատրաստման որակի, բովանդակության և մակարդակի գնահատումն է՝ պետական կրթական չափորոշիչների պահանջներին համապատասխան,

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ

### ԴՐՈՒՅԹ

Որակավորման աստիճաններն են՝ արհեստավոր, մասնագետ, բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս, հետազոտող



որակավորումը՝ ամփոփիչ ատեստավորման արդյունքում մասնագիտական որակավորման բնութագրին անձի համապատասխանությունը հավաստող կարգավիճակ է, որը շնորհվում է համապատասխան փաստաթղթով,

որակավորումների ազգային շրջանակ՝ մասնագիտական կրթության որակավորման աստիճանների բնութագրերի ամբողջությունը, որը ներառում է ուսումնառության յուրաքանչյուր աստիճանում ուսուցման արդյունքների և մասնագիտական գործունեության համար անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների ու կարողությունների ընդհանրական նկարագրերը,

իսկ պետական հավատարմագրումը պետության կողմից՝ պետական կրթական չափորոշիչներին մասնագետների պատրաստման որակի համապատասխանության ճանաչումն է:

Օրենքով սահմանվում են նաև որակավորման աստիճանները, որ կարող են շնորհվել Հայաստանի Հանրապետությունում: Դրանք են.

-արհեստավոր՝ նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության որակավորման աստիճան, որը շնորհվում է նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրին և (կամ) որակավորման կարգին համապատասխան պետական ամփոփիչ ատեստավորում անցած անձանց,

-մասնագետ՝ միջին մասնագիտական կրթության որակավորման աստիճան, որը շնորհվում է միջին մասնագիտական կրթական ծրագրին համապատասխան ամփոփիչ ատեստավորում անցած անձանց,

-բակալավր՝ բարձրագույն մասնագիտական կրթության որակավորման աստիճան, որը շնորհվում է միջնակարգ կրթություն ունեցող և առնվազն քառամյա բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերին համապատասխան ատեստավորված անձանց,

-դիպլոմավորված մասնագետ՝ բարձրագույն մասնագիտական կրթության որակավորման աստիճան, որը շնորհվում է միջնակարգ կամ մասնագիտական կրթություն ունեցող անձանց՝ առնվազն հինգամյա բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրի ատեստավորման արդյունքով,

-մագիստրոս՝ բարձրագույն մասնագիտական կրթության որակավորման աստիճան, որը շնորհվում է բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի աստիճան ունեցող անձանց՝ առնվազն մեկ տարի բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրի ատեստավորման արդյունքով,

-հետազոտող՝ հետբուհական մասնագիտական կրթության որակավորման աստիճան, որը շնորհվում է մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի աստիճան ունեցող անձանց՝

ասպիրանտուրայում եռամյա հետբուհական մասնագիտական կրթական ծրագրի ատեստավորման արդյունքով:

## 1.2 ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

### ԱՌԱՆՅՔԱՅԻՆ

#### ԴՐՈՒՅԹ

Պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է:



Համաձայն Կրթության մասին օրենքի՝ պետությունը հռչակում և երաշխավորում է կրթության բնագավառի առաջանցիկ զարգացումը՝ որպես պետականության ամրապնդման կարևորագույն գործոն: Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է: Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը նպատակաուղղված է հայ ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը: Այդ գործին իր նպաստն է բերում նաև Հայ Եկեղեցին:

Կրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպական հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է, որը Կառավարության ներկայացմամբ հաստատում է Ազգային ժողովը: Պետությունը բյուջետային նպատակային ֆինանսավորման միջոցով ապահովում է կրթության բնագավառի պահպանումը և զարգացումը, որի ծավալները որոշվում են կրթության զարգացման պետական ծրագրին համապատասխան: Կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքներն են՝

- կրթության մարդասիրական բնույթը, համամարդկային արժեքների, մարդու կյանքի ու առողջության, անհատի ազատ և համակողմանի զարգացման առաջնայնությունը, քաղաքացիական գիտակցության, ազգային արժանապատվության, հայրենասիրության, օրինականության և բնապահպանական աշխարհայացքի դաստիարակությունը,

- համապատասխանությունը սովորողների զարգացման մակարդակին, առանձնահատկություններին ու պատրաստականության աստիճանին՝ պետական պարտադիր նվազագույնի ապահովմամբ,

- կրթության բնագավառում ժողովրդավարության սկզբունքների ապահովումը,

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ

### ԴՐՈՒՅԹ

Պետությունը կրթության իրավունքն ապահովում է կրթության համակարգի բնականոն գործառնությամբ և կրթություն ստանալու համար սոցիալ-տնտեսական պայմանների ստեղծմամբ



- միջազգային կրթական համակարգում ինտեգրացումը,
- սփյուռքում հայապահպան կրթական գործունեությանն աջակցելը,
- ուսումնական հաստատություններում կրթության աշխարհիկ բնույթը,
- ուսումնական հաստատությունների ողջամիտ ինքնավարությունը,
- պետական և ոչ պետական ուսումնական հաստատություններում քաղաքացիների կրթություն ստանալու հնարավորությունների երաշխավորումը,
- ուսումնական հաստատությունների ու դրանց կողմից տրվող ավարտական փաստաթղթերի իրավահավասար կարգավիճակի ապահովումը:

Պետությունն ապահովում է կրթության իրավունք՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային դրությունից և այլն: Ընդ որում, պետությունը կրթության իրավունքն ապահովում է կրթության համակարգի բնականոն գործառնությամբ և կրթություն ստանալու համար սոցիալ-տնտեսական պայմանների ստեղծմամբ: Այն, համագործակցելով սոցիալական գործընկերների հետ, ապահովում է մասնագիտական կրթության և ուսուցման համակարգի զարգացումը՝ աշխատաշուկայի կարիքներին համապատասխան, ինչպես նաև երաշխավորում ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության համակարգի համաչափ գործարկումն ու արդյունքների ճանաչումը:

Պետությունն իր քաղաքացիների համար երաշխավորում է պետական ուսումնական հաստատություններում անվճար ընդհանուր միջնակարգ և մրցութային կարգով՝ անվճար նախնական (արհեստագործական), միջին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն: Պետք է իմանալ, որ օրենքով արգելվում է ուսումնական հաստատությունների վճարովի համակարգում սովորող, ուսումնառող՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և Վրաստանի Սամցխե-Ջավախք ու Քվեմո-Քարթլի նահանգներում գրանցված և բնակվող հայազգի քաղաքացիների նկատմամբ կիրառել ուսման վարձավճարի ավելի բարձր չափ, քան սահմանված է տվյալ ուսումնական հաստատության համանման պայմաններում սովորող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների նկատմամբ: Ըստ մասնագիտությունների հավատարմագրված կրթական ծրագրեր ունեցող ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում մրցութային հիմունքներով կարող է իրականացվել բարձրագույն և հետ-բուհական մասնագիտական անվճար կրթություն՝ պետության կողմից

ուսանողական նպաստների ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ:

Պետությունը սահմանամերձ, ինչպես նաև բարձրլեռնային բնակավայրերում հաշվառված և մշտապես բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար երաշխավորում է պետական ուսումնական հաստատություններում մրցութային կարգով՝ անվճար նախնական, միջին և բարձրագույն մասնագիտական կրթություն: Այս դեպքում մրցութային ընդունելությունն իրականացվում է ընդհանուր մրցույթից առանձնացված կարգով:

Պետական հանրակրթական դպրոցների առաջինից չորրորդ դասարանների աշակերտներին պետությունը պետական բյուջեի միջոցների հաշվին անվճար ապահովում է տարրական ընդհանուր կրթական ծրագրերով նախատեսված դասագրքերով: Այն անհրաժեշտ պայմաններ է ստեղծում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող քաղաքացիների զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթություն ստանալու և սոցիալական հարմարվածությունն ապահովելու նպատակով:

Օրենքով սահմանված է նաև, որ պետությունը նպաստում է, որ կրթական գործունեությանը մասնակցի նաև սփյուռքահայությունը: Հայաստանի Հանրապետությունում կրթությունն իրականացվում է «Լեզվի մասին» օրենքի<sup>2</sup> պահանջներին համապատասխան, որի 2-րդ հոդվածը փաստում է, որ Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող կրթական և ուսումնական համակարգերում դասավանդման և դաստիարակության լեզուն գրական հայերենն է:

### **1.3 ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ**

Կրթության համակարգը պետական կրթական չափորոշիչների, պետական հավատարմագրման չափանիշների, կրթության հաջորդականությունն ապահովող տարբեր մակարդակի և ուղղվածության կրթական ծրագրերի, ուսումնական հաստատությունների և կրթության կառավարման մարմինների փոխկապակցված

---

<sup>2</sup> Ընդունվել է 30.03.1993թ. ՀՕ- 52

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ

### ԴՐՈՒՅԹ

Հայաստանում  
սահմանված են  
երկու տեսակի  
կրթական  
ծրագրեր՝  
հանրակրթական  
և  
մասնագիտական



ամբողջություն է: Պետական կրթական չափորոշիչները շրջանավարտների կրթության մակարդակի և որակավորման գնահատման հիմքն են՝ անկախ նրանց ստացած կրթության ձևից և ուսումնական հաստատությունների կազմակերպական-իրավական ձևից: Կրթական ծրագիրը սահմանում է որոշակի մակարդակ և ուղղվածություն ունեցող կրթության բովանդակությունը, անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների ծավալը: Սահմանված են երկու տեսակի կրթական ծրագրեր՝ հանրակրթական և մասնագիտական: Հանրակրթական ծրագրերը նպատակաուղղված են անհատի համակողմանի զարգացմանը, նրա աշխարհայացքի ձևավորմանը, նախասիրություններին, հակումներին և ընդունակություններին համապատասխան մասնագիտական ծրագրերի ընտրության և յուրացման համար հիմքերի ստեղծմանը: Հանրակրթական հիմնական ծրագրերն են՝ նախադպրոցական, տարրական, հիմնական և միջնակարգ:

Մասնագիտական կրթական ծրագրերը նպատակաուղղված են կրթության հանրակրթական և մասնագիտական մակարդակների հաջորդականության միջոցով համապատասխան որակավորման մասնագետների պատրաստմանը, կարողությունների և հմտությունների ձևավորմանը, գիտելիքների ծավալի ընդլայնմանն ու որակավորման բարձրացմանը: Մասնագիտական հիմնական կրթական ծրագրերն են՝ նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական և հետբուհական մասնագիտական:

Կան նաև լրացուցիչ կրթական ծրագրեր, որոնք նպատակաուղղված են նախընթաց կրթության և ուսուցման արդյունքում կամ դրան զուգահեռ ձեռք բերված գիտելիքները, կարողությունները և հմտությունները լրացնելուն, կատարելագործելուն և արդիականացնելուն:

Կրթության բովանդակությանը, որպես հասարակության հոգևոր, տնտեսական և սոցիալական առաջընթացի հիմնական գործոններից մեկը, ներկայացվում են որոշակի պահանջներ: Այն նպատակաուղղված է երիտասարդ սերնդի դաստիարակմանը, պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորմանը, անձի համակողմանի և ներդաշնակ զարգացման, նրանց ինքնորոշման և ինքնադրսևորման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը, քաղաքացիական հասարակության կայացմանը և զարգացմանը, իրավական պետության ստեղծմանն ու կատարելագործմանը: Կրթության բովանդակությունը պետք է ապահովի սովորողների գիտելիքների և կրթական ծրագրերի ժամանակակից մակարդակին համապատասխան աշխարհաճանաչման ձևավորումը, նրանց

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ

### ԴՐՈՒՅԹ

Կրթական  
ծրագրերը  
իրականացվում են  
առկա, հեռակա,  
հեռավար և  
դրսեկության  
ձևերով



կողմից ազգային և համամարդկային մշակութային արժեքների յուրացումը, հասարակության կատարելագործումը և ազգի զարգացման նոր մակարդակ ապահովող ժամանակակից անհատի ու քաղաքացու ձևավորումը, ինչպես նաև հասարակության մտավոր ներուժի և աշխատուժի վերարտադրությունն ու զարգացումը:

Ընդ որում, սովորողների կարողություններին և պահանջմունքներին համապատասխան կրթական ծրագրերը կարող են իրականացվել տարբեր ձևերով. առկա (ստացիոնար), հեռակա, հեռավար (դիստանցիոն) և դրսեկության (ընտանեկան և ինքնակրթության) ձևերով: Կրթության բոլոր ձևերի համար նույն կրթական ծրագրերի շրջանակներում գործում է միասնական պետական կրթական չափորոշիչը:

Կրթական ծրագրերն հիմնականում իրականացվում են տարբեր ուսումնական հաստատություններում, որոնք լինում են հետևյալ տիպերի.

- նախադպրոցական,
- հանրակրթական,
- նախնական մասնագիտական (արհեստագործական),
- միջին մասնագիտական,
- բարձրագույն մասնագիտական,
- լրացուցիչ կրթության և
- հետբուհական մասնագիտական կրթության:

Պետք է նշել, որ կրթական ծրագրեր կարող են իրականացվել նաև ոչ ուսումնական հաստատություններում՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի թույլտվությամբ:

Կրթության համակարգում օրենքին համապատասխան կրթության գործընթացը կազմակերպվում և կարգավորվում է ուսումնական պլաններով, առարկայական ծրագրերով, ուսումնական ժամանակացույցով և դասացուցակներով:

Հանրակրթական ուսումնական հաստատություններում կրթության գործընթացը կարգավորվում է օրինակելի ուսումնական պլաններով և առարկայական ծրագրերով: Դրանք մշակում և հաստատում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը (այժմ՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը):

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ուսումնական պլանները և առարկայական ծրագրերը, համապատասխան բնագավառի(ների) պետական կառավարման լիազորված մարմնի հետ համաձայնեցված և կրթության պետական կառավարման լիազորված մարմնի հաստատած չափորոշիչներին համապատասխանեցված, հաստատում են նախնական մասնագիտական և միջին մասնա-

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ

### ԴՐՈՒՅԹ

Հիմնական, միջնակարգ կրթության և մասնագիտական կրթական ծրագրերի յուրացումն ավարտվում է շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների պարտադիր ամփոփիչ ատեստավորմամբ



գիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունները:

Բարձրագույն կրթության ուսումնական պլանները և առարկայական ծրագրերը մշակում և հաստատում է բարձրագույն ուսումնական հաստատությունը: Դրանք ներկայացվում են կրթության պետական կառավարման լիազորված մարմին:

Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը վերահսկում է ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի համապատասխանությունը պետական կրթական չափորոշիչներին: Ուսումնական հաստատություններում ուսումնական տարվա սկիզբը և տևողությունը ևս սահմանվում է պետական կրթական չափորոշիչով:

Հիմնական, միջնակարգ կրթության և մասնագիտական կրթական ծրագրերի յուրացումն ավարտվում է շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների պարտադիր ամփոփիչ ատեստավորմամբ, որի անցկացման կարգը ևս սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

Դրսեկության ձևով հանրակրթության, նախնական մասնագիտական (արհեստագործական), մասնագիտական միջին և բարձրագույն կրթության կազմակերպումն իրականացվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով, իսկ մասնագիտությունների ցանկը սահմանում է Կառավարությունը:

Հեռակա և հեռավար ձևերով մասնագիտական միջին և բարձրագույն կրթության կազմակերպումն իրականացվում է կրթության պետական կառավարման լիազորած մարմնի սահմանած կարգով, իսկ մասնագիտությունների ցանկը կրկին հաստատում է Կառավարությունը:

## 1.4 ՏԱՐԲԵՐ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Նախադպրոցական, հանրակրթական, նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների ընդունելության պահանջները սահմանում է տվյալ հաստատության հիմնադիրը, իսկ պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ Կառավարությունը:

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ

### ԴՐՈՒՅԹ

Դպրոցների  
ավարտական,  
ինչպես նաև  
բուհերի  
ընդունելության  
քննությունների  
հարցաշարերը  
կազմվում են  
բացառապես  
դպրոցների  
կրթական  
ծրագրերով  
նախատեսված  
դասագրքերին  
համապատասխան



Ուսումնական հաստատությունը պարտավոր է դիմորդներին և նրանց ծնողներին ծանոթացնել ուսումնական հաստատության կանոնադրությանը և կրթության գործընթացը կարգավորող մյուս փաստաթղթերին: Ընդհանուր կրթությունն սկսվում է վեց տարեկանից (որը լրանում է մինչև տվյալ ուսումնական տարվա դեկտեմբերի վերջը): Նախնական, միջին և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատություններ ընդունելությունը կատարվում է մրցութային հիմունքով: Բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսանողների հրամանագրումն ավարտվում է տվյալ ուսումնական տարվա պարապմունքներն սկսվելուց հետո՝ մեկամսյա ժամկետում: Բարձրագույն ուսումնական հաստատությունների տվյալ տարվա մասնագիտությունների և ընդունելության քննությունների ցանկը կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ներկայացմամբ հաստատում և մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 1-ը պաշտոնապես հրապարակում է Կառավարությունը: Հաստատված ցանկում փոփոխություններ և լրացումներ կատարելն արգելվում է: Բուհերի տվյալ տարվա մասնագիտությունների և ընդունելության քննությունների ցանկը ներառում է՝

- 1) կրթության ձևը (առկա (ստացիոնար), հեռակա, հեռավար (դիստանցիոն), դրսեկություն),
- 2) մասնագիտություններն ըստ բուհերի,
- 3) յուրաքանչյուր մասնագիտության համար նախատեսված ընդունելության քննությունների առարկաների անվանումը,
- 4) քննության ձևը (մրցութային, ոչ մրցութային),
- 5) քննության տեսակը՝ գրավոր (թելադրություն, շարադրություն, թեսթ), բանավոր, հարցազրույց և այլն:

Պետական հանրակրթական դպրոցների ավարտական, ինչպես նաև պետական և հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության քննությունների անցկացման համար նախապատրաստվող հարցաշարերը, քննական հարցերը, խնդիրները և այլ առաջադրանքները կազմվում են բացառապես պետական հանրակրթական դպրոցների (1-12-րդ դասարանների) կրթական ծրագրերով նախատեսված, կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից պետական հանրակրթական դպրոցներում օգտագործման համար երաշխավորված և առնվազն մեկ ուսումնական տարվա ընթացքում օգտագործված դասագրքերին, ձեռնարկներին, խնդրագրքերին և ժողովածուներին համապատասխան:

Նախադպրոցական կրթության հիմնական խնդիրներն են՝

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ

### ԴՐՈՒՅԹ

Հանրակրթության նպատակը սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական որակների համակողմանի և ներդաշնակ զարգացումն է, անձի՝ որպես ապագա քաղաքացու ձևավորումը



1) երեխայի ֆիզիկական, բարոյական և մտավոր զարգացման հիմքերի ստեղծումը,

2) մայրենի լեզվով հաղորդակցվելու և այդ հիմքի վրա օտար լեզուների ուսումնասիրման նախադրյալների ապահովումը,

3) հաշվետու տարրական կարողությունների զարգացումը,

4) վարվեցողության տարրական կանոններին, հայրենի բնության և բնապահպանության, պատմության և ազգային մշակույթի տարրերին ծանոթացումը,

5) հայրենիքի նկատմամբ սիրո և նվիրվածության զգացում ձևավորելը,

6) աշխատանքային տարրական կարողությունների և հմտությունների ձեռքբերումը,

7) դպրոցական ուսուցման նախապատրաստումը:

Նախադպրոցական կրթության ծրագրերի իրականացման գործում գլխավոր դերը պատկանում է ընտանիքին: Պետությունը պետք է պայմաններ ստեղծի ընտանիքում երեխաների դաստիարակությունը կազմակերպելու համար: Մասնավորապես, ընտանիքին աջակցելու համար պետությունն ստեղծում է նախադպրոցական հիմնարկներ՝ տարբերակված ծրագրերով մտուր-մանկապարտեզներ և մանկապարտեզներ:

Հանրակրթության նպատակը սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական որակների համակողմանի և ներդաշնակ զարգացումն է, անձի՝ որպես ապագա քաղաքացու ձևավորումը, մասնագիտական կողմնորոշումը, նրան ինքնուրույն կյանքի և մասնագիտական կրթությանը նախապատրաստելը:

Հանրակրթության հիմնական խնդիրներն են՝

1) սովորողների կողմից բնության, հասարակության, տեխնիկայի, արտադրության և բնապահպանության մասին հիմնարար գիտելիքների յուրացումը, շարունակական կրթության համակարգում նրանց ինքնակրթության և ինքնազարգացման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելը,

2) համամարդկային և ազգային արժեքներին հաղորդակից, ազգային մշակութային ու բարոյահոգեբանական ժառանգությունը կրող և գործուն քաղաքացիական դիրքորոշում ունեցող անհատ և քաղաքացի ձևավորելը,

3) սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության և նախնական գինպատրաստության համալիր ծրագիր իրականացնելը: Հայաստանում միջնակարգ կրթությունն իրականացվում է եռաստիճան հանրակրթական դպրոցում՝ 12 տարի ընդհանուր տևողությամբ՝ հետևյալ հաջորդական աստիճաններով.

1) տարրական դպրոց (1-4-րդ դասարաններ),

2) միջին դպրոց (5-9-րդ դասարաններ),

3) ավագ դպրոց (10-12-րդ դասարաններ):

## ԱՌԱՆՔՔԱՅԻՆ

### ԴՐՈՒՅԹ

Մասնագիտական ուսումնական հաստատությունները պատրաստում են նախնական, միջին և բարձրագույն մասնագիտական որակավորմամբ կադրեր



Տարրական դպրոցում ուսուցումը նպատակաուղղվում է լեզվամտածողության և տրամաբանության հիմքերի, ուսումնառության և աշխատանքային նախնական հմտությունների ձևավորմանը, ազգային և համամարդկային արժեքներին նախնական հաղորդակցմանը: Միջին դպրոցում ուսուցումը նպատակաուղղվում է առողջ ապրելակերպի, աշխարհի և բնության վերաբերյալ սովորողների գիտական պատկերացման ձևավորմանը, ինքնուրույն աշխատանքի, կրթության և հասարակական ինքնուրույն գործունեության համար անհրաժեշտ գիտելիքների նվազագույն ծավալի ապահովմանը:

Միջնակարգ հանրակրթական դպրոցի առաջին երկու աստիճանները կազմում են հիմնական դպրոցը:

Ավագ դպրոցում ուսուցումը նպատակաուղղվում է հենքային հանրակրթական պատրաստությունն ապահովող գիտելիքների յուրացմանը: Ավագ դպրոցում սովորողների հակումներին, կարողություններին և ընդունակություններին համապատասխան կարող է լրացուցիչ կրթական ծրագրերով իրականացվել տարբերակված (հոսքային) ուսուցում: Միջին և ավագ դպրոցում հայոց լեզու և հայ գրականություն, հայոց պատմություն առարկաների ուսուցումն ավարտվում է գիտելիքների պարտադիր ամփոփիչ ատեստավորմամբ:

Մեր երկրում հիմնական ընդհանուր կրթությունը պարտադիր է: Հիմնական ընդհանուր կրթության պարտադիր լինելու պահանջը պահպանվում է մինչև սովորողի 16 տարին լրանալը, եթե այն չի բավարարվել ավելի վաղ: Միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է:

Արտադպրոցական դաստիարակության նպատակը սովորողների ազատ ժամանցի կազմակերպման միջոցով նրանց հետաքրքրությունների զարգացման համար պայմաններ ստեղծելն է, և նպատակաուղղված է նրանց հոգևոր, գեղագիտական, ֆիզիկական զարգացմանը, ռազմահայրենասիրական դաստիարակությանը, բնապահպանական և կիրառական գիտելիքների ձեռքբերմանը: Արտադպրոցական դաստիարակությունն իրա-կանացվում է մանկապատանեկան ստեղծագործական և գեղա-գիտական կենտրոնների, երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցների, ակումբների, պատանի հայրենասերների, տեխնիկների, բնասերների և տուրիստական կայանների, մարզադպրոցների, առողջարարական ճամբարների և արտադպրոցական դաստիարակություն իրականացնող այլ կազմա-կերպությունների միջոցով:

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ

### ԴՐՈՒՅԹ

Լրացուցիչ կրթական ծրագրերն իրականացվում են անձի ամբողջ կյանքի ընթացքում մասնագիտական և անձնական կրթական պահանջմունքները բավարարելու նպատակով



Մասնագիտական ուսումնական հաստատություններն իրականացնում են կրթական տարբեր մակարդակներին բավարարող կրթական ծրագրեր՝ նախնական, միջին և բարձրագույն մասնագիտական որակավորմամբ կադրեր պատրաստելու նպատակով: Մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական և հավատարմագրված ոչ պետական ուսումնական հաստատությունների կրթական մասնագիտությունների ցանկը, ինչպես նաև համապատասխան մասնագիտական որակավորումների ուսուցման տևողությունը՝ ըստ մասնագիտությունների, և կրթության հիմքը, կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ներկայացմամբ, հաստատում է Կառավարությունը:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության նպատակը նախնական մասնագիտական (արհեստագործական) որակավորմամբ մասնագետներ պատրաստելն է: Նախնական մասնագիտական կրթությունն իրականացվում է արհեստագործական ուսումնարաններում, այլ մասնագիտական ուսումնական հաստատություններում, ուսումնական կենտրոններում, քրեակատարողական հիմնարկներում:

Միջին մասնագիտական կրթության նպատակը առնվազն հիմնական ընդհանուր կրթության հիմքի վրա միջին մասնագիտական որակավորմամբ մասնագետներ պատրաստելն է: Կառավարությունը հաստատում է այն մասնագիտությունների ցանկը, որոնց գծով թույլատրվում է հիմնական ընդհանուր կրթության հիմքի վրա կազմակերպել միջին մասնագիտական կրթությունը: Միջին մասնագիտական կրթությունն իրականացվում է միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ քոլեջներում և ուսումնարաններում, որոնք կարող են իրականացնել նաև հանրակրթական ու արհեստագործական կրթական ծրագրեր: Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ավարտական ատեստավորում անցած շրջանավարտներին շնորհվում է մասնագետի որակավորում:

Հարկ է նշել, որ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտները կարող են կրթությունը շարունակել բուհերում համապատասխան մասնագիտությամբ՝ երկրորդ կուրսում՝ հեռակա ուսուցմամբ:

Բարձրագույն մասնագիտական կրթության նպատակը բարձր մասնագիտական որակավորման կադրերի պատրաստումն ու վերաորակավորումն է, միջնակարգ ընդհանուր և միջին մասնագիտական կրթության հիմքի վրա անձի՝ կրթության զարգացման պահանջմունքների բավարարումը: Համալսարանը, ինստիտուտը,

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ

### ԴՐՈՒՅԹ

Բարձրագույն մասնագիտական կրթության օրենքով սահմանված որակավորման աստիճաններն են՝ բակալավրի, դիպլոմավորված մասնագետի և մագիստրոսի աստիճանները



ակադեմիան և կոնսերվատորիան բուհերի տարատեսակներ են: Բարձրագույն ուսումնական հաստատության կարգավիճակը որոշվում է նրա կրթական ծրագրերով, կազմակերպական-իրավական ձևով, պետական հավատարմագրման առկայությամբ: Օրենքով սահմանվում են բարձրագույն մասնագիտական կրթության որակավորման հետևյալ աստիճանները.

- 1) բակալավր,
- 2) դիպլոմավորված մասնագետ,
- 3) մագիստրոս:

Բուհը, իր բնույթին համապատասխան, կրթության պետական կառավարման մարմնի հետ համաձայնեցրած մասնագիտությունների գծով կարող է իրականացնել նաև հանրակրթական, նախնական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր:

Պետք է նշել, որ բարձրագույն կրթության երրորդ մակարդակը օրենսդրությամբ դեռևս անվանվում է հետբուհական մասնագիտական կրթություն, որի նպատակը բարձրագույն մասնագիտական կրթությամբ անձանց կրթական մակարդակի և գիտամանկավարժական որակավորման բարձրացումն է: Հետբուհական մասնագիտական կրթությունն իրականացվում է բարձրագույն ուսումնական հաստատությունների և գիտական կազմակերպությունների ասպիրանտուրայում, ինտերնատուրայում, օրդինատուրայում՝ հետազոտողի, կլինիկական օրդինատորի կրթական ծրագրերով:

Լրացուցիչ կրթական ծրագրերն իրականացվում են անձի ամբողջ կյանքի ընթացքում մասնագիտական և անձնական կրթական պահանջունքները բավարարելու նպատակով և համարվում են ոչ ֆորմալ ուսուցում ապահովելու միջոց: Դրանց խնդիրն է կատարելագործել, արդիականացնել և լրացնել մինչ այդ ձեռք բերված գիտելիքները, կարողությունները, հմտությունները և արժեքները: Լրացուցիչ կրթական ծրագրերը կազմակերպվում են վերապատրաստումների, խմբային և անհատական մասնագիտական ուսուցման և կարճաժամկետ ուսուցման դասընթացների միջոցով, որոնց ուսումնառության արդյունքները կարող են օրենսդրությամբ սահմանված կարգով գնահատվել և ճանաչվել:

## 1.5 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պետական ուսումնական հաստատությունը իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն է, որն իր խնդիրների

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ

### ԴՐՈՒՅԹ

Բուհի ռեկտորի,  
տնօրենի,  
դեկանի, ամբիոնի  
վարիչի,  
պրոֆեսորի,  
դոցենտի,  
ասիստենտի և  
դասախոսի  
պաշտոններն  
ընտրովի են



իրականացման համար ունի անհրաժեշտ իրավունքներ և պարտականություններ: Պետական ուսումնական հաստատությունը, իր գործունեության նպատակին համապատասխան, կարող է իրականացնել վճարովի ուսումնական, հետազոտական և գիտաարտադրական ծառայություններ և վճարովի ուսուցում: Ոչ պետական ուսումնական հաստատությունները կարող են ունենալ օրենքով նախատեսված ցանկացած կազմակերպական-իրավական ձև:

Օրենքով ամրագրված է, որ բուհական պրոֆեսորադասախոսական կազմը, գիտաշխատողները և ուսանողներն օժտված են ակադեմիական ազատություններով: Նրանք իրավունք ունեն մասնակցելու բուհի գործունեությանն առնչվող բոլոր խնդիրների քննարկմանը և ընտրովի մարմինների աշխատանքին: Պրոֆեսորադասախոսական կազմը, պետական կրթական չափորոշիչներին համապատասխան, ազատ է դասավանդվող ուսումնական նյութի շարադրման և դասավանդման մեթոդների ընտրության մեջ: Բոլոր գիտաշխատողներն ազատ են սեփական նախաձեռնությամբ հետազոտական թեմաների ընտրությունը և մշակումն իրականացնելիս: Ուսանողները ազատ են գիտելիքներ ստանալու, հետազոտություններով զբաղվելու՝ ըստ իրենց հակումների: Նրանք կարող են մասնակցել ուսուցման որակն ապահովող գործառույթներին և գնահատել պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության արդյունավետությունը:

Բարձրագույն ուսումնական հաստատության ընտրովի պաշտոններն են՝ ռեկտոր, տնօրեն, ֆակուլտետի դեկան, ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, դոցենտ, ասիստենտ, դասախոս: Այդ պաշտոնները զբաղեցվում են բուհի կառավարման մարմիններում՝ հավակնորդների թեկնածությունները քննարկելու և գաղտնի (փակ) քվեարկությամբ ընտրելու արդյունքով:

Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը բուհերի առաջարկների հիման վրա, ըստ բուհերի և մասնագիտությունների, հաստատում է վճարովի ուսուցման տեղերը: Բարձրագույն ուսումնական հաստատությունը վճարովի համակարգում սովորող ուսանողական համակազմի առնվազն տասը տոկոսին՝ ուսանողների վարձավճարներից գոյացած բյուջեի առնվազն յոթ տոկոսի չափով, իր միջոցների հաշվին՝ հիմք ընդունելով բարձր առաջադիմությունը և սոցիալական խումբը, իրականացնում է ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում: Վճարովի հիմունքներով սովորողներն ուսման վարձը կարող են մուծել ըստ կիսամյակների: Բուհերն ըստ անհրաժեշտության սահմանում են նաև ուսման վարձի ամսական վճարման մեխանիզմներ:

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ

### ԴՐՈՒՅԹ

Պետական ուսումնական հաստատության հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է:  
Համայնքային ուսումնական հաստատության հիմնադիրը համայնքն է:  
Ոչ պետական ուսումնական հաստատության հիմնադիր կարող են լինել ֆիզիկական և իրավաբանական անձինք:



Բարձրագույն ուսումնական հաստատությունն իրավասու է տնօրինելու սեփական ֆինանսական միջոցները՝ ապահովելով մասնաճյուղի, ֆակուլտետի (ուսումնական ստորաբաժանման) ֆինանսական գործունեության ինքնուրույնությունը:

Օրենքով նախատեսված է, որ Երևանի պետական համալսարանը կրթական և գիտամշակութային ինքնավար հաստատություն է, որի կարգավիճակի առանձնահատկությունները սահմանում է Կառավարությունը: Բոլոր բուհերի կառավարման մարմիններում անդամների թվի առնվազն 25 տոկոսն հատկացված է ուսանողներին, որոնց առաջադրումն ու ընտրությունն իրակա-նացնում է համապատասխան մակարդակի ուսանողական ինքնակառավարման ընտրովի ներկայացուցչական մարմինը՝ ուսանողական խորհուրդը:

Պետական ուսումնական հաստատության հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության կամ պետական համապատասխան լիազորված մարմնի: Համայնքային ուսումնական հաստատության հիմնադիրը համայնքն է՝ ի դեմս համայնքի ինքնակառավարման մարմինների: Ոչ պետական ուսումնական հաստատության հիմնադիր կարող են լինել ֆիզիկական և իրավաբանական անձինք:

Ուսումնական հաստատությունն ստեղծվում է հիմնադրի (հիմնադիրների) որոշմամբ և ստեղծված է համարվում հիմնադրի կողմից դրա կանոնադրությունը հաստատելու և օրենքով սահմանված կարգով պետական գրանցում ստանալու պահից: Ուսումնական հաստատության հիմնադիր փաստաթուղթը հաստատված կանոնադրությունն է, որում նշվում են հաստատության անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, հաստատության գտնվելու վայրը, գործունեության առարկան և նպատակները, կառավարման կարգը, տվյալներ՝ մասնաճյուղերի վերաբերյալ, ուսումնական հաստատության գույքի ձևավորման աղբյուրները, կանոնադրությունում փոփոխություններ և լրացումներ կատարելու կարգը, ուսումնական հաստատության լուծարման դեպքում՝ գույքի տնօրինման կարգը: Ուսումնական հաստատությունը կարող է ստեղծել մասնաճյուղեր: Այն իրավաբանական անձ չէ և գործում է տվյալ ուսումնական հաստատության հաստատած կանոնադրության համաձայն: Մասնաճյուղերը գործում են իրենց ստեղծող ուսումնական հաստատությունների անունից: Ուսումնական հաստատությունը պատասխանատվություն է կրում իր մասնաճյուղի գործունեության համար:

Ուսումնական հաստատությունը կարող է լուծարվել հիմնադրի որոշմամբ, դատարանի վճռով կամ օրենքով նախատեսված այլ

դեպքերում: Այդ դեպքում ուսումնական հաստատության սովորողների հետագա ուսուցման կարգը սահմանում է Կառավարությունը:

## 1.6 ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

### ԱՌԱՆՔՔԱՅԻՆ

### ԴՐՈՒՅԹ

Կրթության համակարգի կառավարման բնագավառում ԿԳՄՍ նախարարությունն է ապահովում օրինակելի հանրակրթական ծրագրերի, ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի, դասագրքերի և ուսումնական ձեռնարկների մշակումը և հրատարակումը



Կրթության համակարգի կառավարման բնագավառում Կառավարությունն ունի մի շարք իրավասություններ, մասնավորապես, -ապահովում է պետական կրթական քաղաքականության իրականացումը,

-հաստատում է պետական կրթական չափորոշիչների ձևավորման և հաստատման կարգը,

-սահմանում է որակավորումների ազգային շրջանակը և հաստատում է կրթության որակավորման աստիճանների ընդհանրական բնութագրերը,

-հաստատում է ուսուցանվող մասնագիտությունների ցանկը,

-հաստատում է հանրակրթական, նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական և բարձրագույն մասնագիտական կրթության պետական պատվերը,

-հաստատում է պետական ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրությունները,

-հաստատում է պետական նմուշի ավարտական փաստաթղթերի ձևերը,

-սահմանում է լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպման և իրականացման կարգը,

-սահմանում է ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման արդյունքների գնահատման և ճանաչման կարգը և այլն:

Մի շարք իրավասություններ օրենքով վերապահված են կրթության պետական կառավարման լիազորված մարմինն, այսպես, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը,

- մշակում է կրթության զարգացման պետական ծրագիրը, պետական կրթական չափորոշիչների ձևավորման և հաստատման կարգը,

- վերահսկողություն է իրականացնում կրթության զարգացման պետական ծրագրի և պետական կրթական չափորոշիչների կիրառման նկատմամբ,

- ապահովում է օրինակելի հանրակրթական ծրագրերի, ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի, դասագրքերի և ուսումնական ձեռնարկների մշակումը և հրատարակումը,

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ

### ԴՐՈՒՅԹ

Կրթության համակարգի կառավարման բնագավառում մարզպետն է համակարգում և վերահսկում դպրոցական տարիքի երեխաների հաշվառումը, ապահովում է նրանց ընդգրկումն ուսումնական հաստատություններում



- իրականացնում է ուսումնական հաստատությունների լիցենզավորումը,
  - մշակում է պետական ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրությունները,
  - հաստատում է ուսումնական հաստատությունների մանկավարժական և ղեկավար կադրերի որակավորման կարգը,
  - հաստատում է որակավորման բնութագրերը՝ ըստ մասնագիտությունների և կրթական աստիճանների,
  - ձևավորում է ուսումնական մասնագիտությունների ցանկերը,
  - մշակում է հանրակրթական, նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների պետական պատվերը,
  - հաստատում է պետական և հավատարմագրված ոչ պետական նախնական մասնագիտակա, միջին և բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կանոնները, վերահսկում է դրանց իրականացումը,
  - հաստատում է ուսումնական հաստատությունների սովորողների գիտելիքների փոխադրական և ամփոփիչ ստուգման կարգը,
  - սահմանված կարգով հաստատում է հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունների գիտական խորհուրդների շնորհած պատվավոր կոչումները և տիտղոսները,
  - մշակում է կրթության բոլոր աստիճանների գծով պետական նմուշի ավարտական փաստաթղթերի ձևերը,
  - սահմանում է օտարերկրյա պետությունների կրթական փաստաթղթերի համարժեքության որոշման և ճանաչման կարգը,
  - ապահովում է պետական ուսումնական հաստատությունների զարգացման ծրագրերի ձևավորումը, իրականացումը և վերահսկումը,
  - համաձայնություն է տալիս մարզպետարանների և համայնքների կրթության վարչությունների կամ բաժինների ղեկավարների և հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների նշանակման ու ազատման վերաբերյալ և այլն:
- Կրթության զարգացման պետական ծրագրի իրականացման, պետական կրթական չափորոշիչների կիրառման, կրթության իրավունքի, կրթական համակարգի սոցիալական երաշխիքների, կրթության որակի բարձրացման և կրթական ծրագրերի յուրացման ապահովումը վերահսկողական գործառույթների միջոցով իրականացնում է Կրթության պետական տեսչությունը:
- Յուրաքանչյուր մարզում հանրակրթության բնագավառում մարզպետն ունի որոշակի իրավասություններ.

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ

### ԴՐՈՒՅԹ

Ուսումնական հաստատությունների կառավարման մարմիններն են՝ հոգաբարձուների խորհուրդը, ուսումնական հաստատության խորհուրդը, ընդհանուր ժողովը, գիտական խորհուրդը, գործադիր մարմինը



- ապահովում է մարզի տարածքում պետական կրթական քաղաքականության իրականացումը,

- վերահսկում է նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից կրթության մասին օրենսդրության և նորմատիվ ակտերի կատարումը, ապահովում է կրթական և դաստիարակչական ծրագրերի իրականացումը՝ պետական կրթական չափորոշիչներին համապատասխան,

- համակարգում և վերահսկում է դպրոցական տարիքի երեխաների հաշվառումը, ապահովում է նրանց ընդգրկումն ուսումնական հաստատություններում,

- ապահովում է պետական ուսումնական հաստատություններին օգտագործման իրավունքով հանձնված շենքերի կառուցումը, շահագործումը և պահպանումը և այլն:

Իսկ համայնքներում ուսումնական հաստատությունների ինքնակառավարման սկզբունքին համապատասխան համայնքի ղեկավարը աջակցում է համայնքի տարածքում պետական կրթական քաղաքականության իրականացմանը, ինչպես նաև իրականացնում է նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների հաշվառումը, ապահովում է նրանց ընդգրկումն ուսումնական հաստատություններում:

Յուրաքանչյուր ուսումնական հաստատություն իր իրավասության շրջանակներում կազմակերպում ու իրականացնում է ընդունելության և ուսումնական գործընթացի մեթոդական ապահովման, կազմակերպման և իրականացման, կադրերի ընտրության և տեղաբաշխման, գիտական, ֆինանսական, տնտեսական և այլ գործունեություն: Ուսումնական հաստատության կառավարումն իրականացվում է օրենքին, իրավական ակտերին և ուսումնական հաստատության կանոնադրությանը համապատասխան՝ միանձնյա ղեկավարման և ինքնավարության սկզբունքների զուգորդմամբ:

Ուսումնական հաստատությունների կառավարման մարմիններն են՝ հոգաբարձուների խորհուրդը, ուսումնական հաստատության խորհուրդը, ընդհանուր ժողովը, գիտական խորհուրդը, գործադիր մարմինը: Դրանց ձևավորման կարգը և լիազորությունները սահմանվում են ուսումնական հաստատության կանոնադրությամբ:

Ուսումնական հաստատությունը ղեկավարում է տնօրենը, ռեկտորը, որը նշանակվում կամ ընտրվում և ազատվում է ուսումնական հաստատության կանոնադրության համաձայն: Պետական ուսումնական հաստատության ղեկավարը չի կարող միաժամանակ զբաղեցնել այլ պետական պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտամանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

Օրենքով նախատեսված կրթական ծրագրերը կարող են իրականացվել միայն լիցենզիայի առկայության դեպքում, որ ուսումնական հաստատությանը տրվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից՝ հետևյալ պահանջների բավարարման դեպքում.

- հիմնական մանկավարժական և պրոֆեսորադասախոսական կազմ,

- լաբորատոր բազա և ուսումնական տարածք,

- ուսումնամեթոդական ապահովում,

- գրադարանային-տեղեկատվական համակարգ,

- ուսումնաարտադրական պրակտիկայի բազա:

Միջին և բարձրագույն մասնագիտական կրթության գծով պետական հավատարմագրումն իրականացվում է ըստ ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների:

Պետական հավատարմագրման պայմաններն են՝ պետական կրթական չափորոշիչներին համապատասխան ուսուցման որակի ապահովումը և այդ հաստատության մասնագիտությունների առնվազն 75 տոկոսի պետական հավատարմագրման առկայությունը: Ուսումնական հաստատությունների, դրանց մասնագիտությունների հավատարմագրումն իրականացվում է առանձին փուլերով՝ ըստ կրթական ծրագրերի: Պետական հավատարմագրման վկայականը հաստատում է ուսումնական հաստատության կողմից իրականացվող կրթական ծրագրերի մակարդակը, դրանց բովանդակության և շրջանավարտների որակի համապատասխանությունը պետական կրթական չափորոշիչների պահանջներին:

Հիշենք, որ լիցենզիա և պետական հավատարմագրման վկայական շնորհելու կամ այդ փաստաթղթերում փոփոխություններ կատարելու դեպքում գանձվում է պետական տուրք՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով<sup>3</sup> սահմանված կարգով և չափերով: Ուսումնական հաստատություններում և հանրակրթական ու նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրեր իրականացնող այլ կազմակերպություններում կրթական ծրագրերի իրականացման արդյունավետության գնահատումը և կրթության որակի ապահովման պետական վերահսկողությունն իրականացնում է Կրթության պետական տեսչությունը:

Նշենք, որ ուսումնական հաստատությունը կրթական ծրագրերով ուսումնառությունն ավարտած և ամփոփիչ ատեստավորում անցած անձանց հանձնում է համապատասխան փաստաթուղթ՝ վկայական,

<sup>3</sup> ՀՕ-186, ընդունվել է 27.12.1997

ատեստատ կամ դիպլոմ: Իսկ ոչ պետական հանրակրթական հաստատությունները պետական նմուշի ավարտական փաստաթուղթ տալու իրավունք են ստանում լիցենզավորման պահից:

Ավարտական փաստաթուղթը հավատարմագրված մասնագիտությունների գծով ուսումնական հաստատություններում հաջորդաստիճանի կրթություն ստանալու համար պարտադիր պայման է: Ընդ որում պետական մարմինների և պետական ոչ առևտրային կազմակերպությունների համար բարձրագույն կրթության մասին վկայող փաստաթուղթը պետական կամ հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատության տված ավարտական փաստաթուղթն է:

Տվյալ մակարդակի կրթությունը չավարտած անձանց տրվում է համապատասխան տեղեկանք:

## 1.7 ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

### ԱՌԱՆՑՔԱՅԻՆ

#### ԴՐՈՒՅԹ

Պետական բյուջեի ընթացիկ ծախսերում կրթության ֆինանսավորման տոկոսային հարաբերությունը օրենքով չպետք է ցածր լինի նախորդ բյուջետային տարվա համապատասխան ցուցանիշից



Պետական ուսումնական հաստատության գործունեությունն ապահովելու նպատակով՝ վերջինիս սեփականության կամ օգտագործման իրավունքով շենքեր, շինություններ, սարքավորումներ, ինչպես նաև սպառողական, սոցիալական, մշակութային և այլ նշանակության անհրաժեշտ հանձնվող պետական գույքի տեսակները հաստատում է կառավարությունը: Ուսումնական հաստատությունը պատասխանատու է սեփականատիրոջ գույքի պահպանման և արդյունավետ օգտագործման համար: Պետական ուսումնական հաստատությունների գույքն օտարվելու դեպքում կարող է օգտագործվել միայն ուսումնական նպատակներով: Իսկ ոչ պետական ուսումնական հաստատությունների սեփականության ներքո կարող է գտնվել ցանկացած գույք, բացի գույքի առանձին տեսակների համար՝ օրենքով նախատեսված սահմանափակումներից:

Ուսումնական հաստատությունը ֆինանսավորում է հիմնադիրը: Պետությունը յուրաքանչյուր նոր ուսումնական տարում երաշխավորում է կրթության կարիքների համար միջոցների հատկացումը՝ նրա առաջանցիկությունն ապահովող չափաքանակով: Պետական բյուջեի ընթացիկ ծախսերում կրթության ֆինանսավորման տոկոսային հարաբերությունը օրենքով չպետք է

ցածր լինի նախորդ բյուջետային տարվա համապատասխան ցուցանիշից:

Պետական բյուջեից պետական ուսումնական հաստատության ֆինանսավորումն իրականացվում է պետական պատվերի, սուբսիդիայի, պետական սեփականություն հանդիսացող գույքի պահպանության վճարի և այլ ձևերով: Պետական պատվերով ուսումնական հաստատության ֆինանսավորման չափանիշները սահմանում է Կառավարությունը՝ մեկ սովորողի հաշվարկով՝ ըստ ուսումնական հաստատության տիպի, իսկ առանձին դեպքերում (լեռնային և սահմանամերձ շրջաններ)՝ հատուկ չափաքանակներով: Ընդ որում, ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրների ներգրավումը չի կարող հանգեցնել պետական բյուջեից ֆինանսավորման չափերի նվազեցմանը: Ուսումնական հաստատությունը չի կարող վճարովի ուսումնական գործունեություն իրականացնել պետական և համայնքների բյուջեից ֆինանսավորվող կրթական գործունեության փոխարեն:

Ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներ կարող են հանդիսանալ ՀՀ և օտարերկրյա պետությունների իրավաբանական և ֆիզիկական անձանց կատարած ներդրումները, սեփական միջոցները, որոնք գոյանում են վճարովի ուսումնական, հետազոտական, գիտաարտադրական, խորհրդատվական, հրատարակչական և օրենսդրությամբ չարգելված գործունեության այլ ձևերից: Ոչ պետական ուսումնական հաստատության ֆինանսավորման չափանիշները մեկ սովորողի հաշվարկով չեն կարող ցածր լինել պետական համանման ուսումնական հաստատությունների համար պետական չափորոշիչով սահմանված ֆինանսավորման չափանիշներից:

Օրենքով նախատեսված է, որ պետությունը կրթության բնագավառում պետք է ապահովի բարենպաստ հարկային քաղաքականություն:

Ուսումնական հաստատությունը նպաստում է սովորողների կենցաղի, սննդի, առողջության պահպանման, հանգստի, ֆիզիկական և հոգևոր զարգացման անհրաժեշտ պայմանների ստեղծմանը: Արգելվում է սովորողներին ներգրավել աշխատանքի՝ առանց վերջիններիս և նրանց ծնողների համաձայնության: Սովորողների նկատմամբ ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման մեթոդների կիրառումն արգելվում է:

Բացառիկ ընդունակություններ դրսևորած երեխաների համար կարող են ստեղծվել հանրակրթական համապատասխան հաստատություններ:

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ

### ԴՐՈՒՅԹ

Օրենքով նախատեսված է, որ պետությունը կրթության բնագավառում պետք է ապահովի բարենպաստ հարկային քաղաքականություն



Պետությունն ապահովում է առանց ծնողական խնամքի մնացած և ծնողական խնամքից զուրկ երեխաների ուսուցումը պետական հանրակրթական հաստատություններում, իսկ կրթության հատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար հանրակրթական հաստատությունների ֆինանսավորումն իրականացվում է բարձրացված չափաքանակներով:

Պետական նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների սովորողները ստանում են կրթաթոշակ: Միջին և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների սովորողներն իրավունք ունեն տվյալ կամ այլ հաստատությունում վճարովի հիմունքներով ստանալ երկրորդ մասնագիտություն: Սովորողներն ատեստավորումը հաջողությամբ անցնելու դեպքում իրավունք ունեն տեղափոխվել համա-պատասխան մակարդակի կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական այլ հաստատություն:

Օրենքով նախատեսված է, որ պետական ուսումնական հաստատությունների վարչական, մանկավարժական կամ պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի վարձատրության դրույքաչափը չի կարող ցածր լինել բյուջետային հիմնարկների աշխատողների միջին աշխատավարձից: Կառավարությունը հավելյալ վարձատրություն է սահմանում սահմանամերձ, բարձր լեռնային և լեռնային բնակավայրերի պետական հանրակրթական դպրոցների ուսուցիչների համար, իսկ ուսումնական հաստատությունն ապահովում է աշխատողների մասնագիտական որակի բարձրացման և վերապատրաստման գործընթացները:

Ուսումնական հաստատություններն օրենսդրությանը և միջազգային պայմանագրերին համապատասխան իրավունք ունեն համագործակցել օտարերկրյա ուսումնական, գիտական և այլ կազմակերպությունների հետ:

## **ԻՆՔՆԱՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՐՑԵՐ**

Ո՞ր օրենքով է կարգավորվում կրթության բնագավառը, ի՞նչ հիմնական հասկացություններ են սահմանվում այդ օրենքով (1.1):



Ինչպիսի՞ դեր ունի պետությունը կրթության կառավարման բնագավառում, ինչպե՞ս է արտահայտվում պետական քաղաքականությունը (1.2):

Ի՞նչ է կրթության համակարգը, ինչպե՞ս է կազմակերպվում կրթության գործընթացը (1.3):

Որո՞նք են կրթության մակարդակները, ինչպե՞ս են հարաբերվում միմյանց հետ, ինչպիսի՞ պահանջներ են ներկայացվում ընդունելությանը (1.4):

Ուսումնական հաստատությունների ի՞նչ տեսակներ կան, ինչպե՞ս են դրանք կառավարվում (1.5):

Ինչպե՞ս է կառավարվում կրթության համակարգը, ի՞նչ սուբյեկտներ են առկա (1.6):

Որո՞նք են կրթության համակարգի տնտեսական հիմքերը, սոցիալական ինչպիսի՞ երաշխիքներ են սահմանված օրենքով (1.7):

## ԲԱԺԻՆ 2. ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

### **Բաժնի բովանդակությունը**

- Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության համակարգի պետական քաղաքականությունը, ընդհանուր կառավարումը, սուբյեկտները

### **Նյութի ուսումնասիրությունից հետո ուսանողը կարող է.**

- Ներկայացնել նախնական և միջին մասնագիտական կրթության բնագավառի հիմնական հասկացությունները,
- մեկնաբանել կրթության բնագավառում վարվող պետական քաղաքականության սկզբունքները, դրանց օրենսդրական հիմքերը,
- բնութագրել արհեստագործական և միջին մասնագիտական կրթության համակարգը, ուսումնական հաստատությունները,
- ներկայացնել արհեստագործական և միջին մասնագիտական կրթության համակարգի կառավարման սկզբունքները, սուբյեկտներն ու տնտեսական հիմքերը:



### **2.1 ՆԱԽՆԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Նախնական մասնագիտական՝ արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման համակարգում պետական քաղաքականության սկզբունքները, կազմակերպական-իրավական և ֆինանսատնտեսական հիմքերը, իրավաբանական և ֆիզիկական անձանց իրավունքներն ու պարտականությունները կարգավորվում են Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին ՀՀ օրենքով<sup>1</sup>: Այստեղ տրվում են մի շարք հասկացությունների սահմանումներ, որոնք հետագայում օգտագործվում են օրենսդրության մեջ:

Այսպես, արհեստագործական կրթությունն առնվազն հիմնական ընդհանուր կրթության հիմքի վրա արհեստագործական կրթական ծրագրերի իրականացումն է, իսկ միջին մասնագիտական

<sup>1</sup> ՀՕ-164-Ն, ընդունվել է 08/07/2005թ

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ

### ԴՐՈՒՅԹ

Մասնագիտական գործունեության համար անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների յուրացմանն ու օգտագործմանը նպատակաուղղված ուսուցման գործընթացն անվանում են մասնագիտական ուսուցում



կրթությունը՝ առնվազն հիմնական ընդհանուր կրթության հիմքի վրա միջին մասնագիտական կրթական ծրագրերի իրականացումն է:

Մասնագիտական գործունեության համար անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների յուրացմանն ու օգտագործմանը նպատակաուղղված ուսուցման գործընթացն անվանում են մասնագիտական ուսուցում: Իսկ հիմնական մասնագիտական կրթական ծրագրերից դուրս անձի մասնագիտական որակները կատարելագործող, մասնագիտական վերաորակավորումը ապահովող, որակավորումը բարձրացնող և լրացնող ուսումնական գործընթացն անվանվում է լրացուցիչ մասնագիտական կրթություն:

Ուսանողը համապատասխան ուսումնական հաստատությունում սահմանված կարգով ընդունված և արհեստագործական կամ միջին մասնագիտական կրթական հիմնական ծրագրով ուսումնառող անձն է: Ունկնդիրը՝ սահմանված կարգով արհեստագործական կամ միջին մասնագիտական կրթական լրացուցիչ ծրագրով ուսումնառող և որակավորման բարձրացման դասընթացին մասնակցող անձն է:

Դասախոսը սահմանվում է որպես ուսանողի կամ ունկնդրի տեսական գիտելիքների յուրացումն ապահովող և գործնական կարողությունների զարգացմանը նպաստող, մասնագիտական կրթության և ուսուցման համակարգի մանկավարժական աշխատող: Անձի արհեստագործական հմտություններ ապահովող, արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և մասնագիտական ուսուցման համակարգի մանկավարժական աշխատողը արտադրական ուսուցման վարպետն է: Մասնագետը միջին մասնագիտական կրթության որակավորման այն աստիճանն է, որը շնորհվում է միջին մասնագիտական կրթական ծրագրերին համապատասխան պետական ամփոփիչ ատեստավորում անցած անձանց: Արհեստավորը՝ արհեստագործական կրթության որակավորման աստիճան է, որը շնորհվում է արհեստագործական կրթական ծրագրին և որակավորման կարգին համապատասխան պետական ամփոփիչ ատեստավորում անցած անձանց:

Այս մակարդակի ուսումնական հաստատություններից արհեստագործական ուսումնարանը սահմանվում է որպես արհեստագործական կրթություն և ուսուցում իրականացնող ուսումնական հաստատություն, իսկ քոլեջը՝ միջին մասնագիտական կրթություն և ուսուցում իրականացնող ուսումնական հաստատություն:

Կրեդիտը ուսումնական բեռնվածության և գիտելիքների յուրացման չափաքանակն է, իսկ կրեդիտային համակարգը՝ ուսումնական գործընթացի կազմակերպման, ուսումնառության արդյունքների կրեդիտների միջոցով չափման, հաշվառման և փոխանցման

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ

### ԴՐՈՒՅԹ

Դասախոսը ուսանողի կամ ունկնդրի տեսական գիտելիքների յուրացումն ապահովող և գործնական կարողությունների զարգացմանը նպաստող, մասնագիտական կրթության և ուսուցման համակարգի մանկավարժական աշխատողն է



համակարգը, որը ներառում է դասավանդումը, գործնական և անհատական պարապմունքները, խորհրդատվությունները, ռեֆերատների, այլ աշխատանքների պատրաստումը, ամփոփիչ ստուգումների նախապատրաստումը, գնահատումը և այլն:

Հեռավար ուսուցումը համակարգված ուսուցման ձև է, երբ անմիջական և ոչ անմիջական ուսուցման գործընթացը ուսանողի կամ ունկնդրի և դասախոսի միջև իրականացվում է հիմնականում տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության միջոցներով: Դրսեկությունը ինքնակրթությամբ և արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունում գիտելիքների ու կարողությունների ընթացիկ, ամփոփիչ գնահատման եղանակով իրականացվող կրթության ձև է: Ուսանողական նպաստ են անվանում պետական բյուջեի ֆինանսավորման, մասնագիտական ուսումնական հաստատության, այլ իրավաբանական և ֆիզիկական անձանց հատկացումների հաշվին ուսանողի ուսման վարձի փոխհատուցումը:

Որակի գնահատումը կամ ատեստավորումը արհեստագործական կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատության մասնագիտությունների, կրթական ծրագրերի, ուսուցման մեթոդների, անձնակազմի և կառուցվածքի արդյունավետության գնահատումն է: Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման համակարգին աջակցող, համագործակցող և համակարգի զարգացման գործում շահագրգիռ կազմա-կերպություններին, ներառյալ՝ ցանկացած տիպի ուսումնական հաստատությունները, անվանում են սոցիալական գործընկեր:

## 2.2 ԱՐՇԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Պետությունը պայմաններ է ստեղծում արհեստագործական և միջին մասնագիտական կրթության համակարգի բնականոն գործունեության և զարգացման համար: Այս բնագավառում պետական քաղաքականության սկզբունքներն են՝

- քաղաքացիների՝ Սահմանադրությամբ ամրագրված մասնագիտական կրթության իրավունքի ապահովումը և պաշտպանությունը,
- ժամանակակից անձի ու քաղաքացու ձևավորման, հասարակության մտավոր ներուժի և աշխատուժի վերարտադրության ու

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ

### ԴՐՈՒՅԹ

Պետությունը, հաշվի առնելով աշխատուժի շուկայի կազմը և կառուցվածքը, արհեստագործական և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատություններում բյուջետային հատկացումների հաշվին երաշխավորում է մասնագիտական ուսուցում



զարգացման, աշխատանքային շուկայում մրցունակության և սոցիալական գործընկերության ապահովումը,

- ուսանողի և ունկնդրի մասնագիտական գիտելիքների և հմտությունների համապատասխանության ապահովումը տնտեսության ու աշխատանքային շուկայի պահանջներին,

- կրթական գործընթացի անընդհատությունը, հաջորդայնությունը և շարունակականությունը,

- արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման համակարգի կառավարման թափանցիկությունն ու կոլեգիալությունը,

- մրցութայնությունը և հրապարակայնությունը,

- արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն իրականացնող սուբյեկտների իրավահավասարությունը,

- արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ինքնավարությունը և վերահսկելիությունը,

- արհեստագործական և միջին մասնագիտական կրթության մատչելիությունը,

- սոցիալական գործընկերների հետ համագործակցությունը,

- արհեստագործական և միջին մասնագիտական կրթության որակավորումների համապատասխանեցումը միջազգային չափանիշներին,

- հայազգի օտարերկրյա քաղաքացիների արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն և ուսուցում ստանալու ապահովումը:

Պետությունը, հաշվի առնելով աշխատուժի շուկայի կազմը և կառուցվածքը, արհեստագործական և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատություններում երաշխավորում է՝

- մրցութային կարգով արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն՝ պետական բյուջեի միջոցների հաշվին,

- սոցիալական գործընկերների պատվերով և ֆինանսավորմամբ արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն և մասնագիտական ուսուցում,

- պետական ծրագրերի շրջանակներում մասնագիտական ուսուցում՝ համապատասխան բյուջետային հատկացումների հաշվին:

Պետությունն աջակցում է նախնական մասնագիտական արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպությունների ուսանողների, ունկնդիրների ուսումնարտադրական, տեխնոլոգիական, նախադիպլոմային պրակտիկաների կազմակերպմանը:

Նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցում տրվում է մրցութային արդյունքներով արհեստագործական և միջին մասնագիտական

ուսումնական հաստատություն ընդունված, ուսումնական տարվա արդյունքներով բարձր առաջադիմություն ունեցող, սոցիալապես անապահով, ինչպես նաև սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի ուսանողներին՝ Կառավարության հաստատած տեղերի քանակին և կարգին համապատասխան:

Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության բնագավառում պետական քաղաքականության խնդիրներն են՝

- արհեստագործական և միջին մասնագիտական կրթության որակի ապահովումը և բարելավման համապատասխան համակարգի ներդրումը,

- առաջնային և կարևոր բնագավառների, ինչպես նաև սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի համար մասնագետների պատրաստմանը և վերապատրաստմանը աջակցելը,

- կրթական գործընթացի անընդհատության, շարունակականության, թափանցիկության և հրապարակայնության ապահովումը,

- արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման համակարգի զարգացումը և մրցունակության բարձրացումը,

- ուսանողի՝ ազգային, բարոյական և համամարդկային արժեքների ոգով դաստիարակումը:

Պետությունն ապահովում է արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման զարգացում հետևյալ ձևերով.

- արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման համակարգի կատարելագործում և արդիականացում,

- արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման պետական ծրագրերի մշակում և իրականացում,

- արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրերի համապատասխանեցում աշխատանքային շուկայի պահանջներին,

- արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման ֆինանսավորում՝ պետության պահանջներից ելնելով,

- սահմանված կարգով արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման համակարգի ուսանողներին և ունկնդիրներին պետական ֆինանսական օժանդակություն (կրթաթոշակներ, ուսանողական նպաստներ, ուսման վարձի փոխհատուցում՝ լրիվ կամ մասնակի գեղջ, կրթական դրամաշնորհներ, վարկեր),

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ

### ԴՐՈՒՅԹ

Պետությունն ապահովում է արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման զարգացումը



- արհեստագործական և միջին մասնագիտական կրթության համակարգում գիտելիքների ստուգման, ուսուցման կազմակերպման նոր ձևերի, ներառյալ՝ կրեդիտային համակարգի ներդրում,
- կրթական նոր հայեցակարգերի և տեխնոլոգիաների ներդրում:

### 2.3 ԱՐԻԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

#### ԱՌԱՆՑՔԱՅԻՆ

#### ԴՐՈՒՅԹ

Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության համակարգը ներառում է կրթական չափորոշիչները, կրթական ծրագրերը, հավատարմագրման չափանիշները, ուսումնական հաստատությունները, լիազորված մարմինները, սոցիալական գործընկերները



Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության համակարգը ներառում է

- արհեստագործական և միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչները, հիմնական և լրացուցիչ կրթական ծրագրերը, պետական հավատարմագրման չափանիշները,
- հիմնական և լրացուցիչ արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն և ուսուցում իրականացնող ուսումնական հաստատությունները և համապատասխան այլ կազմակերպություններ,
- արհեստագործական և միջին մասնագիտական կրթության պետական կառավարման լիազորված մարմինները,
- արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման համակարգի սոցիալական գործընկերները:

Սահմանվում են արհեստագործական և միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչներ, որոնք ապահովում են արհեստագործական և միջին մասնագիտական կրթության որակը և նրա գնահատման հիմքերը, մասնագիտական կրթական քաղաքականության միասնականությունը և օտարերկրյա պետությունների հետ արհեստագործական և միջին մասնագիտական կրթության որակավորումների և ավարտական փաստաթղթերի փոխադարձ ճանաչման հիմքերի համեմատելիությունն ու համարժեքությունը:

Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչները ներառում են.

- ընդհանուր պահանջներ արհեստագործական և միջին մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագրերի նկատմամբ,
- պահանջներ արհեստագործական և միջին մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագրերի բովանդակության

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ

### ԴՐՈՒՅԹ

Օրենքով սահմանվում են արհեստագործական կրթության «արհեստավոր» և միջին մասնագիտական կրթության «մասնագետ» որակավորման աստիճանները



պարտադիր նվազագույնի, դրանց իրականացման պայմանների, ներառյալ՝ տեսական ուսուցման, ուսումնական, արտադրական և նախաավարտական պրակտիկաների և շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման ձևերի, յուրաքանչյուր մասնագիտությամբ շրջանավարտների պատրաստման մակարդակի վերաբերյալ,

- արհեստագործական և միջին մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման ժամկետները, կրեդիտային համակարգի առկայության դեպքում՝ կրեդիտների քանակը,

- սովորողների ուսումնական բեռնվածության նվազագույն և առավելագույն ծավալը:

Արհեստագործական և միջին մասնագիտական կրթությունն իրականացվում է հետևյալ կրթական ծրագրերով.

- արհեստագործական հիմնական կրթական ծրագրով՝ արհեստավորի,

- միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրով՝ մասնագետի և

- արհեստագործական և միջին մասնագիտական լրացուցիչ կրթական ծրագրերով՝ վերապատրաստման, մասնագետների որակավորման բարձրացման և վերաորակավորման:

Արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները կարող են իրականացնել նաև փորձնական մասնագիտական կրթական ծրագրեր: Այս մասնագիտական ուսումնական հաստատությունները համապատասխան գործատուների առաջարկությունների հիման վրա մշակում և հաստատում են պետական կրթական չափորոշիչներին համապատասխանեցված ուսուցանվող մասնագիտությունների և մասնագիտացումների ուսումնական պլանները և առարկայական ծրագրերը, որոնք երաշխավորում են կրթական տարբեր փուլերում ուսանողների ուսումնառության գործընթացը՝ ապահովելով կրեդիտների կուտակումը, փոխանցումը և որակավորման աստիճանների շնորհումը: Կրեդիտների կուտակման և փոխանցման միջոցով ապահովվում է ուսանողների շարժունությունը միջին մասնագիտական կրթական համակարգի ներսում, միջին մասնագիտական համակարգից՝ բարձրագույն մասնագիտական կրթության համակարգ և բարձրագույն մասնագիտական կրթության համակարգից՝ միջին մասնագիտական կրթական համակարգ:

## ԱՌԱՆՅՔԱՅԻՆ

### ԴՐՈՒՅԹ

Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագրերը կարող են իրականացվել ուսուցման առկա, հեռակա, հեռավար, դրսեկություն և վարպետային ուսուցում ձևերով



Օրենքով սահմանվում են արհեստագործական կրթության «արհեստավոր» և միջին մասնագիտական կրթության «մասնագետ» որակավորման աստիճանները:

Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության ուսումնառության ժամկետները սահմանվում են արհեստագործական և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչներով՝ կախված մասնագիտության ուսուցման առանձնահատկությունից և ուսանողի մինչ այդ ստացած կրթությունից կամ կրեդիտների քանակից:

Արհեստագործական կրթության արհեստավորի որակավորման աստիճան ստանալու համար հիմնական կրթական ծրագրի ուսուցման տևողությունը 6 ամսից մինչև 3 տարի է: Միջին մասնագիտական կրթության մասնագետի որակավորման աստիճան ստանալու համար հիմնական կրթական ծրագրի ուսուցման տևողությունը 2 տարուց մինչև 5 տարի է: Արհեստագործական կամ միջին մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագրի նույն մասնագիտության տարբեր աստիճաններում ուսումնառությունը չի համարվում երկրորդ մասնագիտական կրթության ստացում: Արհեստագործական կամ միջին մասնագիտական կրթության համապատասխան աստիճանի ավարտական փաստաթուղթ ստացած անձինք իրավունք ունեն սահմանված կարգով շարունակելու ուսումնառությունը հաջորդ աստիճանի կրթական ծրագրով:

Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագրերը կարող են իրականացվել ուսուցման տարբեր ձևերով՝ առկա, հեռակա, հեռավար, դրսեկություն և անհատական մասնագիտական ուսուցում՝ վարպետային ուսուցում: Արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն ստանալու առկա և այլ ձևերի զուգակցումը չի արգելվում:

Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկը հաստատում է Կառավարությունը՝ համապատասխան ոլորտների լիազորված մարմինների առաջարկությամբ: Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկում նոր մասնագիտություն կարող է ընդգրկվել միայն տվյալ մասնագիտության չափորոշիչ առկայության դեպքում:

Պետական արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունը պետական ոչ առևտրային կազմակերպություն է: Ոչ պետական արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունը կարող է ունենալ

## ԱՌԱՆՅՔԱՅԻՆ

### ԴՐՈՒՅԹ

Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության ավարտական փաստաթղթերն են՝ դիպլոմը և դրա ներդիրը, մասնագիտական ուսուցման որակավորման վկայականը



օրենքով նախատեսված ցանկացած կազմակերպական-իրավական ձև:

Արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության հիմնական խնդիրներն են՝

- ազգային, բարոյական և համամարդկային արժեքների ոգով կրթության կազմակերպումը, անձի մտավոր և հոգևոր զարգացման պահանջմունքների բավարարումը,
- արհեստագործական և միջին մասնագիտական կրթության որակի ապահովումը և բարելավման համապատասխան համակարգի կիրառումը,
- ուսումնական գործընթացի կազմակերպման թափանցիկության և հրապարակայնության ապահովումը,
- բնակչության շրջանում գիտելիքների տարածումը, նրա կրթական և մշակութային մակարդակի բարձրացումը,
- սոցիալական գործընկերների հետ համագործակցության ապահովումը և
- ուսանողների մեջ հմտությունների և աշխատանքի նկատմամբ պատասխանատվության արմատավորումը:

Արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ընդունելությունը կատարվում է առնվազն հիմնական ընդհանուր կրթություն ունեցող անձանց դիմումներով, մրցութային հիմունքներով: Երկքաղաքացիները նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ ընդունվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կամ օտարերկրացիների համար Կառավարության սահմանած պայմաններով՝ իրենց ընտրությամբ: Արհեստագործական կամ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունը իրավունք ունի ընդունելություն հայտարարելու լիցենզիայի առկայության դեպքում:

Արհեստագործական կամ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունը պարտավոր է դիմորդին ծանոթացնել իր լիցենզիային, կանոնադրությանը և ներքին կանոնակարգերին, ինչպես նաև պետական հավա-տարմագրման վկայականին, որի վերաբերյալ տեղեկությունները գրանցվում են դիմորդի ընդունելության փաստաթղթերում: Պետական արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ընդունելության կարգն ըստ կրթական ծրագրերի սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

Արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ընդունելությունը կատարվում է կառա-

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ

### ԴՐՈՒՅԹ

Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման ավարտական փաստաթղթերն են՝ արհեստագործական կրթության դիպլոմը և դրա ներդիրը, միջին մասնագիտական կրթության դիպլոմը և դրա ներդիրը, մասնագիտական ուսուցման որակավորման վկայականը:



վարության հաստատած մասնագիտությունների ցանկին համապատասխան մատչելիության, հրապարակայնության, արդարության, վստահելիության, թափանցիկության, հավասարության սկզբունքների կիրառմամբ:

Արհեստագործական կրթությունը և ուսուցումը իրականացվում է արհեստագործական ուսումնարաններում, քոլեջներում, այլ մասնագիտական ուսումնական հաստատություններում, կազմակերպությունների ուսումնական կենտրոններում, քրեակատարողական հիմնարկներում, համապատասխան լիցենզիա ունեցող և անհատական մասնագիտական ուսուցում իրականացնող վարպետների մոտ:

Միջին մասնագիտական կրթությունը և ուսուցումն իրականացվում է քոլեջներում, համապատասխան մասնագիտությունների գծով կրթություն իրականացնող բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ լիցենզիայի առկայությամբ:

Արհեստագործական և միջին մասնագիտական կրթությունը կազմակերպվում է պետական կրթական չափորոշիչների, գործատուների առաջարկությունների հիման վրա համապատասխան ուսումնական հաստատության մշակած ու հաստատած ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի միջոցով:

Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչներով և կրթական ծրագրերով նախատեսված և հիմնարկներում ու կազմակերպություններում իրականացվող պրակտիկաները (ուսումնական, արտադրական, ուսումնաարտադրական, տեխնոլոգիական, նախադիպլոմային, այլ) իրագործվում են այդ հիմնարկների և կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերի համաձայն:

Արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրերով ուսումնառությունն ավարտած և պետական ամփոփիչ ատեստավորում անցած անձին տրվում է արհեստագործական կամ միջին մասնագիտական կրթության ավարտական փաստաթուղթ՝ տվյալ մասնագիտական ուսումնական հաստատության կամ մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպության կողմից: Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման ավարտական փաստաթղթերն են՝

- արհեստագործական կրթության դիպլոմը և դրա ներդիրը,
- միջին մասնագիտական կրթության դիպլոմը և դրա ներդիրը,
- մասնագիտական ուսուցման, ներառյալ՝ վարպետային ուսուցման որակավորման վկայականը:

Արհեստագործական կամ միջին մասնագիտական կրթության հիմնական կամ լրացուցիչ կրթական ծրագիրը չավարտած անձին

տրվում է ակադեմիական տեղեկանք՝ ուսումնասիրած առարկաների, դասընթացների, դրանց ժամաքանակի և արդյունքների նշումով:

## 2.4 ԱՐԻԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

### ԱՌԱՆՑՔԱՅԻՆ

#### ԴՐՈՒՅԹ

Արիեստագործական և միջին մասնագիտական կրթության համակարգի կառավարումն իրականացնում են Կառավարությունը, լիազորված մարմինը, պետական, տարածքային կառավարման մարմինները, հաստատության գործադիր մարմինը



Արիեստագործական և միջին մասնագիտական կրթության համակարգի կառավարումն իրականացնում են՝

- Կառավարությունը,
- պետական կառավարման լիազորված մարմինը,
- պետական, տարածքային կառավարման մարմինները, որոնց ենթակայությամբ գործում են նախնական մասնագիտական (արիեստագործական) կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ,
- արիեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության գործադիր մարմինը:

Արիեստագործական և միջին մասնագիտական կրթության բնագավառում կառավարությունը՝

- հավանություն է տալիս արիեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման ռազմավարությանը,
- օրենսդրությամբ սահմանված կարգով ստեղծում, վերակազմակերպում և լուծարում է արիեստագործական և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունները,
- հաստատում է արիեստագործական և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրությունը,
- հաստատում է արիեստագործական և միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների ձևավորման և հաստատման կարգը,
- հաստատում է արիեստագործական և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ընդհանրական բնութագրերը և ցանկերը՝ ըստ կրթական ծրագրերի, ուսուցման հիմքի, ձևի և տևողության, ինչպես նաև այն մասնագիտությունների ցանկը, որով արգելվում է հեռակա, հեռավար, դրսեկության կարգով ուսուցումը,
- հաստատում է ըստ մասնագիտական կրթության մասնագիտությունների տրվող որակավորումների ցանկերը,

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ

### ԴՐՈՒՅԹ

Լիազոր մարմինը հաստատում է մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչները և որակավորումների բնութագրերը՝ ըստ մասնագիտությունների ու կրթական աստիճանների



- հաստատում է արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների և արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպությունների պետական հավատարմագրման կարգը, չափանիշները և հավատարմագրի գործողության ժամկետը,
  - հաստատում է արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների և արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն և ուսուցում իրականացնող կազմակերպությունների, դրանցում ուսուցանվող կրթական ծրագրերի լիցենզավորման կարգը,
  - հաստատում է միջին մասնագիտական ուսումնական հաստատությունից շրջանավարտների բուհերում և բուհերի ուսանողների (ներառյալ՝ ուսումնառությունը չավարտած անձանց) միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում կրթությունը շարունակելու կարգը,
  - հաստատում է ֆինանսական միջոցների տրամադրման կարգը, ներառյալ՝ ուսման վարձը փոխհատուցելու, կրթաթոշակ սահմանելու, ուսանողական նպաստ և ուսումնական վարկ հատկացնելու, կրթական հիմնադրամներին ֆինանսավորելու կարգերը,
  - հաստատում է արհեստագործական և միջին մասնագիտական կրթության իրականացման առկա, հեռակա, հեռավար, դրսեկության և անհատական մասնագիտական ուսուցման (վարպետային ուսուցման) ձևերով ուսուցման, ինչպես նաև սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայր գործուղման համար մասնագիտությունների ցանկերը և կարգերը,
  - ապահովում է արհեստագործական և միջին մասնագիտական կրթության զարգացումը և այլն:
- Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման բնագավառում կրթության պետական կառավարման լիազորված մարմինը՝
- մշակում է արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման ռազմավարությունը,
  - հաստատում է արհեստագործական և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչները և որակավորումների բնութագրերը՝ ըստ մասնագիտությունների ու կրթական աստիճանների,
  - հաստատում է արհեստագործական և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների մասնագիտացումների ցանկերը,
  - իր իրավասությունների շրջանակում մշակում և հաստատում է արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և

## ԱՌԱՆՅՔԱՅԻՆ

### ԴՐՈՒՅԹ

Լիազոր մարմինը իրականացնում է արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրերի լիցենզավորումը



ուսուցման համակարգի գործունեությունը կանոնակարգող այլ իրավական ակտեր,

- հաստատում է արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ընդունելության կարգը,

- հաստատում է ուսանողների և ունկնդիրների՝ մեկ մասնագիտական ուսումնական հաստատությունից այլ ուսումնական հաստատություն տեղափոխման կարգը,

- իր իրավասության շրջանակներում իրականացնում է վերահսկողություն արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական կրթական չափորոշիչների պահանջների կատարման, շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման և նրանց պատրաստման որակի նկատմամբ,

- հաստատում է արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպություններում որակի գնահատման և հավատարմագրում իրականացնող կազմակերպությունների կողմից կրթության որակի ապահովման գործընթացի իրականացման կարգը,

- իրականացնում է արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրերի լիցենզավորումը, բացառությամբ բժշկական միջին մասնագիտական կրթական ծրագրերի, մասնագիտական ուսումնական հաստատությունների պետական հավատարմագրումը,

- սահմանում է արհեստագործական և միջին մասնագիտական կրթության փորձնական կրթական ծրագրերի իրականացման կարգը,

- հաստատում է մեկից ավելի արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն ստանալու կարգը,

- արհեստագործական կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով աջակցում է արհեստագործական կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատության կառավարման մարմինների ձևավորմանը և այլն:

Կառավարության լիազորած կառավարման այլ մարմինները արհեստագործական և միջին մասնագիտական կրթության բնագավառում՝ իրենց իրավասության սահմաններում մասնակցում են այնպիսի գործընթացների իրականացմանը, ինչպիսիք են՝

- արհեստագործական և միջին մասնագիտական պետական կրթական չափորոշիչների մշակում, մասնագիտությունների և մասնագիտացումների ցանկերի, մասնագետների որակավորման պահանջների, ուսանողների գիտելիքների, կարողությունների ու հմտությունների նկատմամբ պահանջների ձևավորում, մեծահասակների կրթության և ուսուցման կազմակերպումը,

## ԱՌԱՆՅՔԱՅԻՆ

### ԴՐՈՒՅԹ

Խորհուրդը  
ձևավորվում է  
մանկավարժական  
կազմից,  
ուսանողության  
ներկայացուցիչ-  
ներից, ինչպես նաև  
հիմնադրի,  
կրթության  
պետական  
կառավարման  
լիազոր մարմնի  
ներկայացուցիչ-  
ներից



- շրջանավարտների պետական ամփոփիչ ատեստավորման և որակավորման աստիճանների շնորհումը,

- բնագավառի աշխատողների որակավորման բարձրացման և վերաորակավորման կազմակերպումը:

Կառավարության լիազորած կառավարման այլ մարմինները այս բնագավառում

- ապահովում են ուսանողների, ունկնդիրների ուսումնա-արտադրական, տեխնոլոգիական, նախադիպլոմային պրակ-տիկաների և գործնական աշխատանքների իրականացումը,

- ուսումնասիրում են աշխատանքային շուկայի պահանջարկը և առաջարկություններ են ներկայացնում կրթության պետական կառավարման լիազորված մարմնին մասնագետների և նրանց պատրաստման պայմանների վերաբերյալ,

- հաստատում են իրենց ենթակայության արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների կանոնադրությունները,

- արհեստագործական և միջին մասնագիտական կրթությամբ մասնագետների հիմնական գործատուները կարող են մշակել մասնագիտական կրթություն և ուսուցում իրականացնող կազմակերպությունների հետ համագործակցության հիմքերը և դրանք առաջարկել համապատասխան լիազոր մարմնին և կազմակերպությանը:

Արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունը օրենսդրությանը, իրավական ակտերին և իր կանոնադրությանը համապատասխան՝

- ըստ կրթական ծրագրերի և ուսուցման ձևերի իրականացնում է ուսանողների և ունկնդիրների ընդունելությունը, ապահովում է նրանց ուսումնական գործընթացի, ընթացիկ և պետական ամփոփիչ ատեստավորման կազմակերպումն ու անցկացումը՝ պետական կրթական չափորոշիչների պահանջներով,

- ապահովում է դասախոսների, արտադրական ուսուցման վարպետների վերապատրաստումը, որակավորման բարձրացումը,

- իրականացնում է արհեստագործական և միջին մասնագիտական կրթության զարգացմանը նպաստող ծրագրեր,

- աջակցում է ուսանողական ինքնակառավարմանը, ուսանողների մասնակցությանը ուսումնական հաստատության կողմից իրականացվող ծրագրերում,

- իրականացնում է նաև մեծահասակների կրթության և ուսուցման տարբեր ծրագրեր:

Արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ

### ԴՐՈՒՅԹ

Արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության տված ավարտական փաստաթղթում՝ դիպլոմում, նշվում է ուսումնական հաստատության, դրա առանձին մասնագիտության հավատարմագրված լինելու փաստը



լիազոր պետական մարմինը, հաստատության գործադիր մարմինը՝ տնօրենը և ուսումնական հաստատության խորհուրդը:

Խորհուրդը տվյալ ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմինն է, որը ստեղծվում է 5 տարի ժամկետով: Խորհուրդը ձևավորվում է մանկավարժական կազմից, ուսանողության ներկայացուցիչներից, ինչպես նաև հիմնադրի, կրթության պետական կառավարման լիազոր մարմնի ներկայացուցիչներից: Խորհրդի ձևավորման կարգը սահմանում է լիազոր մարմինը, իսկ անդամների թվաքանակը սահմանվում է տվյալ ուսումնական հաստատության կանոնադրությամբ, սակայն ոչ ավելի, քան 20 հոգի:

Խորհրդի լիազորությունների մեջ մտնում են հաստատության բյուջեի, ռազմավարական ծրագրերի, ուսման վարձի հաստատումը, տնօրենի ընտրությունը, ինչպես նաև ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:

Հիմնադրի որոշմամբ կամ տվյալ ուսումնական հաստատության կանոնադրությամբ ձևավորվում են գիտական խորհուրդներ և կարող են ձևավորվել խորհրդակցական և վերահսկողություն իրականացնող մարմիններ:

Արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության գործադիր մարմնի՝ տնօրենի նշանակման (ընտրության) և ազատման, ինչպես նաև նրա գործունեության կարգը սահմանվում է տվյալ ուսումնական հաստատության կանոնադրությամբ: Պետական արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության տնօրենի հետ աշխատանքային պայմանագիրը կնքում է լիազորված մարմնի ղեկավարը:

Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման որակի ապահովման կազմակերպումը իրականացնում է տվյալ ուսումնական հաստատությունը կամ մասնագիտական կրթություն և ուսուցում իրականացնող կազմակերպությունը: Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման որակի նկատմամբ պետական վերահսկողությունը նպատակաուղղված է արհեստագործական և միջին մասնագիտական կրթության բնագավառում միասնական պետական քաղաքականության ապահովմանը, մասնագետների պատրաստման որակի բարձրացմանը, արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման համակարգի ֆինանսավորման համար հատկացված պետական բյուջեի և այլ միջոցների արդյունավետ օգտագործմանը: Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման որակի նկատմամբ

պետական վերահսկողությունն իրականացնում են կրթության պետական կառավարման լիազորված մարմինը, լիազոր մարմինները՝ լիցենզավորման և հավատարմագրման, ինչպես նաև որակի ապահովման գործընթացների կազմակերպմամբ՝ որակի գնահատում և հավատարմագրում իրականացնող կազմակերպությունների միջոցով: Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման համակարգում որակի ապահովման գործընթացների սկզբունքներն են գնահատման օբյեկտիվությունը, անընդհատությունը, թափանցիկությունը, միասնականությունը և հրապարակայնությունը:

Արհեստագործական և միջին մասնագիտական կրթական գործունեություն՝ կրթական ծրագրեր, կարող են իրականացվել միայն լիցենզիայի առկայության դեպքում: Արհեստագործական կամ միջին մասնագիտական կրթության և ուսուցման ուսումնական հաստատությունը լիցենզավորում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը: Արհեստագործական և միջին մասնագիտական կրթական գործունեության լիցենզավորումն իրականացվում է տվյալ կրթական ծրագրի յուրաքանչյուր մասնագիտության համար առանձին: Արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների, դրանց մասնագիտությունների և կրթական ծրագրերի պետական հավատարմագրումն իրականացվում է լիցենզիայի առկայության դեպքում՝ ըստ ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների:

Պետք է նշել, որ արհեստագործական և միջին մասնագիտական կրթության համակարգում արհեստավորի և մասնագետի կրթական ծրագրերը ենթակա են պետական հավատարմագրման: Պետական հավատարմագրման վկայականը հավաստում է արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության իրականացրած կրթական ծրագրերի մակարդակի, դրանց բովանդակության և շրջանավարտների կրթության որակի համապատասխանությունը պետական կրթական չափորոշիչների պահանջներին: Ուսումնական հաստատության մասնաճյուղերը հավատարմագրվում են ընդհանուր հիմունքներով՝ մասնաճյուղ ունեցող մասնագիտական ուսումնական հաստատության հայտի հիման վրա:

Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա այլ պետությունների արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների, այլ կազմակերպությունների մասնակցությամբ ստեղծված արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները և դրանց մասնաճյուղերն

իրավահավասար են պետական արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններին, ինչպես նաև լիցենզավորվում ու հավատարմագրվում են գործող օրենսդրությանն համապատասխան:

Արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության տված ավարտական փաստաթղթում՝ դիպլոմում, նշվում է ուսումնական հաստատության, դրա առանձին մասնագիտության հավատարմագրված լինելու փաստը: Արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունը կարող է ստանալ նաև հասարակական հավատարմագրում, որը հասարակական հավատարմագրում իրականացնող կազմակերպությունների կողմից իրենց չափանիշներին և պահանջներին մասնագիտական ուսումնական հաստատության գործունեության որակական չափանիշների համապատասխանության ճանաչումն է:

## 2.5 ԱՐՇԵՍԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՈՒՔՅԵԿՏՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

### ԱՌԱՆՔԱՅԻՆ

#### ԴՐՈՒՅԹ

Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության սուբյեկտներն են ուսումնական հաստատություններ ի սովորողները և աշխատողները



Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության սուբյեկտները համապատասխան ուսումնական հաստատությունների սովորողներն են և աշխատողները: Այս բնագավառի ուսումնական հաստատության ուսանողն իրավունք ունի՝

- ընտրելու տվյալ մասնագիտության կամ մասնագիտացման ուսուցման համար պարտադիր և տվյալ մասնագիտության կամ մասնագիտացման ուսուցման համար ոչ պարտադիր դասընթացներ, որոնք տրամադրում են ուսումնական հաստատությունները,
- մասնակցելու իր կրթության բովանդակության ձևավորմանը՝ պահպանելով մասնագիտական կրթության մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչների պահանջները,
- մասնակցելու արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության կառավարման համապատասխան մարմինների աշխատանքներին,
- բացի ընտրած մասնագիտության ուսումնական դասընթացներից, անցնելու ուսումնական այլ դասընթաց՝ հաստատության սահմանած կարգով,
- վճարովի ուսուցման համակարգից փոխադրվելու անվճար ուսուցման համակարգ,

## ԱՌԱՆՅՔԱՅԻՆ

### ԴՐՈՒՅԹ

Ուսանողներին պետական կրթաթոշակ է տրվում գերազանց և լավ առաջադիմության, հասարակական ակտիվության, պատշաճ վարքագիծ դրսևորելու համար



- օգտվելու ուսման տարեկան վարձի մասնակի կամ լրիվ փոխհատուցման իրավունքից,

- օգտվելու սահմանված չափի, ներառյալ՝ անվանական, ինչպես նաև իրենց ուսման ուղարկած իրավաբանական կամ ֆիզիկական անձանց նշանակած կրթաթոշակներից, նպաստներից և վարկերից, նվիրատվություններից և դրամաշնորհներից,

- ուսման վճարի փոխհատուցում նպաստի ձևով տրվում է մրցույթի արդյունքներով բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունված, ուսումնական տարվա արդյունքներով բարձր առաջադիմություն ունեցող, սոցիալապես անապահով, ինչպես նաև սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի ուսանողներին՝ Կառավարության հաստատած տեղերի քանակին և կարգին համապատասխան: Առաջնահերթ և կարևոր ոլորտների մասնագիտությունների ցանկը և քանակը հաստատում է Կառավարությունը, ինչպես նաև սահմանված կարգով փոխհատուցում է այդ ուսանողների նպաստը: Ուսանողներին պետական կրթաթոշակ է տրվում գերազանց և լավ առաջադիմության, հասարակական ակտիվության, պատշաճ վարքագիծ դրսևորելու համար, ինչպես նաև սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի ուսանողներին: Պետական կրթաթոշակի տրման կարգը և չափը սահմանում է Կառավարությունը:

Առողջական պատճառներով կամ այլ բացառիկ դեպքերում ուսանողին կարող է տրամադրվել ակադեմիական արձակուրդ, որի ընթացքում նա պահպանում է ուսանողի իր իրավունքը:

Ուսումնառությունը որևէ պատճառով անավարտ թողած անձի ուսանողական իրավունքը կարող է վերականգնվել՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:

Ուսանողի տեղափոխությունը պետական հավատարմագրում ստացած մասնագիտական ուսումնական հաստատություն կարող է իրականացվել մեկ այլ պետական հավատարմագրում ստացած մասնագիտական ուսումնական հաստատությունից: Ունկնդիրները մասնագիտական կրթական ծառայություններ ստանալու մասով օգտվում են ուսանողների իրավունքից: Ուսանողը կամ ունկնդիրը կրում է պարտականություններ Հայաստանի Հանրապետության օրենքներով, ուսումնական հաստատության կանոնադրությամբ և ներքին կանոնակարգերով սահմանված կարգով:

Արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպություններում նախատեսվում են մանկավարժական, վարչատնտեսական, արտադրական, ուսումնաօժանդակ և այլ անձնակազմեր:

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ

### ԴՐՈՒՅԹ

Արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության ֆինանսավորումն իրականացնում է հիմնադիրը



Արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների մանկավարժական կազմում ընդգրկվում են դասախոսները, արտադրական ուսուցման վարպետները:

Մանկավարժական աշխատողների տարակարգերին և պաշտոններին ներկայացվող պահանջները, մրցույթների կազմակերպման և անցկացման, վերապատրաստման և ատեստավորման կարգերը հաստատում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը: Մասնագիտական կրթության համակարգի աշխատողները իրավունք ունեն օգտվելու օրենքներով և տվյալ մասնագիտական ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:

Արհեստագործական կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատության կանոնադրությամբ նախատեսված գործունեության ապահովման նպատակով հիմնադիրը ուսումնական հաստատությանը սեփականության կամ օգտագործման իրավունքով տրամադրում է շենքեր, շինություններ, տրանսպորտ, հողամասեր, սարքավորումներ, ինչպես նաև սպառողական, սոցիալական, մշակութային և այլ նշանակության անհրաժեշտ գույք: Պետական արհեստագործական կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններին հիմնադիրը գույքը տրամադրում է անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով:

Արհեստագործական կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունը սեփականության իրավունք ունի ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից արհեստագործական կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատությանը նվիրատվության, հանգանականության կամ կտակի ձևով փոխանցված դրամական միջոցների, գույքի և սեփականության այլ օբյեկտների, օրենքով չարգելված այլ աղբյուրների, ինչպես նաև սեփական գործունեությունից ստացված եկամուտների և այդ եկամուտների հաշվին ձեռք բերված գույքի նկատմամբ:

Արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատության ֆինանսավորումն իրականացնում է հիմնադիրը:

Արհեստագործական և միջին մասնագիտական կրթական համակարգը ըստ կառավարության սահմանած չափի և հատկացումների ֆինանսավորվում է պետական բյուջեից և օրենքով չարգելված այլ միջոցներից:

Ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներ են՝

- սեփական միջոցները, որոնք գոյանում են ձեռնարկատիրական գործունեության շնորհիվ և օրենքով չարգելված գործունեության այլ տեսակներից,

- Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների իրավաբանական և ֆիզիկական անձանց կատարած ներդրումները, դրամաշնորհներն ու վարկերը,

- Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեները:

Արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները սահմանված կարգով իրականացնում են իրենց տնտեսական և ֆինանսական գործունեության հաշվապահական հաշվառումը:

Արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպություններում տնտեսական և ֆինանսական գործունեության վերահսկողությունն իրենց լիազորությունների սահմանում իրականացնում են լիազորված մարմինները: Ընդ որում, արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպությունների գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման):

## ԻՆՔՆԱՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Ո՞ր օրենքով է կարգավորվում նախնական և միջին մասնագիտական կրթության բնագավառը, ի՞նչ հիմնական հասկացություններ են սահմանվում այդ օրենքով (2.1):



Ի՞նչպե՞ս է արտահայտվում արհեստագործական և միջին մասնագիտական կրթության բնագավառի պետական քաղաքականությունը (2.2):

Ի՞նչ է իր մեջ ներառում արհեստագործական և միջին մասնագիտական կրթության համակարգը (2.3):

Ո՞ր մարմիններն են իրականացնում արհեստագործական և միջին մասնագիտական կրթության համակարգի կառավարումը (2.4):

Որո՞նք են արհեստագործական և միջին մասնագիտական կրթության համակարգի սուբյեկտները, ինչպիսի՞ր իրավունքներ ունեն նրանք, ովքե՞ր են ֆինանսավորում արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները (2.5):

### ԲԱԺԻՆ 3. ԲԱՐԾՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

<b>Բաժնի բովանդակությունը</b>	<b>Նյութի ուսումնասիրությունից հետո ուսանողը կարող է.</b>
<ul style="list-style-type: none"> <li>• Պետական քաղաքականությունը բարձրագույն կրթության բնագավառում</li> <li>• Բարձրագույն կրթության համակարգը, բուհերը և դրանց կառավարումը</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>➢ նկարագրել բարձրագույն կրթության բնագավառում օգտագործվող հիմնական հասկացությունները,</li> <li>➢ մեկնաբանել բարձրագույն կրթության բնագավառում վարվող պետական քաղաքականության սկզբունքները,</li> <li>➢ ներկայացնել բուհերի ինքնավարության և ակադեմիական ազատությունների սկզբունքները,</li> <li>➢ բնութագրել բարձրագույն կրթության համակարգը,</li> <li>➢ գնահատել բարձրագույն ուսումնական հաստատությունները,</li> <li>➢ ներկայացնել բարձրագույն կրթության համակարգի և բուհերի կառավարման սկզբունքները:</li> </ul>



#### 3.1 ԲԱՐԾՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում իրավական, կազմակերպական և ֆինանսական հարաբերությունները կարգավորվում են Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին ՀՀ օրենքով<sup>1</sup>, որն ընդունվել է 2004թ. դեկտեմբերի 14-ին: Այստեղ սահմանվում է մի շարք հասկացություններ, որոնք հարկավոր են բարձրագույն կրթության բնագավառի օրենսդրական կարգավորումների շրջանակներում: Այսպես, բարձրագույն մասնագիտական կրթությունն առնվազն միջնակարգ կրթության հենքի վրա բակալավրի, դիպլոմավորված մասնագետի, մագիստրոսի ծրագրերով իրականացվող մասնագիտական կրթությունն է: Բուհը կրթական հաստատություն է, որն

<sup>1</sup> Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին ՀՀ օրենք, ՀՕ-62-Ն, ընդունված 14/12/2004թ

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ

### ԴՐՈՒՅԹ

Բարձրագույն մասնագիտական կրթությունն առնվազն միջնակարգ կրթության հենքի վրա բակալավրի, դիպլոմավորված մասնագետի, մագիստրոսի ծրագրերով իրականացվող մասնագիտական կրթությունն է



## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ

### ԴՐՈՒՅԹ

Հետբուհական մասնագիտական կրթությունը բարձրագույն մասնագիտական կրթության հենքի վրա ասպիրանտի, հետազոտողի, հայցորդի ծրագրով իրականացվող մասնագիտական կրթությունն է



իրականացնում է բակալավրի, մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի կրթական ծրագրեր: Հետբուհական մասնագիտական կրթությունը սահմանվում է որպես բարձրագույն մասնագիտական կրթության (մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի) հենքի վրա ասպիրանտի, հետազոտողի, հայցորդի ծրագրով իրականացվող մասնագիտական կրթություն: Իսկ լրացուցիչ կրթությունը մասնագիտական կրթության հենքի վրա հիմնական կրթական ծրագրերից դուրս մասնագիտական որակները կատարելագործող, մասնագիտական վերա-որակավորումը ապահովող, անձի մասնագիտական որակավորումն անընդհատ լրացնող կրթությունն է: Ուսանողը համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատություն սահմանված կարգով ընդունված և բարձրագույն մասնագիտական կրթության կրթական որևէ ծրագրով ուսումնառու անձն է: Դասախոսը՝ բարձրագույն մասնագիտական կրթական համակարգի գիտամանկավարժական աշխատող, որը տեսական, գործնական, մասնագիտական գիտելիքներ է դասավանդում ուսանողներին, սովորողներին և նպաստում է դրանց յուրացմանը: Ասպիրանտը բարձրագույն մասնագիտական՝ մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կրթություն ունեցող, հետբուհական կրթական ծրագրով ուսումնառությունն ասպիրանտուրայում շարունակող և գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման նպատակով ատենախոսություն պատրաստող անձն է, որը հետբուհական մասնագիտական կրթական ծրագրով ատեստավորման արդյունքում կարող է ստանալ հետազոտողի որակավորման աստիճան: Դոկտորանտը գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող և գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման նպատակով ատենախոսություն պատրաստելու համար համապատասխան կարգով ձևակերպված անձն է: Օրենքով սահմանվում է նաև հայցորդը որպես բարձրագույն մասնագիտական կրթություն՝ մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող և առանց ասպիրանտուրայում սովորելու՝ գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման նպատակով ատենախոսություն պատրաստող անձ կամ գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող և գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման նպատակով ատենախոսություն պատրաստող անձ, որը սահմանված կարգով կցված է հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպությանը:

Հեռավար ուսուցումը համակարգված ուսուցման ձև է, երբ անմիջական և ոչ անմիջական ուսուցման գործընթացը սովորողի և

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ

### ԴՐՈՒՅԹ

Կրեդիտային համակարգը ուսումնական գործընթացի կազմակերպման, ուսումնառության արդյունքների սկադեմիական կրեդիտների միջոցով չափման, հաշվառման և փոխանցման համակարգն է



դասախոսի միջև իրականացվում է հիմնականում տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության միջոցներով: Դրսեկությունը կամ էքստեռնատը ինքնակրթությամբ և գիտելիքների ու կարողությունների ընթացիկ, ամփոփիչ գնահատման եղանակով ուսումնական հաստատությունում իրականացվող կրթության ձևն է:

Պետության կողմից բուհի, կրթական ծրագրի, մասնագետների պատրաստման որակի՝ պետական կրթական չափորոշիչներին համապատասխանության ճանաչումն անվանում են պետական հավատարմագրում: Ինքնավերլուծությունը բարձրագույն ուսումնական հաստատության մասնագիտությունների, կրթական ծրագրերի, անձնակազմի և կառուցվածքի արդյունավետության և որակի ուսումնասիրություն է, որը, կրթական չափորոշիչներին համապատասխան, իրականացնում է բարձրագույն ուսումնական հաստատությունը:

Ուսումնական հաստատության որակի գնահատումը բարձրագույն ուսումնական հաստատության մասնագիտությունների, կրթական ծրագրերի, ուսուցման մեթոդների, անձնակազմի և կառուցվածքի արդյունավետության գնահատումն է: Որակի ապահովումը՝ պետական կրթական չափորոշիչներին և հավատարմագրման չափանիշներին կրթության որակի համապատասխանության և բարելավման անընդհատ գործընթաց է:

Ակադեմիական կրեդիտ սահմանվում է որպես ուսումնական բեռնվածության չափման ժամաքանակով արտահայտվող պայմանական միավոր: Կրեդիտային համակարգը ուսումնական գործընթացի կազմակերպման, ուսումնառության արդյունքների սկադեմիական կրեդիտների միջոցով չափման, հաշվառման և փոխանցման համակարգ է, որը ներառում է դասավանդումը, գործնական և անհատական պարապմունքները, խորհրդատվությունները, ռեֆերատների, այլ աշխատանքների պատրաստումը, քննությունների նախապատրաստումը, գնահատումը և այլն: Գործում է կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգը, որն ապահովում է սկադեմիական կրեդիտների համեմատելիությունը և փոխանցելիությունը, դյուրացնում է ուսանողների շարժունակությունը ընդհանուր եվրոպական բարձրագույն կրթական տարածքում:

Ուսանողական նպաստը պետական բյուջեի ֆինանսավորման, բարձրագույն ուսումնական հաստատության, հիմնադրամների և այլ կազմակերպությունների, ինչպես նաև ֆիզիկական անձանց հատկացումների հաշվին ուսանողի ուսման վարձի փոխհատուցումն

է: Կարևոր է, որ սահմանվում է նաև նպատակային ուսուցումը որպես բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրերով պետության համար առաջնային և կարևորություն ներկայացնող բնագավառները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածաշրջանները, այդ թվում՝ սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերը, համապատասխան որակավորմամբ մասնագետներով ապահովելու նպատակով իրականացվող ուսուցում:

### 3.2 ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

#### ԱՌԱՆՑՔԱՅԻՆ

#### ԴՐՈՒՅԹ

Պետությունը ուսանողներին տրամադրում է կրթաթոշակներ, ուսման վարձի զեղչեր, կրթական դրամաշնորհներ, ապահովում է գիտության և կրթության ինտեգրումը



Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքներն են՝

- մարդու և քաղաքացու՝ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն ստանալու իրավունքի ապահովումը և պաշտպանությունը,
- բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մատչելիությունը,
- կրթական գործընթացի անընդհատությունը, հաջորդայնությունը և շարունակականությունը,
- մրցութայնությունը, թափանցիկությունը և հրապարակայնությունը,
- եվրոպական և օտարերկրյա այլ պետություններում Հայաստանի Հանրապետության բարձրագույն և հետբուհական կրթության որակավորման աստիճանների համեմատելիությունը և դիպլոմների, դրանց ներդիրների ճանաչելիությունն ապահովելը,
- ուսանողների միջազգային շարժունությունը նպաստելը,
- բարձրագույն ուսումնական հաստատությունների ակադեմիական ազատությունները և ինքնավարությունը խթանելն ու զարգացնելը,
- հայկական սփյուռքի համար, ինչպես նաև հայագիտության զարգացման նպատակով մասնագետների պատրաստումը և որակավորման բարձրացումը:

Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում պետական քաղաքականության խնդիրներն են՝

- բարձրագույն և հետբուհական կրթության որակի ապահովումը,
- պետության համար առաջնային և կարևորություն ներկայացնող բնագավառներում, ինչպես նաև սահմանամերձ կամ

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ

### ԴՐՈՒՅԹ

Նպատակային  
ուսուցմամբ  
ուսանողների  
համար  
պետությունը  
երաշխավորում է  
անվճար  
բարձրագույն և  
հետբուհական  
կրթություն  
ստանալու  
իրավունք



բարձրլեռնային բնակավայրերում մասնագետների պատրաստմանն աջակցելը,

- միջազգային գիտակրթական համագործակցության զարգացմանը և դրա ինտեգրմանը նպաստելը,

- բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության համակարգի զարգացումը և մրցունակության բարձրացումը միջազգային ասպարեզում,

- բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության համակարգում ուսուցման որակի ներքին ու արտաքին գնահատման և հավատարմագրման միջազգային (եվրոպական) չափանիշների ներդրումը,

- հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունների իրավահավասարության ապահովումը՝ անկախ սեփականության ձևից:

Ընդ որում պետությունը պետք է ապահովի բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության զարգացումը բարձրագույն և հետբուհական կրթության համակարգի կատարելագործմամբ, կրթության զարգացման պետական ծրագրերի մշակմամբ և իրականացմամբ, կրթական ծրագրերի՝ աշխատանքային շուկայի պահանջներին համապատասխանեցմամբ, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին և դրանցում սովորողներին ֆինանսական աջակցության ապահովմամբ: Պետությունը նաև բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության համակարգի ուսանողներին և ասպիրանտներին պետական ֆինանսական օժանդակություն՝ կրթաթոշակներ, ուսման վարձի փոխհատուցում (լրիվ և մասնակի զեղչ), կրթական դրամաշնորհներ, վարկեր է տրամադրում, ապահովում է գիտության և կրթության ինտեգրումը, գիտահետազոտական ստորաբաժանումների կազմակերպումը:

Կարևոր է, որ պետությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին երաշխավորում է պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում մրցութային հիմունքներով բարձրագույն և հետբուհական մասնագիտական անվճար կրթություն ստանալու իրավունք: Ըստ մասնագիտությունների հավատարմագրված կրթական ծրագրեր ունեցող ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում ևս մրցութային հիմունքներով կարող է իրականացվել բարձրագույն և հետբուհական մասնագիտական անվճար կրթություն՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ:

Նպատակային ուսուցմամբ ուսանող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար պետությունը երաշխավորում է պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում մրցութային կարգով անվճար բարձրագույն և հետբուհական կրթություն ստանալու իրավունք: Այս դեպքում մրցութային ընդունելությունն իրականացվում է ընդհանուրից առանձնացված մրցույթով: Նպատակային ուսուցմամբ ընդունված ուսանողի հետ կնքված պայմանագրում պարտադիր ամրագրվում է նաև այն պայմանը, որ ուսանողն ավարտելուց հետո առնվազն 3 տարի ժամկետով գործուղվում է աշխատելու ուղեգրող կազմակերպության նախատեսած վայրերում: Այս պայմանը չկատարելու դեպքում շրջանավարտը պարտավոր է փոխհատուցել ուսումնառության տարիների համար պետական բյուջեից տրամադրված ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցման չափի և պետական կրթաթոշակի չափի հանրագումարի կրկնապատիկը:

### 3.3 ԲՈՒՀԵՐԻ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ, ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

#### ԱՌԱՆՑՔԱՅԻՆ

#### ԴՐՈՒՅԹ

Բուհի իրավասությունն է՝ ըստ կրթական ծրագրերի դիմորդների ընդունելության և ուսումնական գործընթացի կազմակերպումը



Բարձրագույն ուսումնական հաստատությունը՝

- իրականացնում է իր ինքնավարությունը ինքնակառավարման և կոլեգիալության սկզբունքներով,

- ինքնուրույն է ուսումնական գործընթացի կազմակերպման, կրթական տեխնոլոգիաների և սովորողների ընթացիկ ատեստավորման ձևերի, կարգի և պարբերականության ընտրության հարցերում,

- ինքնուրույն է որոշում բոլոր տարակարգերի աշխատողների հաստիքացուցակը, իրականացնում է աշխատողների ընտրությունը և բաշխումը, ներառյալ՝ գիտամանկավարժական կազմի համալրումը, պրոֆեսորադասախոսական կազմի, գիտական և ուսումնական ստորաբաժանումների ղեկավարների պաշտոնների զբաղեցման կարգերը,

- իրավունք ունի օրենքով և իր կանոնադրությամբ չարգելված այլ գործունեության:

Բարձրագույն ուսումնական հաստատության իրավասությունն է՝

- ըստ կրթական ծրագրերի՝ դիմորդների, ներառյալ՝ օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց ընդունելության, ուսումնական գործընթացի կազմակերպումը,

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ

### ԴՐՈՒՅԹ

Յուրաքանչյուր բուհ ինքնուրույն է որոշում իր ֆինանսական միջոցների օգտագործման ուղղությունները, ներառյալ՝ իր աշխատողների վարձատրության և նյութական խրախուսման կարգը և չափերը



- բարձրագույն ուսումնական հաստատության ղեկավար անձնակազմի և պրոֆեսորադասախոսական կազմի ընտրության ընթացակարգերի մշակումը և ընտրությունների անցկացումը,
  - բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասնագիտությունների և մասնագիտացումների ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի մշակումն ու հաստատումը, ուսումնական գրականության և ուսումնամեթոդական ձեռնարկների հրատարակումը,
  - ըստ ուսումնական հաստատության կառուցվածքային ստորաբաժանումների՝ աշխատողների տեղաբաշխումը,
  - մասնագետների որակավորման բարձրացման, վերապատրաստման դասընթացների կազմակերպումը,
  - տեղական և միջազգային գիտակրթական և հետազոտական ծրագրերին մասնակցությունը և իրականացումը, գիտական հետազոտությունների կատարումը,
  - հետազոտական աշխատանքներում սովորողների մասնակցության ապահովումը,
  - վճարովի կրթական ծառայությունների (վճարովի ուսուցում և այլն) իրականացումը,
  - ֆինանսների կառավարում, ներառյալ՝ աշխատավարձի, կրթաթոշակի վճարում, ուսման վարձի փոխհատուցում, ուսանողական նպաստների տրամադրում, բարձրագույն ուսումնական հաստատության պահպանմանը և զարգացմանը, գիտահետազոտական գործունեությանը նպատակաուղղված ծախսերի կատարումը,
  - հետբուհական կրթության իրականացումը՝ համապատասխան պահանջների ապահովման պարագայում:
- Յուրաքանչյուր բուհ ինքնուրույն է որոշում իր ֆինանսական միջոցների օգտագործման ուղղությունները, ներառյալ՝ իր աշխատողների վարձատրության և նյութական խրախուսման կարգը և չափերը, սահմանում է կրթաթոշակներ: Ընդ որում օրենքով արգելվում է բուհերի վճարովի համակարգում սովորող, ուսումնառող՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և Վրաստանի Սամցխե-Ջավախք ու Քվեմո-Քարթլի նահանգներում գրանցված և բնակվող հայազգի, Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված և ապաստան ստացած ծագումով հայ քաղաքացիների, ինչպես նաև ծագումով հայ այն օտարերկրյա քաղաքացիների նկատմամբ, որոնց մշտական բնակության օտարերկրյա պետությունում ստեղծվել է քաղաքացիների կյանքին կամ առողջությանը սպառնացող արտակարգ իրավիճակ, կիրառել ուսման վարձավճարի ավելի

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ

### ԴՐՈՒՅԹ

Բուիը վճարովի համակարգում սովորող ուսանողների առնվազն 10 տոկոսին՝ վարձավճարներից գոյացած բյուջեի առնվազն 7 տոկոսի չափով, իրականացնում է ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում



բարձր չափ, քան սահմանված է տվյալ ուսումնական հաստատության համանման պայմաններում սովորող ՀՀ քաղաքացիների նկատմամբ:

Կառավարության հաստատած տեղերի քանակին համապատասխան՝ ուսման վճարի լրիվ կամ մասնակի փոխհատուցում՝ զեղչ, նպաստի ձևով տրվում է մրցույթի արդյունքներով բուհ ընդունված, ուսումնական տարվա արդյունքներով բարձր առաջադիմություն ունեցող սովորողներին, օրենքներով նախատեսված սոցիալական խմբերին, ինչպես նաև ըստ առաջադիմության, ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող ուսանողներին, սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների ուսանողներին, մարտական գործողություններին մասնակցած ուսանողներին, սահմանված կարգով առկա ուսուցմամբ բակալավրի կամ ինտեգրացված կրթական ծրագրով ընդունված երկու և ավելի անչափահաս երեխա ունեցող ուսանողներին, պետության համար առաջնահերթություն և կարևորություն ներկայացնող մասնագիտություններով նպատակային ուսուցմամբ ընդունված ուսանողներին: Ուսանողներին պետական կրթաթոշակ է տրվում գերազանց և լավ առաջադիմության, հասարակական ակտիվության, պատշաճ վարքագիծ դրսևորելու համար, ինչպես նաև նպատակային ուսուցմամբ ուսանողներին, այդ թվում՝ սահմանամերձ կամ բարձրլեռնային բնակավայրերի ուսանողներին:

Բուիը վճարովի համակարգում սովորող ուսանողական համակազմի առնվազն տասը տոկոսին՝ ուսանողների վարձավճարներից գոյացած բյուջեի առնվազն յոթ տոկոսի չափով, իր միջոցների հաշվին՝ հիմք ընդունելով բարձր առաջադիմությունը և սոցիալական խումբը, իրականացնում է ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում հետևյալ կարգավիճակ ունեցող ուսանողներին.

- սոցիալապես անապահով (ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների) ուսանողներին՝ առնվազն 30 տոկոս,
- 18 տարին լրանալուց հետո առանց ծնողական խնամքի մնացած ուսանողներին մինչև 23 տարին լրանալը՝ առնվազն 50 տոկոս,
- 23 տարին չլրացած միակողմանի ծնողազուրկ ուսանողներին՝ առնվազն 50 տոկոս,
- մինչև մեկ տարեկան երեխա ունեցող ուսանողներին՝ առնվազն 50 տոկոս,

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ

### ԴՐՈՒՅԹ

Բուհերն ինքնուրույն են ձևավորում իրենց կառուցվածքը, իսկ ստորաբաժանումները կարող են իրականացնել հանրակրթական, միջին մասնագիտական, ինչպես նաև լրացուցիչ կրթության ծրագրեր



- երեք և ավելի անչափահաս կամ երեք և ավելի ուսանող երեխա ունեցող ընտանիքների ուսանողներին՝ առնվազն 30 տոկոս,
- 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամ, այդ թվում՝ հաշմանդամ ազատամարտիկ ծնող ունեցող ուսանողներին՝ առնվազն 30 տոկոս,
- մարտական հերթապահություն իրականացնող զորամասերում մարտական հերթապահության մեջ ընդգրկված պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած ուսանողներին՝ առնվազն 30 տոկոս,
- սոցիալապես անապահով (ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված անապահովության 0 միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների) ուսանողներին՝ առնվազն 20 տոկոս,
- այլ կարգավիճակ ունեցող ուսանողներին, որը սահմանում է տվյալ բարձրագույն ուսումնական հաստատությունը:  
Ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում առնվազն 50 տոկոսի չափով տրամադրվում է ուսանողական նպաստների համակարգում չընդգրկված երկու կիսամյակ անընդմեջ առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին, որոնք ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցման համար անցկացված փոխատեղման մրցույթի արդյունքում զրկվել են նպաստի իրավունքից մինչև 0.1 միավոր տարբերությամբ:  
Մի քանի արտոնություններին հավակնելու դեպքում ուսանողը կարող է օգտվել դրանցից միայն մեկից, որի դեպքում կիրառվում է մասնակի փոխհատուցման առավելագույն չափը: Ընդ որում ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցումից ուսանողը կարող է օգտվել բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից բակալավրի և մագիստրոսի համար սահմանված միջին որակական գնահատականի (ՄՈԳ) շեմը հաղթահարելու դեպքում: Առաջին կուրսի ուսանողները ուսման վճարի մասնակի փոխհատուցման իրավունքից կարող են օգտվել միայն ուսումնառության երկրորդ կիսամյակից սկսած:  
Բուհերը տվյալ տարվա ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցման տրամադրման վերաբերյալ մինչև հաջորդ տարվա ապրիլի 1-ը կրթության պետական կառավարման լիազորված մարմին ներկայացնում են հաշվետվություն:  
Բուհերն ինքնուրույն են իրենց կառուցվածքի ձևավորման հարցում: Կառուցվածքային ստորաբաժանումները կարող են իրականացնել հանրակրթական, միջին մասնագիտական, ինչպես նաև լրացուցիչ

կրթության ծրագրեր: Բուիը օտարերկրյա պետությունների կրթական կառավարման համապատասխան մարմինների հետ կնքած պայմանագրերով, համաձայնագրերով իրականացնում է օտարերկրյա քաղաքացիների ընդունելություն, մասնագետների պատրաստում, վերապատրաստում և որակավորման բարձրացում՝ ուսուցման բոլոր ձևերով, ինչպես նաև մասնագետների փոխանակում, համատեղ գիտական աշխատանքներ, ծրագրեր, օտարերկրյա պետություններում կարող է ստեղծել մասնաճյուղեր, ստորաբաժանումներ և այլն: Բուին իր գործունեության համար պատասխանատու է անհատի, հասարակության և պետության առջև:

### 3.4 ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

#### ԱՌԱՆՑՔԱՅԻՆ

#### ԴՐՈՒՅԹ

Անկախ սեփականության ձևից և մասնագիտությունից՝ բուհերի բակալավրի կրթական ծրագրերում հայոց լեզու և հայ գրականություն, հայոց պատմություն առարկաների ուսուցումը ներառվում է առնվազն երկու կիսամյակի ընթացքում



Հայաստանի Հանրապետության բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության համակարգը ներառում է՝

- բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչները, հիմնական և լրացուցիչ կրթական ծրագրերը, պետական հավատարմագրման չափանիշները,

- լիցենզավորված բարձրագույն ուսումնական հաստատությունները և համապատասխան հետբուհական ու լրացուցիչ մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպությունները,

- բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության կառավարման մարմինները, ինչպես նաև դրանց ենթակայության տակ գտնվող կազմակերպությունները:

Սահմանվում են բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչներ, որոնք ապահովում են՝

- բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության որակը,

- եվրոպական և օտարերկրյա այլ պետությունների կրթական չափորոշիչների հետ համեմատելիության հնարավորությունները,

- բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների գործունեության գնահատման հիմքը,

- օտարերկրյա պետությունների բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության որակավորումների և փաստաթղթերի ճանաչումն ու համարժեքության հաստատումը:

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ

### ԴՐՈՒՅԹ

Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթությունն իրականացվում է բակալավրի (առնվազն 4 տարի), մագիստրոսի (առնվազն 1 տարի), դիպլոմավորված մասնագետի (առնվազն 5 տարի), հետոզոտոդի (առնվազն 3 տարի) հիմնական կրթական ծրագրերով



Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչները ներառում են՝

- ընդհանուր պահանջներ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագրերի վերաբերյալ,

- պահանջներ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի, դրանց իրականացման պայմանների, ներառյալ՝ ուսումնական, արտադրական և նախաավարտական պրակտիկաների և շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման ձևերի, յուրաքանչյուր մասնագիտությամբ շրջանավարտների պատրաստման մակարդակի վերաբերյալ,

- անկախ սեփականության ձևից և մասնագիտությունից՝ բարձրագույն մասնագիտական հիմնական կրթության բակալավրի կրթական ծրագրում հայոց լեզու և հայ գրականություն, հայոց պատմություն առարկաների ուսուցումը ներառվում է առնվազն երկու կիսամյակի ընթացքում, որոնք ավարտվում են գիտելիքների պարտադիր ստուգմամբ,

- բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագրերով ուսուցման կազմակերպման ժամկետները կամ անհրաժեշտ կրեդիտային միավորների քանակը, սովորողների ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը:

Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթությունն իրականացվում է հիմնական և լրացուցիչ հետևյալ կրթական ծրագրերով.

1) բարձրագույն մասնագիտական հիմնական կրթական ծրագրերով՝

- բակալավրի,
- մագիստրոսի,
- դիպլոմավորված մասնագետի,

2) հետբուհական մասնագիտական հիմնական կրթական ծրագրով՝

- հետազոտողի.
- կլինիկական օրդինատորի,

3) լրացուցիչ կրթական ծրագրերով՝

- վերապատրաստման,
- մասնագետների որակավորման բարձրացման:

Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության կրթական ծրագրերը մշակում և հաստատում են բարձրագույն ուսումնական հաստատությունը, հետբուհական մասնագիտական

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ

### ԴՐՈՒՅԹ

Այն անձինք, ովքեր ստացել են բարձրագույն մասնագիտական կրթության համապատասխան աստիճանի ավարտական փաստաթուղթ, իրավունք ունեն սահմանված կարգով շարունակելու ուսումնառությունը հաջորդ աստիճանի կրթական ծրագրով



կրթություն իրականացնող կազմակերպությունը՝ պետական կրթական չափորոշիչների հիման վրա:

Բարձրագույն ուսումնական հաստատության և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպության՝ ըստ մասնագիտությունների, մասնագիտացումների ուսումնական պլանները և դասընթացները երաշխավորում են տարբեր կրթական փուլերում սովորողների ուսումնառության գործընթացը՝ ապահովելով կրթական կրեդիտների կուտակումը, փոխանցումը և որակավորման աստիճանների շնորհումը:

Բարձրագույն մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագրերը կարող են իրականացվել անընդհատ կամ ընդհատումներով՝ ըստ աստիճանների: Օրենքով սահմանվում է բարձրագույն մասնագիտական կրթության երկաստիճան որակավորման համակարգ ամփոփիչ ատեստավորումն անցած անձին շնորհվում է բակալավրի որակավորում՝ առաջին աստիճանում և մագիստրոսի որակավորում՝ երկրորդ աստիճանում: Առայժմ պահպանվում է նաև դիպլոմավորված մասնագետի որակավորումը: Հետբուհական մասնագիտական կրթության համար սահմանված է հետազոտողի որակավորման աստիճանը:

Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագրերի ուսուցման տևողություններն են՝

- բակալավրի որակավորման աստիճան ստանալու համար՝ առնվազն 4 տարի, ուստիկանական կամ զինվորական մասնագիտությունների համար՝ առնվազն 3 տարի,
- դիպլոմավորված մասնագետի որակավորման աստիճան ստանալու համար՝ առնվազն 5 տարի, արվեստի և ֆիզիկական կուլտուրայի մասնագիտությունների համար՝ առնվազն 4 տարի.
- մագիստրոսի որակավորման աստիճան ստանալու համար՝ առնվազն 1 տարի,
- հետազոտողի որակավորման աստիճան ստանալու համար՝ առնվազն 3 տարի,
- բժշկական մասնագիտությունների համար կրթության տևողությունը սահմանված է առնվազն 5 տարի՝ անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով, որի արդյունքում շնորհված կրթական աստիճանը հավասարեցվում է մագիստրոսի կրթական աստիճանին, իսկ այս աստիճանն ունեցողների համար սահմանված է մեկ տարի տևողությամբ հետբուհական ուսուցում՝ ինտերնատուրա:

Այն անձինք, ովքեր ստացել են բարձրագույն մասնագիտական կրթության համապատասխան աստիճանի ավարտական փաստաթուղթ, իրավունք ունեն սահմանված կարգով շարունակելու

ուսումնառությունը հաջորդ աստիճանի կրթական ծրագրով: Ընդ որում, բարձրագույն կրթության տարբեր աստիճանների կրթական ծրագրերով առաջին անգամ կրթություն ստանալը չի դիտվում որպես երկրորդ բարձրագույն մասնագիտական կրթություն:

Բարձրագույն մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագրերը կարող են իրականացվել ուսուցման տարբեր ձևերով՝ առկա, հեռակա, հեռավար և դրսեկության: Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն ստանալու առկա և այլ ձևերի զուգակցումը չի արգելվում: Ի դեպ՝ կան Կառավարության կողմից սահմանված մասնագիտություններ, որոնցով բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալը չի թույլատրվում հեռակա, հեռավար կամ դրսեկության ձևերով:

Հետբուհական մասնագիտական կրթությունը ևս իրականացվում է առկա, հեռակա, հեռավար և դրսեկության ուսուցման ձևերով:

Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության կրթական ծրագրերով ուսումնառությունն ավարտած և ամփոփիչ ատեստավորումն անցած անձանց տրվում է տվյալ բարձրագույն ուսումնական հաստատության կամ հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպության ավարտական փաստաթուղթ՝ համապատասխան ներդիրով: Դրանք են՝ բակալավրի դիպլոմը, մագիստրոսի դիպլոմը, բարձրագույն կրթությամբ մասնագետի դիպլոմը, հետազոտողի դիպլոմը, օրդինատորի դիպլոմը: Նկատենք, որ, որոշ բացառություններով, Հայաստանի բուհերը հետազոտողի դիպլոմ չեն տրամադրում:

Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագիրը չավարտած անձանց տրվում է բարձրագույն ուսումնական հաստատության կամ հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպության սահմանած նմուշի ակադեմիական տեղեկանք: Լրացուցիչ մասնագիտական կրթության կրթական ծրագիրն ավարտած և ամփոփիչ ատեստավորումն անցած անձանց տրվում է բարձրագույն ուսումնական հաստատության կամ հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպության սահմանած նմուշի ավարտական փաստաթուղթ՝ հավաստագիր, վկայական:

### 3.5 ԲԱՐԾՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

#### ԱՌԱՆՑՔԱՅԻՆ

#### ԴՐՈՒՅԹ

Բարձրագույն և հետբուհական կրթական ծրագրերը կարող են իրականացվել միայն լիցենզիայի առկայության դեպքում



#### ՈՒՆՑՔԱՅԻՆ

#### ԴՐՈՒՅԹ

Պետական հավատարմագրման նպատակն է ուսուցման և առանձին մասնագիտությունների գծով շրջանավարտների պատրաստման որակի՝ պետական կրթական չափորոշիչներին համապատասխանության ճանաչումը



Բարձրագույն ուսումնական հաստատության հիմնական խնդիրներն են՝

- անձի մտավոր, հոգևոր և բարոյական զարգացման պահանջմունքների բավարարումը բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն ստանալու միջոցով,
  - գիտության, կրթության, տնտեսության և արվեստի զարգացումը գիտամանկավարժական աշխատողների և սովորողների գիտական հետազոտությունների ու ստեղծագործական գործունեության միջոցով, ստացված արդյունքների օգտագործումը տնտեսության մեջ, հետազոտական և կրթական գործընթացում,
  - բարձրագույն կրթությամբ գիտամանկավարժական աշխատողների պատրաստումը և վերապատրաստումը,
  - կրթության որակի ապահովումը և բարելավման համապատասխան համակարգի ներդրումը,
  - կրթական գործընթացի անընդհատության, թափանցիկության և հրապարակայնության ապահովումը,
  - սովորողի՝ ազգային, բարոյական և համամարդկային արժեքների ոգով դաստիարակումը,
  - բնակչության շրջանում գիտելիքների տարածումը, նրա կրթական և մշակութային մակարդակի բարձրացումը,
  - սովորողների մեջ քաղաքացիական դիրքորոշման, հմտությունների և աշխատանքի նկատմամբ պատասխանատվության արմատավորումը՝ ժողովրդավարական և քաղաքացիական հասարակության կառավարման պայմաններում:
- Հայաստանի Հանրապետության բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության համակարգում սահմանվում են բարձրագույն ուսումնական հաստատությունների հետևյալ տեսակները.

- 1) համալսարան,
- 2) ինստիտուտ,
- 3) ակադեմիա,
- 4) կոնսերվատորիա և այլն:

Բարձրագույն ուսումնական հաստատությունը ստեղծվում, վերակազմակերպվում և լուծարվում է օրենսդրությամբ սահմանված կարգով:

Բարձրագույն և հետբուհական կրթական ծրագրերը կարող են իրականացվել միայն լիցենզիայի առկայության դեպքում: Կրթական գործունեության լիցենզիան ուսումնական հաստատությանը տալիս

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ

### ԴՐՈՒՅԹ

Օտարերկրյա պետությունների մասնակցությամբ ստեղծված ուսումնական հաստատությունները և դրանց մասնաճյուղերն իրավահավասար են պետական բուհերի հետ



է լիազորված մարմինը՝ նախարարությունը: Ուսումնական հաստատության լիցենզավորման համար հիմք են մանկավարժական և պրոֆեսորադասախոսական հիմնական կազմի, լաբորատոր բազայի և ուսումնական տարածքի, ուսումնաարտադրական պրակտիկայի բազայի, գրադարանային-տեղեկատվական համակարգի առկայությունը և ուսումնամեթոդական ապահովումը: Անկախ մասնագիտական ուսումնական հաստատության գերատեսչական ենթակայությունից և կազմակերպարավական ձևից՝ իրականացվում է պետական հավատարմագրում: Բարձրագույն ուսումնական հաստատությունների, դրանց մասնագիտությունների, հետբուհական կրթական ծրագրերի պետական հավատարմագրումն իրականացվում է լիցենզիայի առկայության դեպքում: Բարձրագույն մասնագիտական կրթության գծով պետական հավատարմագրումն իրականացվում է ըստ ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների: Պետական հավատարմագրման նպատակն է ուսուցման և առանձին մասնագիտությունների գծով շրջանավարտների պատրաստման որակի՝ պետական կրթական չափորոշիչներին համապատասխանության ճանաչումը, ինչպես նաև նպաստելը ուսումնական հաստատության զարգացման ծրագրերի արդյունավետության բարձրացմանը: Պետական հավատարմագրման վկայականը հավաստում է ուսումնական հաստատության իրականացրած կրթական ծրագրերի մակարդակի, դրանց բովանդակության և շրջանավարտների որակի համապատասխանությունը պետական կրթական չափորոշիչների պահանջներին: Ուսումնական հաստատությունների, դրանց մասնագիտությունների հավատարմագրումն իրականացվում է առանձին փուլերով՝ ըստ կրթական ծրագրերի: Բարձրագույն և հետբուհական կրթության համակարգում պետական հավատարմագրման ենթակա են բակալավրի, մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրերը: Պետական հավատարմագրման վկայականը տրվում է բարձրագույն ուսումնական հաստատությանը ուսումնական հաստատության և դրա ուսանողների և երկու տարվա շրջանավարտների առնվազն 60 տոկոսի ատեստավորման վերաբերյալ դրական եզրակացության հիման վրա, ինչպես նաև այդ հաստատության մասնագիտությունների առնվազն 75 տոկոսի պետական հավատարմագրման առկայության դեպքում: Ուսումնական հաստատության մասնաճյուղերը հավատարմագրվում են ընդհանուր հիմունքներով՝ մասնաճյուղ ունեցող ուսումնական հաստատության հայտի հիման վրա, մայր բուհի

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ

### ԴՐՈՒՅԹ

Բուհի և ուսանողի միջև կնքված պայմանագրում ամրագրվում են սովորելու տարիների տևողությունը և նախատեսված ուսման վարձի ընդհանուր չափը՝ բաժանված ըստ ուսումնական տարիների



կազմում: Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա այլ պետությունների, բարձրագույն ուսումնական հաստատությունների, կազմակերպությունների մասնակցությամբ ստեղծված ուսումնական հաստատությունները և դրանց մասնաճյուղերն իրավահավասար են պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ և լիցենզավորվում, հավատարմագրվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով: Ընդ որում, բարձրագույն ուսումնական հաստատության տված ավարտական փաստաթղթում՝ դիպլոմում նշվում է ուսումնական հաստատության, դրա առանձին մասնագիտության հավատարմագրված լինելու փաստը:

Բարձրագույն ուսումնական հաստատությունը կարող է ստանալ նաև հասարակական հավատարմագրում, որը հասարակական հավատարմագրում իրականացնող կազմակերպությունների կողմից իրենց չափանիշներին և պահանջներին բարձրագույն ուսումնական հաստատության գործունեության մակարդակի համապատասխանության ճանաչումն է:

Պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում ընդունելությունը բակալավրի կրթական ծրագրում իրականացվում է առնվազն միջնակարգ կրթություն ունեցող անձանց դիմումներով:

Բարձրագույն ուսումնական հաստատությունն իրավունք ունի ընդունելություն հայտարարելու լիցենզիայի առկայության դեպքում: Բուհը պարտավոր է ծանոթացնել դիմորդին իր լիցենզիային, կանոնադրությանը և ներքին կանոնակարգերին, ինչպես նաև պետական հավատարմագրման վկայականին, որի վերաբերյալ տեղեկությունները գրանցվում են դիմորդի ընդունելության փաստաթղթերում: Բուհն ուսանողի հետ կնքում է պայմանագիր, որի տեքստը հրապարակվում է բարձրագույն ուսումնական հաստատության ընդունելության հայտարարության հետ և նախապես տրամադրվում է դիմորդներին: Բարձրագույն ուսումնական հաստատության և ուսանողի միջև կնքված պայմանագրում պարտադիր ամրագրվում են սովորելու տարիների տևողությունը և տվյալ բարձրագույն ուսումնական հաստատությունում բարձրագույն կրթության յուրաքանչյուր աստիճանի համար նախատեսված ուսման վարձի ընդհանուր չափը՝ բաժանված ըստ ուսումնական տարիների: Ուսանողի հետ կնքված պայմանագիրը, այդ թվում՝ այդ պայմանագրով նախատեսված ուսման վարձի ընդհանուր և դրա՝ ըստ տարիների բաժանված չափերը, ուսումնառության ամբողջ ընթացքում փոփոխման ենթակա չեն: Հեռացումից հետո վերականգնված ուսանողի ուսման

վարձը հաշվարկվում է տվյալ տարվա համար սահմանված վարձավճարի չափով, և նրա հետ կնքվում է նոր պայմանագիր: Մագիստրատուրայի մրցութային ընդունելությունն իրականացվում է բարձրագույն կրթության առաջին աստիճանի՝ բակալավրիատի գնահատականների հաշվառմամբ: Ընդունելությունը բարձրագույն ուսումնական հաստատություններ կատարվում է ըստ Կառավարության հաստատած մասնագիտությունների ցանկի՝ մատչելիության, հրապարակայնության, արդարության, վստահելիության, թափանցիկության, հավասարության սկզբունքների կիրառմամբ: Բարձրագույն կրթության երրորդ մակարդակի՝ ասպիրանտուրայի ընդունելությունն իրականացվում է մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի ծրագրով, դիմորդների մրցութային ընդունելության քննությունների արդյունքների հիման վրա: Ասպիրանտուրայի ընդունելության դիմումի հետ միասին բարձրագույն ուսումնական հաստատությունը դիմորդի հետ կնքում է պայմանագիր, որի տեքստը հրապարակվում է ընդունելության հայտարարության հետ և նախապես տրամադրվում դիմորդին: Դոկտորանտուրայի փաստաթղթերի ձևակերպումը կատարվում է գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի և դոկտորական թեզի համար գիտական թեմայի առկայության հիման վրա:

### 3.6 ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Բարձրագույն ուսումնական հաստատության կառավարումն իրականացվում է գործող օրենսդրությանը և բուհի կանոնադրությանը համապատասխան, ինքնակառավարման հիման վրա՝ միանձնյա ղեկավարման և կոլեգիալության սկզբունքների զուգակցմամբ, բարձրագույն ուսումնական հաստատության խորհրդի, գիտական խորհրդի և ռեկտորատի գործառույթների իրականացմամբ: Պետական բարձրագույն ուսումնական հաստատության խորհուրդը ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմինն է, որը ստեղծվում է 5 տարի ժամկետով: Խորհրդի նախագահի և անդամների իրավասությունները սահմանվում են տվյալ բուհի կանոնադրությամբ: Խորհուրդը ձևավորվում է բարձրագույն ուսումնական հաստատության պրոֆեսորադասախոսական

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ

### ԴՐՈՒՅԹ

Բուհի կառավարումն իրականացվում է ինքնակառավարման հիման վրա՝ միանձնյա ղեկավարման և կոլեգիալության սկզբունքների գույակցմամբ, բուհի խորհրդի, գիտխորհրդի և ռեկտորատի գործառույթների իրականացմամբ



կազմից, ուսանողության ներկայացուցիչներից, ինչպես նաև հիմնադրի, լիազորված մարմնի ներկայացուցիչներից: Խորհրդի թվաքանակը սահմանվում է տվյալ բուհի կանոնադրությամբ, առնվազն 20 հոգի: Խորհրդի գործունեության մեջ մտնում են հաստատության բյուջեի, ռազմավարական ծրագրերի հաստատումը, բարձրագույն ուսումնական հաստատության գործունեության տարեկան հաշվետվության լսումն ու գնահատումը, ռեկտորի ընտրությունը, ինչպես նաև բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրության, դրա մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու առաջարկության ներկայացումը հիմնադրին:

Բարձրագույն ուսումնական հաստատության գիտական խորհուրդը ձևավորվում է բուհի կանոնադրությանը համապատասխան և լուծում է բարձրագույն ուսումնական հաստատության ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության կազմակերպման, պլանավորման և կառավարման հիմնահարցերը: Գիտական խորհրդի կազմում ի պաշտոնե մտնում են ռեկտորը, որը գիտական խորհրդի նախագահն է, պրոռեկտորները և բարձրագույն ուսումնական հաստատության համապատասխան ստորաբաժանումների ղեկավարները, ինչպես նաև ընտրովի անդամներ: Գիտական խորհրդի լիազորությունները և գործունեության կարգը սահմանվում է տվյալ բուհի կանոնադրությամբ:

Բարձրագույն ուսումնական հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է ուսումնական հաստատության գործադիր մարմինը՝ ռեկտորը: Պետական բարձրագույն ուսումնական հաստատության ռեկտորն ընտրվում է բաց մրցույթով՝ ուսումնական հաստատության խորհրդում, գաղտնի քվեարկությամբ, 5 տարի ժամկետով: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել ռեկտորի պաշտոնում: Ռեկտորի ընտրության արդյունքները հաստատում է հիմնադիրը:

Բարձրագույն ուսումնական հաստատության ռեկտորատը ռեկտորին կից խորհրդակցական մարմին է, որի ձևավորման կարգը և լիազորությունները սահմանվում են բուհի կանոնադրությանը համապատասխան:

Պետական բարձրագույն ուսումնական հաստատության մասնաճյուղի տնօրենը ընտրվում է ուսումնական հաստատության խորհրդի նիստում փակ գաղտնի քվեարկությամբ, 5 տարի ժամկետով, բաց մրցույթով: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել մասնաճյուղի տնօրենի պաշտոնում:

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ

### ԴՐՈՒՅԹ

Պետական բուհի ռեկտորն ընտրվում է բաց մրցույթով՝ ուսումնական հաստատության խորհրդում, գաղտնի քվեարկությամբ, 5 տարի ժամկետով: Նույն անձը չի կարող ավելի քան 2 անգամ անընդմեջ ընտրվել այդ պաշտոնում



Բարձրագույն ուսումնական հաստատության պրոռեկտորները նշանակվում են ռեկտորի հրամանով, և նրանց հետ կնքվում է աշխատանքային պայմանագիր:

Ֆակուլտետի դեկանի, ամբիոնի վարիչի պաշտոնները ընտրովի են: Դեկանի (ուսումնական ստորաբաժանման ղեկավարի) գործունեությունը համարվում է վարչական և գիտամանկավարժական աշխատանք, ամբիոնի վարիչի գործունեությունը՝ գիտամանկավարժական:

Նոր ստեղծվող կամ վերակազմակերպված բարձրագույն ուսումնական հաստատությունում մինչև խորհրդի ձևավորումը բարձրագույն ուսումնական հաստատության հիմնադիրը նշանակում է ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար մեկ տարուց ոչ ավելի ժամկետով:

Բարձրագույն ուսումնական հաստատությունները մշակում և հաստատում են հնգամյա կրթական ռազմավարական ծրագրեր: Ռազմավարական ծրագրով սահմանվում են բարձրագույն ուսումնական հաստատության հիմնական նպատակները, դրանց հասնելու միջոցառումների ցանկը: Ռազմավարական ծրագիրը հաստատում է խորհուրդը: Ռազմավարական ծրագիրը լիազորված մարմնի կողմից բարձրագույն ուսումնական հաստատությունների գործունեության արդյունավետությունը գնահատելու հիմնական ծրագրային փաստաթուղթն է:

Հասարակական-քաղաքական, հասարակական, կրոնական կազմակերպությունները և միավորումները բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության համակարգում չեն կարող գործունեություն ծավալել: Բացառություն են կազմում արհեստակցական, մասնագիտական, մշակութային, մարզական և շրջանավարտների կազմակերպություններն ու միությունները:

### 3.7 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ

Բարձրագույն կրթության համակարգում ուսումնական գործունեության սուբյեկտները սովորողները և աշխատողներն են: Բարձրագույն ուսումնական հաստատության ուսանողները, ասպիրանտները կարող են իրենց հայեցողությամբ, ըստ հակումների և պահանջումների, ընտրել մասնագիտություն, բարձրագույն ուսումնական հաստատության տեսակը և ուսուցման ձևը, տեղափոխվել բարձրագույն ուսումնական այլ հաստատություն, այդ թվում՝ օտարերկրյա պետությունների, զբաղվել

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ

### ԴՐՈՒՅԹ

Բարձրագույն կրթության համակարգում ուսումնական գործունեության սուբյեկտները սովորողները և աշխատողներն են



## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ

### ԴՐՈՒՅԹ

Կրթությունը ընդհատած նախկին սովորողն իրավունք ունի վերականգնելու իր ուսանողական իրավունքները, բացառությամբ 1-ին կուրսի 1-ին կիսամյակում կրթության ընդհատման



հետազոտություններով, ցանկացած կրթական աստիճանում ընդհատել կամ շարունակել բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթությունը, բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությանը համապատասխան՝ լիիրավ մասնակցել բարձրագույն ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմինների աշխատանքներին:

Բարձրագույն ուսումնական հաստատության սովորողն իրավունք ունի՝

- ընտրելու տվյալ մասնագիտության կամ մասնագիտացման ուսուցման համար պարտադիր և տվյալ մասնագիտության կամ մասնագիտացման ուսուցման համար ոչ պարտադիր դասընթացներ, որոնք տրամադրում են համապատասխան ֆակուլտետը և ամբիոնը,

- մասնակցելու իր կրթության բովանդակության ձևավորմանը, ուսումնական դասընթացների և մասնագիտացման ընտրությանը՝ պահպանելով բարձրագույն մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների պահանջները,

- բացի ընտրած մասնագիտության ուսումնական դասընթացներից, յուրացնելու ուսումնական ցանկացած այլ դասընթաց, որը դասավանդվում է տվյալ կամ ցանկացած այլ բարձրագույն ուսումնական հաստատությունում,

- մասնակցելու բարձրագույն ուսումնական հաստատությունների համապատասխան կառավարման մարմինների աշխատանքներին,

- անվճար օգտվելու բարձրագույն ուսումնական հաստատությունների գրադարաններից, լաբորատորիաներից, տեղեկատվական պահոցներից, ուսումնական, գիտական, բուժական և այլ ստորաբաժանումների ծառայություններից, մասնակցելու գիտահետազոտական աշխատանքներին, գիտաժողովներին, սեմինարներին և այլն,

- բողոքարկելու բարձրագույն ուսումնական հաստատության ղեկավարության հրամաններն ու կարգադրությունները,

- օգտվելու ուսման տարեկան վարձի մասամբ կամ լրիվ փոխհատուցման իրավունքից,

- գործող օրենսդրությամբ և բուհի կանոնադրությամբ սահմանված կարգով ստանալու սահմանված չափի, ներառյալ՝ անվանական, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից նշանակված կրթաթոշակ, դրամաշնորհ, ինչպես նաև ուսանողական վարկ,

- ծանոթանալու բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությանը և նորմատիվ այլ փաստաթղթերի, կնքելու պայմանագիր բարձրագույն ուսումնական հաստատության հետ՝ ուսումնառության պայմանների վերաբերյալ,

- անհրաժեշտության դեպքում ստանալու ակադեմիական արձակուրդ մինչև մեկ տարի ժամկետով,
- ուսուցման առկա ձևով սովորելու դեպքում տվյալ ուսումնական տարվա ընթացքում ոչ պակաս, քան երկու անգամ, գտնվելու արձակուրդում՝ ոչ պակաս, քան յոթ շաբաթ ընդհանուր տևողությամբ,
- հանրակացարանի առկայության և բնակելի տարածքի կարիք ունենալու դեպքերում բարձրագույն ուսումնական հաստատության սահմանած կարգով ստանալու հանրակացարանում համապատասխան տեղ,
- փոխադրվելու մեկ այլ բարձրագույն ուսումնական հաստատություն, ներառյալ՝ օտարերկրյա պետությունների բարձրագույն ուսումնական հաստատություն,
- ուսման բարձր առաջադիմության և գիտահետազոտական աշխատանքներին մասնակցելու համար ստանալու բարոյական և նյութական խրախուսանք:

Կրթությունը ընդհատած նախկին սովորողը, անկախ ընդհատման պատճառից, իրավունք ունի վերականգնելու իր ուսանողական իրավունքները, բացառությամբ առաջին կուրսի առաջին կիսամյակում կրթության ընդհատման:

Բարձրագույն ուսումնական հաստատության սովորողը պարտավոր է կատարել բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությամբ և ներքին կարգապահության կանոններով սահմանված պարտականությունները: Բուհի կանոնադրությամբ և ներքին կարգապահության կանոններով նախատեսված պարտականությունների խախտման դեպքում սովորողի նկատմամբ կարող են կիրառվել կարգապահական տույժեր՝ ընդհուպ բարձրագույն ուսումնական հաստատությունից հեռացնելը: Արգելվում է սովորողներին հեռացնել հիվանդության, արձակուրդների, ակադեմիական արձակուրդի կամ հղիության և ծննդաբերության արձակուրդի ընթացքում:

Բարձրագույն ուսումնական հաստատությունում սովորողները կարող են միավորվել ուսանողական խորհուրդներում, ուսանողական գիտական ընկերություններում և ուսանողական այլ կազմակերպություններում: Ուսանողական խորհուրդների և ուսանողական գիտական ընկերությունների գործունեությունը ֆինանսավորվում է բարձրագույն ուսումնական հաստատության արտաբյուջետային միջոցների հաշվին, իսկ ֆինանսավորման չափը սահմանում է բուհի կառավարման խորհուրդը:

Օրենքով նախատեսված է, որ ասպիրանտուրայում պետական պատվերի շրջանակներում ուսումնառած և ավարտած

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ

### ԴՐՈՒՅԹ

Բուհի սովորողները կարող են միավորվել ուսանողական խորհուրդներում, ուսանողական գիտական ընկերություններում և ուսանողական այլ կազմակերպություններում: ՈւԽ և ՈԻԳԸ գործունեությունը ֆինանսավորվում է բուհի արտաբյուջետային միջոցների հաշվին



## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ

### ԴՐՈՒՅԹ

Բուհում և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպությունում գիտամանկավարժական կազմի բոլոր թափուր պաշտոնների տեղակալումը իրականացվում է ըստ աշխատանքային պայմանագրի, որը կնքվում է մինչև 5 տարի ժամկետով



մասնագետները պարտավոր են առնվազն երեք տարի աշխատել բարձրագույն և հետբուհական կրթություն իրականացնող ուսումնական կամ գիտական կազմակերպություններում՝ ելնելով «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի<sup>2</sup> պահանջներից:

Ընտրված գիտական թեմաների, գիտական հետազոտությունների հետ կապված աշխատանքների կատարման համար ասպիրանտները, հայցորդները և դոկտորանտները բարձրագույն ուսումնական հաստատությունների և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպությունների գիտամանկավարժական և գիտական աշխատողների հետ հավասարապես օգտվում են լաբորատորիաներից, սարքավորումներից, ուսումնամեթոդական կաբինետներից, գրադարաններից, ինչպես նաև գործուղումների իրավունքից:

Բարձրագույն ուսումնական հաստատության պրոֆեսորադասախոսական և գիտական աշխատողներն իրավունք ունեն իրենց հայեցողությամբ ծրագրի շրջանակներում ուսումնական առարկան շարադրելու, գիտական հետազոտությունների թեմաներ ընտրելու և դրանք իրենց ընտրած մեթոդներով իրականացնելու: Բուհում և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպությունում սահմանվում են վարչական և գիտամանկավարժական, պրոֆեսորադասախոսական (դեկան, ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, դոցենտ, ավագ դասախոս, դասախոս, ասիստենտ) կազմ, գիտական աշխատողներ, ինժեներատեխնիկական, վարչատնտեսական, արտադրական, ուսումնաօժանդակ և այլ կազմի աշխատողներ:

Բարձրագույն ուսումնական հաստատությունում և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպությունում պրոֆեսորադասախոսական կազմի, գիտական աշխատողների բոլոր թափուր պաշտոններն զբաղեցվում են բարձրագույն ուսումնական հաստատության և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպության կանոնադրությանը և կանոնակարգերին համապատասխան: Բուհում և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպությունում գիտամանկավարժական կազմի բոլոր թափուր պաշտոնների տեղակալումը իրականացվում է ըստ աշխատանքային պայմանագրի, որը կնքվում է մինչև 5 տարի ժամկետով: Աշխատանքային պայմանագրի կնքմանը նախորդում է բաց մրցութային ընտրություն: Աշխատանքային պայմանագրի ժամկետը լրանալուց հետո գիտամանկավարժական աշխատողի հետ կարող է

<sup>2</sup> ՀՕ-250, Ընդունվել է 16/09/1998թ

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ

### ԴՐՈՒՅԹ

Բուհի աշխատողները պարտավոր են սովորողների մեջ ձևավորել մասնագիտական որակներ, պատշաճ վարք ու վարվելակերպ, քաղաքացիական դիրքորոշում, հայրենասիրություն



կնքվել նոր աշխատանքային պայմանագիր մինչև 5 տարի ժամկետով, առանց մրցութային ընտրության՝ պայմանագրային ժամկետում նրա գիտամանկավարժական գործունեության արդյունքների գնահատման հիման վրա: Նշված պաշտոնների տեղակալման կարգը հաստատում է բարձրագույն ուսումնական հաստատության, հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպության գիտական խորհուրդը:

Բուհի և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպության աշխատողն իրավունք ունի՝

- բարձրագույն ուսումնական հաստատության և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով ընտրելու և ընտրվելու բուհի կամ հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպության համապատասխան պաշտոններում և կառավարման համապատասխան մարմիններում,
  - մասնակցելու բուհի կամ հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպության գործունեությանը վերաբերող հարցերի քննարկմանը և լուծմանը,
  - օգտվելու գրադարանների, տեղեկատվական պահոցների, ուսումնական և գիտական ստորաբաժանումների, ինչպես նաև սոցիալ-կենցաղային, բուժական և բուհի կամ հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպության կառուցվածքային այլ ստորաբաժանումների ծառայություններից,
  - ընտրելու դասավանդման այնպիսի մեթոդներ և միջոցներ, որոնք ապահովում են ուսումնական գործընթացի բարձր որակ,
  - բողոքարկելու բարձրագույն ուսումնական հաստատության կամ հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպության համապատասխան ստորաբաժանման ղեկավարի հրամանները և կարգադրությունները,
  - ունենալու կազմակերպական և նյութատեխնիկական պայմաններ մասնագիտական գործունեության համար:
- Բուհի և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպության աշխատողները պարտավոր են՝
- ապահովել կրթական և գիտական գործընթացների արդյունավետությունը,
  - պահպանել բարձրագույն ուսումնական հաստատության և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպության կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով սահմանված պահանջները,

- սովորողների մեջ ձևավորել մասնագիտական որակներ, պատշաճ վարք ու վարվելակերպ, քաղաքացիական դիրքորոշում, հայրենասիրություն,
  - սովորողների մեջ զարգացնել ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակություններ,
  - ոչ պակաս, քան 5 տարին մեկ, սահմանված կարգով անցնել վերապատրաստում կամ որակավորման բարձրացում:
- Բուհի կամ հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպության վարչատնտեսական, ինժեներատեխնիկական, արտադրական, ուսումնաօժանդակ և այլ աշխատողների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են համապատասխան օրենսդրությամբ, սովյալ բուհի կամ կազմակերպության կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով:
- Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության, գիտական աստիճանների և գիտական կոչումների մասին օտարերկրյա պետությունների փաստաթղթերի ճանաչումն ու համարժեքության հաստատումը կատարվում է ՀՀ օրենքներով և այդ բնագավառում կնքված միջպետական, միջկառավարական պայմանագրերով ու համաձայնագրերով:

### 3.8 ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

#### ԱՌԱՆՑՔԱՅԻՆ

#### ԴՐՈՒՅԹ

Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասնագիտությունների, դրանց ուսուցման ձևերի և դրանց համապատասխան տրվող որակավորումների ցանկը հաստատում է Կառավարությունը



Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության իրավասությունն է՝

- պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ստեղծումը, վերակազմակերպումը և լուծարումը,
- բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների ձևավորման կարգի հաստատումը,
- բարձրագույն ուսումնական հաստատությունների և հետբուհական կրթություն իրականացնող կազմակերպությունների պետական հավատարմագրման կարգի հաստատումը,
- կրթական ծրագրերի լիցենզավորման կարգի հաստատումը,
- ըստ հիմնական կրթական ծրագրերի՝ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասնագիտությունների, դրանց ուսուցման ձևերի և դրանց համապատասխան տրվող որակավորումների ցանկի հաստատումը,

- հաստատում է դիպլոմավորված մասնագետի կրթական ծրագրով ուսուցում իրականացվող մասնագիտությունների ցանկը,
- բարձրագույն ուսումնական հաստատությունների դիմորդների ընդունելության կարգի և գիտելիքների գնահատման միասնական համակարգի հաստատումը,
- բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների շարժունության կարգի սահմանումը,
- ասպիրանտուրայի ընդունելության և ասպիրանտուրայում ուսուցման, դոկտորանտների և հայցորդների ձևակերպման կարգի հաստատումը,
- ասպիրանտուրայի դիմորդների հետ կնքվող պայմանագրի օրինակելի ձևի հաստատումը,
- բարձրագույն և հետբուհական կրթություն իրականացնող ուսումնական կամ գիտական կազմակերպություններում ասպիրանտուրան պետական պատվերի շրջանակներում ուսումնառած և ավարտած մասնագետների աշխատանքի տեղավորման կարգի սահմանումը,
- բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասնագիտությունների, դրանց ուսուցման ձևերի և դրանց համապատասխան տրվող որակավորումների ընդհանրական բնութագրերի և ցանկերի հաստատումը, փոփոխությունների և լրացումների կատարումը,
- հեռակա, հեռավար և դրսեկության ձևերով ուսուցում չթույլատրվող մասնագիտությունների ցանկերի հաստատումը,
- ֆինանսական միջոցների տրամադրման կարգի հաստատումը, ներառյալ՝ ուսման վարձը փոխհատուցելու՝ լրիվ կամ մասնակի գեղջ, կրթաթոշակ սահմանելու, ուսումնական վարկ ստանալու, կրթական հիմնադրամներին ֆինանսավորելու կարգերը,
- պետական ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունների գրանցումը, դրանցում լրացումների և փոփոխությունների կատարումը,
- ուսման վարձի առավելագույն չափի սահմանումը՝ ըստ կրթական աստիճանների և հավատարմագրման արդյունքների:  
Լիազորված մարմնի՝ նախարարության իրավասությունն է՝
- բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների և որակավորումների բնութագրերի հաստատումը՝ ըստ մասնագիտությունների և կրթական աստիճանների,
- բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության որակի վերահսկողության իրականացումը,

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ

### ԴՐՈՒՅԹ

Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչները և որակավորումների բնութագրերն ըստ մասնագիտությունների և կրթական աստիճանների հաստատում է Նախարարությունը



- համապատասխան մարմինների հետ աշխատաշուկայի վերլուծության կատարումը և բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունելության վերաբերյալ առաջարկների ներկայացումը Կառավարություն,
  - մասնագետների պատրաստման, աշխատողների և գիտամանկավարժական աշխատողների որակավորման բարձրացման և վերապատրաստման, պետական բյուջեից գիտության զարգացմանն ուղղված ֆինանսավորման ծավալների մասին առաջարկությունների ներկայացումը,
  - բարձրագույն ուսումնական հաստատություններում և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպություններում կրթության որակի ապահովման գործընթացի իրականացման կարգի հաստատումը,
  - երկրորդ մասնագիտություն ստանալու կարգի հաստատումը,
  - առկա, հեռակա ձևերով ուսուցման կարգերի հաստատումը,
  - բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների հեռացման, ազատման և վերականգնման կարգի հաստատումը,
  - բուհերում հեռակա ուսուցման ընդունելության և մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգերի հաստատումը,
  - միջին որակական գնահատականի հաշվարկման մեթոդաբանության հաստատումը և այլն:
- Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության որակի նկատմամբ պետական վերահսկողությունն ուղղված է բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում միասնական պետական քաղաքականության ապահովմանը, մասնագետների պատրաստման որակի բարձրացմանը, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության համակարգի ֆինանսավորման համար հատկացված պետական բյուջեի և այլ միջոցների արդյունավետ օգտագործմանը:
- Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության որակի նկատմամբ պետական վերահսկողությունն իրականացնում է լիազորված մարմինը՝ լիցենզավորման և հավատարմագրման, ինչպես նաև որակի ապահովման գործընթացների կազմակերպմամբ, ուսումնական հաստատության որակի գնահատում կամ հավատարմագրում իրականացնող կազմակերպությունների միջոցով:
- Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության որակի ապահովման նպատակով բարձրագույն ուսումնական հաստատությունը և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպությունը պարտավոր են հրապարակել

**ԱՌԱՆՑՔԱՅԻՆ**

**ԴՐՈՒՅԹ**

Բուհն ինքնուրույն է որոշում աշխատանքի վարձատրության ձևը և համակարգը, լրավճարների, հավելումների, պարգևատրումների և նյութական խրախուսման այլ միջոցների չափերը



որակի գնահատման և հավատարմագրման չափանիշները, ուսումնական հաստատության որակի գնահատում և հավատարմագրում իրականացնող կազմակերպության տված եզրակացությունները, ինչպես նաև որակի գնահատման ընթացիկ արդյունքները: Բարձրագույն և հետբուհական կրթության համակարգում որակի ապահովման գործընթացների սկզբունքներն են գնահատման օբյեկտիվությունը, անընդհատությունը, թափանցիկությունը և հրապարակայնությունը:

Կանոնադրությամբ նախատեսված գործունեության ապահովման նպատակով հիմնադիրը բուհին սեփականության կամ օգտագործման իրավունքով տրամադրում է շենքեր, շինություններ, տրանսպորտ, հողամասեր, սարքավորումներ, ինչպես նաև սպառողական, սոցիալական, մշակութային և այլ նշանակության անհրաժեշտ գույք: Պետական բուհերին հիմնադիրը գույքը տրամադրում է անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով: Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հավատարմագրված բուհերին կարող են անհատույց կամ հատուցելի կարգով օգտագործման հանձնել ուսումնական տարածքներ և հողամասեր:

Բուհն իր ունեցած և աշխատողների աշխատանքի վարձատրության համար նախատեսված միջոցների սահմաններում ինքնուրույն է որոշում աշխատանքի վարձատրության ձևը և համակարգը, լրավճարների, հավելումների, պարգևատրումների և նյութական խրախուսման այլ միջոցների չափերը, ինչպես նաև բոլոր տարակարգերի աշխատողների աշխատավարձի դրույքաչափերը՝ առանց աշխատավարձի առավելագույն դրույքաչափեր սահմանելու: Բուհի կրթական գործունեությունն ապահովելու նպատակով պետական բյուջեից հատկացվող և օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից ստացվող միջոցների հաշվին պետական, օտարերկրյա պետությունների մասնակցությամբ ստեղծված բուհերը ինքնուրույն ձևավորում են աշխատողների աշխատանքի վարձատրության ֆոնդ:

### **ԻՆՔՆԱՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՐՑԵՐ**

Ո՞ր օրենքով է կարգավորվում բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառը, ի՞նչ հիմնական հասկացություններ են սահմանվում այդ օրենքով (3.1):



Ինչպե՞ս է դրսևորվում պետական քաղաքականությունը բարձրագույն կրթության բնագավառում (3.2):

Ի՞նչ է բուհի ինքնավարությունը, իրավասությունը, ակադեմիական ազատությունը (3.3):

Ի՞նչ է իր մեջ ներառում բարձրագույն կրթության համակարգը (3.4):

Որո՞նք են բարձրագույն ուսումնական հաստատությունները (3.5):

Ինչպե՞ս են կառավարվում բուհերը (3.6):

Որո՞նք են ուսումնական գործունեության սուբյեկտները (3.7):

Ո՞ր մարմիններն են իրականացնում բարձրագույն մասնագիտական կրթության համակարգի կառավարվումը (3.8):

## ԲԱԺԻՆ 4. ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ

### **Քաժնի բովանդակությունը**

- Գիտական աստիճանաշնորհումը
- Ատենախոսության պաշտպանությունը
- Հետբուհական մասնագիտական կրթությունը կարգովորող ՀՀ օրենսդրությունը
- Մասնագիտական խորհուրդը

### **Նյութի ուսումնասիրությունից հետո ուսանողը կարող է.**

- նկարագրել գիտական աստիճանաշնորհման կարգը, գիտական աստիճաններին ներկայացվող պահանջները,
- ներկայացնել գիտական կադրերի պատրաստման հիմնական ձևերը,
- մեկնաբանել ասպիրանտուրայում ընդունելության կարգը և պահանջները, ուսուցման կարգը,
- բնութագրել մասնագիտական խորհուրդը, նկարագրել դրա աշխատանքի կարգը,
- բնորոշել ատենախոսության և սեղմագրի ներկայացման պահանջների շրջանակը,
- ներկայացնել հետբուհական մասնագիտական կրթության ոլորտում կատարվող փոփոխությունների հիմնական ուղղությունները և միտումները:



### 4.1 ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԱՇՆՈՐՀՄԱՆԸ ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՄԱԿԱՐԴԱԿԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

#### **ԱՌԱՆՑՔԱՅԻՆ**

#### **ԴՐՈՒՅԹ**

Օրենքի համաձայն գիտությունը գտնվում է պետության հովանավորության ներքո



«Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքը, որ ընդունվել է 2000թ. դեկտեմբերին, կարգավորում է գիտական և գիտատեխնիկական գործունեության սուբյեկտների, պետական մարմինների, ինչպես նաև գիտական արդյունքներն օգտագործողների հարաբերությունները, սահմանում է գիտության և գիտատեխնիկական գործունեության բնագավառում պետական քաղաքականության ձևավորման ու իրականացման սկզբունքները: Այն սահմանում է, որ գիտությունը տնտեսության զարգացման, երկրի անվտանգության ապահովման, կրթության, մշակույթի և հասարակական առաջընթացի բացառիկ կարևոր գործոն է:

Օրենքում օգտագործված հիմնական հասկացությունների թվում սահմանված է, որ գիտական և գիտատեխնիկական գործունեությունը ձեռք բերած գիտելիքների ընդլայնմանը և նոր գիտելիքների ստացմանն ու կիրառմանն ուղղված մտավոր ստեղծագործական

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԴՐՈՒՅԹ

Գիտական աս-  
տիճանների և  
կոչումների  
շնորհման կարգի ու  
չափանիշների  
հաստատումը  
կառավարության  
իրավասությունն է



գործունեություն է: Ընդ որում, հիմնարար գիտական հետազոտությունները բնության օրենքների, մարդու գործունեության, հասարակության կառուցվածքի և զարգացման հիմնական օրինաչափությունների մասին ունեցած գիտելիքների ընդլայնմանն ու նոր գիտելիքների ձեռքբերմանն ուղղված տեսական կամ փորձարարական գործունեություն են, իսկ կիրառական գիտական հետազոտությունները՝ հիմնականում գործնական նշանակություն ունեցող, որոշակի խնդիրների լուծմանը նպատակաուղղված հետազոտություններ: Գիտական և գիտատեխնիկական պետական քաղաքականությունը պետության քաղաքականության բաղկացուցիչ մասն է, որն արտահայտում է պետության վերաբերմունքը գիտական ու գիտատեխնիկական գործունեության նկատմամբ, որոշում այդ բնագավառում պետական մարմինների գործունեության հիմնական նպատակները, սկզբունքները, ուղղությունները և եղանակները: Գիտական արդյունքը նոր գիտելիքներ կամ լուծումներ բովանդակող ու տեղեկատվության ցանկացած կրիչի վրա գրանցված գիտական գործունեության արդյունքն է, որը կարող է ներդրվել հասարակական կյանքի տարբեր ոլորտներում: Գիտնականը սահմանվում է որպես գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող սուբյեկտ, որն զգալի ներդրում ունի գիտության մեջ, իսկ գիտական կազմակերպությունը, անկախ իր կազմակերպական-իրավական ձևից, հիմնականում իրականացնում է գիտական կամ գիտատեխնիկական գործունեություն, զբաղվում է գիտական կադրերի պատրաստմամբ:

Օրենքի հիմնական նպատակը գիտական և գիտատեխնիկական գործունեության հետ կապված հարաբերությունների կարգավորումն է: Ընդ որում, գիտական և գիտատեխնիկական գործունեությունն իրականացնում են ֆիզիկական և իրավաբանական անձինք (ներառյալ՝ օտարերկրյա)՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Դրանք են գիտնականները, գիտական աշխատողները, գիտամանկավարժական բնագավառի աշխատողները, գիտական (ներառյալ՝ հասարակական) կազմակերպությունները, բարձրագույն ուսումնական հաստատությունները:

Գիտական կազմակերպության գիտական խորհուրդն այդ կազմակերպության գիտական և գիտատեխնիկական գործունեությունը համակարգող և կարգավորող կոլեգիալ մարմին է:

Օրենքը սահմանում է նաև գիտական և գիտատեխնիկական պետական քաղաքականության ձևավորման ու իրականացման բնագավառում կառավարության իրավասությունները, այդ թվում՝ գիտական և գիտատեխնիկական միասնական քաղաքականության

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԴՐՈՒՅԹ

Գիտական կադրերի պատրաստման հիմնական ձևերն են՝ ասպիրանտուրան, օրդինատուրան, դոկտորանտուրան և հայցորդների համակարգը



իրականացումը, գիտության և տեխնիկայի զարգացման գերակայությունների որոշումը, գիտական կադրերի պատրաստման պետական պատվերի հաստատումը, գիտական աստիճանների և կոչումների շնորհման կարգի ու չափանիշների հաստատումը, գիտական կադրերի որակավորման կարգի և գնահատման չափանիշների հաստատումը:

Հարկ է ընդգծել, որ գիտության պետական կառավարման խնդիրների թվում օրենքը սահմանում է գիտական աստիճանների և կոչումների շնորհման կարգի և չափանիշների մշակումը և գիտական կադրերի որակավորման կարգի և գնահատման չափանիշների մշակումը:

Գիտական կադրերի պատրաստման հիմնական ձևերն են՝ ասպիրանտուրան, օրդինատուրան, դոկտորանտուրան և հայցորդների համակարգը: Ասպիրանտուրայում, օրդինատուրայում և դոկտորանտուրայում ուսուցման կարգը և սահմանում է կառավարությունը: Գիտական որակավորման իրավական հիմքերը և չափանիշները սահմանում է կառավարությունը, իսկ դրանց իրականացումն ապահովում է որակավորման պետական համակարգը:

Օրենքով ամրագրված է, որ Հայաստանի Հանրապետությունում գործում է գիտական աստիճանաշնորհման երկաստիճան համակարգը՝ գիտության դոկտորի և գիտության թեկնածուի գիտական աստիճաններով, սահմանված են նաև պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ: Պրոֆեսորի գիտական կոչումը, որպես կանոն, շնորհվում է գիտության դոկտորի գիտական աստիճան ունեցող անձանց, ովքեր իրենց գործունեության վերջին հինգ տարիներին զբաղվել են գիտամանկավարժական և գիտամեթոդական գործունեությամբ կամ առնվազն պաշտպանած գիտական հինգ թեզերի ղեկավար են: Դոցենտի գիտական կոչումը, որպես կանոն, շնորհվում է գիտության թեկնածուի գիտական աստիճան ունեցող անձանց, ովքեր իրենց գործունեության վերջին երեք տարիների ընթացքում բուհական համակարգում իրականացրել են գիտամանկավարժական գործունեություն:

Գիտական աստիճանները շնորհում են գիտական կազմակերպություններին առընթեր մասնագիտական խորհուրդները, մինչդեռ դրանք հաստատում և համապատասխան դիպլոմներով ամրագրում է Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն՝ կառավարության սահմանած կարգով:

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԴՐՈՒՅԹ

ՀՀ-ում գործում է գիտական աստիճանաշնորհման երկաստիճան համակարգը՝ գիտության դոկտորի և գիտության թեկնածուի գիտական աստիճաններով



Գիտական կոչումները շնորհվում են բուհերի և գիտական կազմակերպությունների գիտական խորհուրդների որոշմամբ: Գիտական կոչումները հաստատում և համապատասխան դիպլոմներով ամրագրում է Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն: Գիտական աստիճանների ու գիտական կոչումների դիպլոմների նմուշները հաստատում է կառավարությունը:

Օրենքով ամրագրված է նաև, որ գիտական աստիճանի և (կամ) գիտական կոչման առկայությունը հաշվի է առնվում գիտական աշխատողի կողմից տվյալ գիտական պաշտոնին հավակնելու դեպքում:

ՀՀ-ում երրորդ աստիճանի բարձրագույն կրթության ոլորտը կարգավորող մյուս գործող օրենքը «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքն է, որը մանրամասն ներկայացված է նախորդ բաժնում: Այն կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում իրավական, կազմակերպական և ֆինանսական հարաբերությունները: Այստեղ բարձրագույն կրթության միջազգայնորեն ընդունված երրորդ մակարդակը՝ դոկտորանտուրան (մեզանում՝ ասպիրանտուրա) դիտարկվում է որպես «հետբուհական» կրթություն: Այսպես. սահմանվում է, որ բարձրագույն մասնագիտական կրթությունն առնվազն միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության հենքի վրա բակալավրի, դիպլոմավորված մասնագետի, մագիստրոսի ծրագրերով իրականացվող մասնագիտական կրթությունն է, իսկ հետբուհական մասնագիտական կրթությունը՝ բարձրագույն մասնագիտական կրթության (մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի) հենքի վրա ասպիրանտի, հետազոտողի, հայցորդի ծրագրով իրականացվող մասնագիտական կրթությունն է: Սա, ինչ խոսք, թյուրիմացություն կարող է առաջացնել հատկապես Բոլոնիայի գործընթացի լույսի ներքո, որտեղ դոկտորանտուրան միանշանակորեն բարձրագույն կրթության ամենաբարձր՝ երրորդ մակարդակն է:

Ասպիրանտը բարձրագույն մասնագիտական (մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի) կրթություն ունեցող, հետբուհական կրթական ծրագրով ուսումնառությունն ասպիրանտուրայում շարունակող և գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման նպատակով ատենախոսություն պատրաստող անձն է, որը հետբուհական մասնագիտական կրթական ծրագրով ատեստավորման արդյունքում կարող է ստանալ հետազոտողի

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԴՐՈՒՅԹ

Գիտական աս-  
տիճանները  
շնորհում են  
մասնագիտական  
խորհուրդները



որակավորման աստիճան: Օրենքը գործում է շուրջ քսան տարի, սակայն վերջին դրույթը, ըստ էության, դեռևս չի գործում. հետազոտողի որակավորում կա՛մ չի տրվում բուհերի կողմից, կա՛մ այն չի ընդունվում գործատուի կողմից:

Օրենքում ամրագրված է նաև հայցորդի հասկացությունը՝ ինչպես բարձրագույն մասնագիտական կրթություն (մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում) ունեցող և առանց ասպիրանտուրայում սովորելու՝ գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման նպատակով ատենախոսություն պատրաստող անձ կամ գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող և գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման նպատակով ատենախոսություն պատրաստող անձ, որը սահմանված կարգով կցված է հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպությանը:

Օրենքով է սահմանված նաև կրեդիտային (չափանիշային) համակարգը որպես ուսումնական գործընթացի կազմակերպման, ուսումնառության արդյունքների ակադեմիական կրեդիտների միջոցով չափման, հաշվառման և փոխանցման համակարգ, որը ներառում է դասավանդումը, գործնական և անհատական պարապմունքները, խորհրդատվությունները, ռեֆերատների, այլ աշխատանքների պատրաստումը, քննությունների նախապատրաստումը, գնահատումը և այլն: Ընդ որում Կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգ (ԿԿՓԵՀ)՝ համաեվրոպական կրեդիտային համակարգը ապահովում է ակադեմիական կրեդիտների համեմատելիությունը և փոխանցելիությունը, դյուրացնում է ուսանողների, այդ թվում՝ բարձրագույն կրթության երրորդ մակարդակի շարժունակությունը ընդհանուր Բարձրագույն կրթության եվրոպական տարածքում:

Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության կրթական ծրագրերը մշակում և հաստատում են բարձրագույն ուսումնական հաստատությունը, հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպությունը՝ պետական կրթական չափորոշիչների հիման վրա: Սահմանվում է հետբուհական մասնագիտական կրթության՝ հետազոտողի որակավորման աստիճան, որի ուսուցման տևողությունն առնվազն 3 տարի է: Հետբուհական մասնագիտական կրթությունն իրականացվում է առկա, հեռակա, հեռավար (դիստանցիոն) և դրսեկության (էքստեռնատի) ուսուցման ձևերով, որի կարգը սահմանում է Կառավարությունը: Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության կրթական ծրագրերով ուսումնառությունն ավարտած և

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԴՐՈՒՅԹ

Հետբուհական մասնագիտական կրթությունը բարձրագույն մասնագիտական կրթության հենքի վրա ասպիրանտի, հետազոտողի, հայցորդի ծրագրով իրականացվող մասնագիտական կրթությունն է



ամփոփիչ ատեստավորումն անցած անձանց տրվում է տվյալ բարձրագույն ուսումնական հաստատության կամ հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպության ավարտական փաստաթուղթ՝ հետազոտողի դիպլոմ, համապատասխան ներդիրով:

Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագիրը չավարտած անձանց տրվում է բարձրագույն ուսումնական հաստատության կամ հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպության սահմանած նմուշի ակադեմիական տեղեկանք:

Բարձրագույն և հետբուհական կրթության համակարգում պետական հավատարմագրման ենթակա են մասնագիտական կրթական բոլոր ծրագրերը: Պետական հավատարմագրման նպատակն է ուսուցման և առանձին մասնագիտությունների գծով շրջանավարտների պատրաստման որակի՝ պետական կրթական չափորոշիչներին համապատասխանության ճանաչումը, ինչպես նաև նպաստելը ուսումնական հաստատության զարգացման ծրագրերի արդյունավետության բարձրացմանը:

Ասպիրանտուրայի ընդունելությունն իրականացվում է մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի ծրագրով, դիմորդների մրցութային ընդունելության քննությունների արդյունքների հիման վրա, որի կարգը և մասնագիտությունների ցանկը սահմանում է Կառավարությունը: Ասպիրանտուրայի ընդունելության դիմումի հետ միասին բարձրագույն ուսումնական հաստատությունը դիմորդի հետ կնքում է պայմանագիր, որի տեքստը հրապարակվում է ընդունելության հայտարարության հետ և նախապես տրամադրվում դիմորդին: Օրինակելի պայմանագրի ձևը հաստատում է Կառավարությունը:

Օրենքով ամրագրված է, որ ուսանողները և ասպիրանտները կարող են իրենց հայեցողությամբ, ըստ հակումների և պահանջմունքների, ընտրել մասնագիտություն, բարձրագույն ուսումնական հաստատության տեսակը և ուսուցման ձևը, տեղափոխվել բարձրագույն ուսումնական այլ հաստատություն (ներառյալ՝ օտարերկրյա պետությունների), զբաղվել հետազոտություններով, ցանկացած կրթական աստիճանում ընդհատել կամ շարունակել բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթությունը, բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությանը համապատասխան՝ լիիրավ մասնակցել բարձրագույն ուսումնական հաստատության կողեգիալ կառավարման մարմինների

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԴՐՈՒՅԹ

Կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգը ապահովում է ակադեմիական կրեդիտների համեմատելիությունը և փոխանցելիությունը, դյուրացնում է ուսանողների շարժունակությունը



աշխատանքներին: Յուրաքանչյուր սովորող իրավունք ունի ընտրելու տվյալ մասնագիտության կամ մասնագիտացման ուսուցման համար պարտադիր և տվյալ մասնագիտության կամ մասնագիտացման ուսուցման համար ոչ պարտադիր դասընթացներ, որոնք տրամադրում են համապատասխան ֆակուլտետը (ուսումնական ստորաբաժանումը) և ամբիոնը, մասնակցելու իր կրթության բովանդակության ձևավորմանը (ուսումնական դասընթացների և մասնագիտացման ընտրությանը)՝ պահպանելով բարձրագույն մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների պահանջները, բացի ընտրած մասնագիտության ուսումնական դասընթացներից, յուրացնելու ուսումնական ցանկացած այլ դասընթաց, որը դասավանդվում է տվյալ կամ ցանկացած այլ բարձրագույն ուսումնական հաստատությունում՝ այդ բուհի կանոնադրությամբ սահմանված կարգով, մասնակցելու բարձրագույն ուսումնական հաստատությունների համապատասխան կառավարման մարմինների աշխատանքներին, անվճար օգտվելու բարձրագույն ուսումնական հաստատությունների գրադարաններից, լաբորատորիաներից, տեղեկատվական պահոցներից, ուսումնական, գիտական, բուժական և այլ ստորաբաժանումների ծառայություններից, մասնակցելու գիտահետազոտական աշխատանքներին, գիտաժողովներին, սեմինարներին և սիմպոզիումներին: Սովորողն իրավունք ունի նաև բողոքարկելու բարձրագույն ուսումնական հաստատության ղեկավարության հրամաններն ու կարգադրությունները, օգտվելու ուսման տարեկան վարձի մասամբ կամ լրիվ փոխհատուցման իրավունքից, ստանալու սահմանված չափի, ներառյալ՝ անվանական, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից նշանակված կրթաթոշակ, դրամաշնորհ, ինչպես նաև ուսանողական վարկ, ծանոթանալու բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությանը և նորմատիվ այլ փաստաթղթերի, կնքելու պայմանագիր բարձրագույն ուսումնական հաստատության հետ՝ ուսումնառության պայմանների վերաբերյալ, անհրաժեշտության դեպքում ստանալու ակադեմիական արձակուրդ մինչև մեկ տարի ժամկետով, ուսուցման առկա ձևով սովորելու դեպքում տվյալ ուսումնական տարվա ընթացքում ոչ պակաս, քան երկու անգամ, գտնվելու արձակուրդում՝ ոչ պակաս, քան յոթ շաբաթ ընդհանուր տևողությամբ, հանրակացարանի առկայության և բնակելի տարածքի կարիք ունենալու դեպքում բարձրագույն ուսումնական հաստատության սահմանած կարգով ստանալու հանրակացարանում համապատասխան տեղ, փոխադրվելու մեկ այլ

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԴՐՈՒՅԹ

«-ում սահմանված է հետբուհական մասնագիտական կրթության՝ հետազոտողի որակավորման աստիճան, որի ուսուցման տևողությունն առնվազն 3 տարի է



բարձրագույն ուսումնական հաստատություն, ուսման բարձր առաջադիմության և գիտահետազոտական աշխատանքներին մասնակցելու համար ստանալու խրախուսանք:

Ասպիրանտուրայում պետական պատվերի շրջանակներում ուսումնառած և ավարտած մասնագետները պարտավոր են առնվազն երեք տարի աշխատել բարձրագույն և հետբուհական կրթություն իրականացնող ուսումնական կամ գիտական կազմակերպություններում: Ընտրված գիտական թեմաների, գիտական հետազոտությունների հետ կապված աշխատանքների կատարման համար ասպիրանտները, հայցորդները և դոկտորանտները բարձրագույն ուսումնական հաստատությունների և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպությունների գիտամանկավարժական և գիտական աշխատողների հետ հավասարապես օգտվում են լաբորատորիաներից, սարքավորումներից, ուսումնամեթոդական կաբինետներից, գրադարաններից, ինչպես նաև գործուղումների իրավունքից:

Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում Կառավարության իրավասությունների շրջանակներում են բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների ձևավորման կարգի հաստատումը, բարձրագույն ուսումնական հաստատությունների և հետբուհական կրթություն իրականացնող կազմակերպությունների պետական հավատարմագրման կարգի հաստատումը, կրթական ծրագրերի լիցենզավորման կարգի հաստատումը, ըստ հիմնական կրթական ծրագրերի՝ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասնագիտությունների, դրանց ուսուցման ձևերի և դրանց համապատասխան տրվող որակավորումների ցանկի հաստատումը, ասպիրանտուրայի ընդունելության և ասպիրանտուրայում ուսուցման, դոկտորանտների և հայցորդների ձևակերպման կարգի հաստատումը, ասպիրանտուրայի դիմորդների հետ կնքվող պայմանագրի օրինակելի ձևի հաստատումը, բարձրագույն և հետբուհական կրթություն իրականացնող ուսումնական կամ գիտական կազմակերպություններում ասպիրանտուրան պետական պատվերի շրջանակներում ուսումնառած և ավարտած մասնագետների աշխատանքի տեղավորման կարգի սահմանումը, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասնագիտությունների, դրանց ուսուցման ձևերի և դրանց համապատասխան տրվող որակավորումների ընդհանրական բնութագրերի և ցանկերի հաստատումը, ֆինանսական միջոցների տրամադրման կարգի հաստատումը, ներառյալ՝ ուսման վարձը

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԴՐՈՒՅԹ

Ասպիրանտուրայում պետական պատվերի շրջանակներում ուսումնառած և ավարտած մասնագետները պարտավոր են առնվազն երեք տարի աշխատել բարձրագույն և հետբուհական կրթություն իրականացնող ուսումնական կամ գիտական կազմակերպություններում



փոխհատուցելու, կրթաթոշակ սահմանելու, ուսումնական վարկ ստանալու, կրթական հիմնադրամներին ֆինանսավորելու կարգերը:

Այս ոլորտում լիազորված մարմնի՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, իրավասությունների շրջանակում են բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների և որակավորումների բնութագրերի մշակումն ու հաստատումը՝ ըստ մասնագիտությունների և կրթական աստիճանների, ասպիրանտուրայի ընդունելության և ասպիրանտուրայում ուսուցման, դոկտորանտուրայի և հայցորդության ձևակերպման կարգերի մշակումը, մասնագետների պատրաստման, աշխատողների և գիտամանկավարժական աշխատողների որակավորման բարձրացման և վերապատրաստման, պետական բյուջեից գիտության զարգացմանն ուղղված ֆինանսավորման ծավալների մասին առաջարկությունների ներկայացումը, բարձրագույն ուսումնական հաստատություններում և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպություններում կրթության որակի ապահովման գործընթացի իրականացման կարգի հաստատումը:

Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության որակի նկատմամբ պետական վերահսկողությունն իրականացնում է Նախարարությունը՝ լիցենզավորման և հավատարմագրման, ինչպես նաև որակի ապահովման գործընթացների կազմակերպմամբ ուսումնական հաստատության որակի գնահատում և հավատարմագրում իրականացնող կազմակերպությունների միջոցով: Բարձրագույն և հետբուհական կրթության համակարգում որակի ապահովման գործընթացների սկզբունքներն են գնահատման օբյեկտիվությունը, անընդհատությունը, թափանցիկությունը և հրապարակայնությունը:

## 4.2 ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅՈՒՄ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ

«Հայաստանի Հանրապետությունում ասպիրանտուրայի ընդունելության և ուսուցման, դոկտորանտուրայի և հայցորդության ձևակերպման» կարգը հաստատվել է 2016թ. փետրվարին՝ ՀՀ կառավարության հ. 238-Ն որոշմամբ:

**ԱՌԱՆՑՔԱՅԻՆ  
ԴՐՈՒՅԹ**

Մրցութային կարգով ասպիրանտուրա են ընդունվում մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճան ունեցողները



**ԱՌԱՆՑՔԱՅԻՆ  
ԴՐՈՒՅԹ**

Ասպիրանտուրայի ընդունելության կազմակերպման համար ստեղծվում է ընդունող հանձնաժողով՝ հաստատության ղեկավարի կամ տեղակալի նախագահությամբ



Համաձայն այդ կարգի՝ յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբից առնվազն 6 ամիս առաջ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, հաստատություններից ստացած հայտերի հիման վրա, Կառավարության հաստատմանն է ներկայացնում համապատասխան ուսումնական տարվա ասպիրանտուրա ու դոկտորանտուրա ընդունելության տեղերը և առկա ուսուցմամբ ասպիրանտուրա ու դոկտորանտուրա ընդունելության տեղերի բաշխումը:

**ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱ**

Մրցութային կարգով ասպիրանտուրա են ընդունվում մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճան, իսկ բժշկական մասնագիտություններով՝ բժշկի որակավորում, կլինիկական ուղղվածությամբ բժշկական մասնագիտությունների դեպքում՝ բժիշկ-մասնագետի որակավորում ունեցողները:

Ասպիրանտուրա ընդունվելու համար անձի կամ նրա կողմից դիմումը տրվում է հաստատության ղեկավարի անունով՝ կցելով հետևյալ փաստաթղթերը՝

-բակալավրի և մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կամ օրդինատորի դիպլոմի ու դրանց հավելվածների պատճենները (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին),

-օտար լեզվի ատեստավորման վկայականը կամ դրան համապատասխան տեղեկանքը (սահմանված ներքին շեմով՝ բալային գնահատմամբ),

-ընտրված մասնագիտությամբ հրատարակված առնվազն մեկ գիտական աշխատանքի պատճենը կամ գիտական ռեֆերատ՝ առնվազն 20 տպագրական էջի սահմաններում,

-ինքնակենսագրություն և երեք լուսանկար, ինչպես նաև առկայության դեպքում քաղվածք աշխատանքային գրքույկից:

Ասպիրանտուրայի ընդունելությունը՝ առկա ուսուցմամբ և պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) իրականացվում է տվյալ տարվա ժամանակահատվածի զորակոչը կազմակերպելու մասին Կառավարության որոշմամբ նախատեսված ժամկետներում:

Ասպիրանտուրայի ընդունելության կազմակերպման համար հաստատության ղեկավարի հրամանով ստեղծվում է ընդունող

հանձնաժողով՝ հաստատության ղեկավարի կամ տեղակալի նախագահությամբ: Ասպիրանտուրայի ընդունելության մասնագիտական քննության անցկացման համար հաստատության ղեկավարի հրամանով ստեղծվում են մասնագիտական քննական հանձնաժողովներ, որոնց կազմում ընդգրկվում են տվյալ մասնագիտական բնագավառի գիտական աստիճան կամ գիտական կոչում ունեցող 3-5 մասնագետ: Հաստատության հայտարարությունների համար նախատեսված վայրում քննությունն սկսելուց յոթ աշխատանքային օր առաջ փակցվում կամ պաշտոնական կայքէջում տեղադրվում է մասնագիտական քննության անցկացման օրվա, տեղի և ժամի վերաբերյալ տեղեկատվությունը: Մասնագիտական քննությունից առնվազն մեկ ամիս առաջ հրապարակվում է նաև հարցաշարը:

Դիմորդին մասնագիտական քննությանը մասնակցելու թույլտվությունը տալիս է հաստատության ընդունող հանձնաժողովը՝ օտար լեզվից ստացած համապատասխան միավորը հավաստող վկայականի և (կամ) տեղեկանքի առկայության դեպքում, ինչպես նաև ընդունելության մասնագիտությանը համապատասխան գիտական ռեֆերատի մասին մասնագիտական ամբիոնի (սեկտորի, դեպարտամենտի) կամ գիտական ստորաբաժանման գրավոր դրական գրախոսականի կամ գրախոսվող գիտական ամսագրերում հրատարակված գիտական աշխատանքների մասին հաստատված ցուցակի դեպքում:

Օտար լեզուներից ստացած անհրաժեշտ նվազագույն միավորներն են՝

- անգլերենից՝ TOEFL (iBT)՝ 46 և IELTS՝ 5.5 միավորը,
- ֆրանսերենից՝ TCF՝ 200 միավորը,
- գերմաներենից՝ on DaF՝ 60 միավորը:

Այն դիմորդները, որոնց համար մասնագիտական առարկաներ են անգլերենը, ֆրանսերենը կամ գերմաներենը, քննություն են հանձնում այլ օտար լեզվից:

Մասնագիտական քննության հարցաշարը կազմվում է հաստատության մասնագիտական ամբիոնների (դեպարտամենտների), գիտական ստորաբաժանման կամ հանձնաժողովի կողմից և հաստատվում է հաստատության ղեկավարի կողմից:

**ԱՌԱՆՑՔԱՅԻՆ  
ԴՐՈՒՅԹ**

Մասնագիտական քննության հարցաշարը կազմվում է հաստատության մասնագիտական ամբիոնների կամ հանձնաժողովի կողմից և հաստատվում է հաստատության ղեկավարի կողմից



Մասնագիտական քննությունից երկու աշխատանքային օր առաջ՝ հրապարակված հարցաշարից կազմվում են հարցատոմսեր (առաջադրանքներ), որոնք հաստատվում են հանձնաժողովի նախագահի ստորագրությամբ և հաստատության կնիքով: Հարցատոմսերը յուրաքանչյուր տարի վերանայվում են: Ելնելով մասնագիտության առանձնահատկությունից՝ մասնագիտական քննության անցկացման ձևը (գրավոր կամ բանավոր) սահմանում է ընդունող հանձնաժողովը: Բանավոր քննությունը ձայնագրվում է, և արդյունքները պահպանվում են հրապարակվելուց հետո առնվազն 24 ժամ: Մասնագիտական քննության արդյունքները գնահատվում են 20 (քսան) միավորանոց սանդղակով: Քննությունը համարվում է հանձնված, եթե դիմորդն ստացել է առնվազն տասներեք միավոր: Գիտելիքների գնահատման մասին որոշումն ընդունվում է հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի կողմից նշանակված գնահատականների միջին թվաբանականը: Դիմորդը քննության է ներկայանում անձը հաստատող փաստաթղթով:

Ընդ որում, դիմորդը կարող է մասնագիտական քննության գնահատականը բողոքարկել հանձնաժողովին՝ արդյունքները հրապարակվելուց հետո մեկ ժամվա ընթացքում, հանձնաժողովի նախագահին ներկայացնելով գրավոր բողոքը, որը քննարկվում է նույն օրը: Բողոքարկմանը մասնակցում են հաստատության վարչական անձնակազմի (դեկան կամ ուսումնամեթոդական ստորաբաժանման ներկայացուցիչ)՝ տվյալ հանձնաժողովի անդամ չհանդիսացող աշխատողը և հաստատության ուսանողական կամ երիտասարդ գիտնականների խորհրդի ներկայացուցիչը, որոնց թեկնածությունները նախապես հաստատվում են հաստատության ղեկավարի կողմից: Դիմորդի ներկայությամբ ուսումնասիրվում և քննարկվում է գրավոր աշխատանքը, իսկ բանավոր քննության դեպքում լսվում է ձայնագրությունը: Բողոքարկման արդյունքում բաց քվեարկությամբ, հանձնաժողովի անդամների և ներգրավված անձանց ձայների պարզ մեծամասնությամբ, կայացվում է որոշում՝ կամ գնահատականը թողնել անփոփոխ, կամ՝ գնահատականը բարձրացնել: Ընդունված որոշման վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որն ստորագրվում է հանձնաժողովի նախագահի, հաստատության վարչական անձնակազմի, ուսանողական կամ երիտասարդ գիտնականների խորհրդի ներկայացուցչի և դիմորդի կողմից: Նշված անձանցից որևէ մեկի՝ ընդունված որոշմանն անհամաձայնություն հայտնելու դեպքում գրավոր ներկայացվում է հատուկ կարծիք, որը կցվում է արձանագրությանը:

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԴՐՈՒՅԹ

Ելնելով մասնագիտության առանձնահատկությունից՝ մասնագիտական քննության անցկացման ձևը (գրավոր կամ բանավոր) սահմանում է ընդունող հանձնաժողովը



**ԱՌԱՆՑՔԱՅԻՆ  
ԴՐՈՒՅԹ**

Առկա ուսուցման ձևով և անվճար հիմունքներով ասպիրանտուրա ընդունվածներին տրվում է պետական կրթաթոշակ



**ԱՌԱՆՑՔԱՅԻՆ  
ԴՐՈՒՅԹ**

Ասպիրանտն ըստ աշխատանքային պլանի տարեկան մեկ անգամ ատեստավորվում է: Ատեստավորում չանցած ասպիրանտը հաստատության ղեկավարի հրամանով ազատվում է ասպիրանտուրայից



Մասնագիտական քննության վերահանձնում չի թույլատրվում: Ասպիրանտուրայի մասնագիտական քննության արդյունքն ուժի մեջ է տվյալ ուսումնական տարվա տվյալ հաստատության ընդունելության քննության ընթացքում միայն:

Ասպիրանտուրա ընդունվում է մասնագիտական քննությունից առավելագույն միավոր ստացած անձը: Մասնագիտական քննությունից ստացած հավասար գնահատականների դեպքում հաշվի են առնվում հետևյալ ցուցանիշները՝ ըստ հերթականության՝

- մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կամ օրդինատորի ընդհանուր միջին որակական գնահատականը,
- բակալավրի և մագիստրոսի ընդհանուր միջին որակական գնահատականի գումարը,
- հրատարակված գիտական աշխատանքների թիվը,
- միջազգային կամ հանրապետական ուսանողական առարկայական մրցույթներում կամ օլիմպիադաներում ստացած դիպլոմները կամ միջազգային գիտաժողովներին մասնակցությունը:

Ընդունող հանձնաժողովը մրցույթի արդյունքների հիման վրա ընդունում է որոշում յուրաքանչյուր դիմորդի վերաբերյալ: Ասպիրանտուրա ընդունվելու կամ մրցույթով չանցնելու վերաբերյալ որոշման մասին դիմորդներն իրազեկվում են մասնագիտական քննությունից հետո յոթ աշխատանքային օրվա ընթացքում: Ասպիրանտների հրամանագրումը կատարվում է հաստատության ղեկավարի հրամանով՝ ասպիրանտի հետ կնքելով համապատասխան պայմանագիր: Առկա ուսուցման ձևով և անվճար հիմունքներով ասպիրանտուրա ընդունվածներին տրվում է սահմանված չափի պետական կրթաթոշակ՝ ընդունման օրվանից:

Հայաստանում ասպիրանտուրայում ուսուցումն իրականացվում է առկա և հեռակա ձևերով, անվճար և վճարովի հիմունքներով: Առկա ձևով ուսուցման տևողությունը չի գերազանցում 3 տարին, իսկ հեռակա ձևով ուսուցման տևողությունը՝ 4 տարին: Ասպիրանտուրայում ուսուցման լրիվ բեռնվածությունը համարժեք է 180 կրեդիտային միավորի, որը բաղկացած է երկու փոխկապակցված մասերից՝ կրթական և հետազոտական: Ասպիրանտն ուսման ընթացքում պետք է ունենա հաստատության գիտական խորհրդի կողմից հաստատված աշխատանքային պլան, գիտական ղեկավար և առնվազն 36 ժամ գիտամանկավարժական կամ հետազոտական ծանրաբեռնվածություն, հանձնի ուսումնական ծրագրով նախատեսված քննությունները և ստուգարքները, կուտակի

համապատասխան կրեդիտներ, ավարտի ատենախոսությունը և համապատասխան հաստատությունում անցկացնի ատենախոսության նախնական քննարկում: Ընդ որում, ասպիրանտուրայում առկա ուսուցման ձևով ուսանելու ժամանակը համարվում է գիտամանկավարժական ստաժ: Եթե հաստատությունում հնարավոր չէ իրականացնել կրեդիտային համակարգով ներդրված դասընթացները, ապա այդ ուսուցումը պայմանագրային հիմունքներով կարող է իրականացվել այլ հաստատությունում՝ ուղարկող կազմակերպության միջոցների հաշվին:

### ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԴՐՈՒՅԹ

Դոկտորանտուրայում ձևակերպվում են այն անձինք, ովքեր ունեն գիտությունների թեկնածուի գիտական աստիճան և ներկայացնում են հիմնարար և (կամ) կիրառական հետազոտությունների ծրագիր



Հաստատության սահմանած կարգով ասպիրանտն ըստ աշխատանքային պլանի տարեկան մեկ անգամ ատեստավորվում է ամբիոնի, բաժնի (սեկտոր, լաբորատորիա) կողմից: Բուհի համապատասխան ամբիոնում, ֆակուլտետի խորհրդում, կազմակերպության գիտական ստորաբաժանումներում, գիտական (գիտատեխնիկական) խորհրդում պարբերաբար լսվում և քննարկվում են ասպիրանտների ու նրանց գիտական ղեկավարների հաշվետվությունները: Ատեստավորում չանցած ասպիրանտը հաստատության ղեկավարի հրամանով ազատվում է ասպիրանտուրայից: Գիտական հետազոտություններ կատարելիս ասպիրանտն օգտվում է հաստատության գիտական սարքավորումներից, լաբորատորիաներից, համակարգչային տեխնիկայից, գրադարաններից, գործուղումների իրավունքից, հանրակացարանից և այլն: Հաստատությունից հեռացված ասպիրանտը կարող է վերականգնվել ասպիրանտուրայում՝ վճարովի հիմունքով ուսումը շարունակելու համար: Ատենախոսությունը չպաշտպանած ասպիրանտին, իր ցանկությամբ, անվճար տրվում է հաստատության կողմից սահմանված ակադեմիական տեղեկանք՝ ասպիրանտի կամ նրա լիազորած անձի կողմից դիմումը հաստատության ղեկավարին ներկայացվելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Առկա ուսուցմամբ ասպիրանտին ուսման ընթացքում տարեկան տրվում է երկամսյա արձակուրդ՝ կրթաթոշակի պահպանմամբ: Հաստատության ղեկավարը կարող է արտաբյուջետային միջոցների հաշվին սահմանել հավելավճար: Ասպիրանտների գիտական ղեկավարների աշխատանքի վարձատրությունը կատարվում է հաստատության կողմից՝ մեկ ասպիրանտի համար տարեկան 50 ժամ հաշվարկով: Հաստատության ղեկավարը կարող է արտաբյուջետային միջոցների հաշվին ասպիրանտի գիտական ղեկավարի աշխատավարձին հավելավճար սահմանել:

## ԴՌԿՏՈՐԱՆՏՈՒՐԱ

### ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԴՐՈՒՅԹ

Հայցորդությունն իրականացվում է վճարովի և անվճար հիմունքներով, որի տևողությունը չի գերազանցում 5 տարին:



### ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԴՐՈՒՅԹ

Հայցորդի լրիվ բեռնվածությունը համարժեք է 180 կրեդիտային միավորի, որը բաղկացած է երկու փոխկապակցված մասերից՝ կրթական և հետազոտական:



Դոկտորանտուրայի տևողությունը չի գերազանցում 3 տարին: Դոկտորանտուրայում ձևակերպվում են այն անձինք, ովքեր ունեն գիտությունների թեկնածուի գիտական աստիճան և ներկայացնում են գիտական, տնտեսական կամ սոցիալ-մշակութային նշանակություն ունեցող հիմնարար և (կամ) կիրառական հետազոտությունների ծրագիր: Դոկտորանտուրայում ձևակերպվելու համար անձի կամ նրա լիազորած անձի կողմից դիմումը տրվում է համապատասխան հաստատության ղեկավարի անունով՝ կցելով գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի վկայագրի պատճենը (այլ երկրներում գիտական աստիճանի վկայագիր ստացածների համար՝ նաև բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից տրված համապատասխանեցման հավաստագիրը), դոկտորական ատենախոսության պլանը, ինքնակենսագրություն և 3 լուսանկար, հրատարակված գիտական աշխատությունների, գյուտերի և հայտնագործությունների, ինչպես նաև կատարված գիտահետազոտական աշխատանքների հաշվետվությունների ցանկը:

Համաձայն հաստատության սահմանած կարգի՝ հաստատության ղեկավարի հրամանով դոկտորանտը ձևակերպվում է դոկտորանտուրայում, և նրա հետ կնքվում է պայմանագիր: Սահմանված ժամկետում դոկտորանտը պետք է կատարի դոկտորական ատենախոսության պլանով նախատեսված աշխատանքները՝ ավարտի ատենախոսությունը և համապատասխան հաստատությունում անցկացնի ատենախոսության նախնական քննարկում: Դոկտորանտը կարող է ունենալ գիտական խորհրդատու, ով հաստատվում է գիտական խորհրդի և նշանակվում հաստատության ղեկավարի կողմից: Հաստատության գիտական խորհուրդը, դոկտորանտների ծրագրին համապատասխան, տարեկան մեկ անգամ լսում է դոկտորանտի հաշվետվությունը: Գիտական հետազոտություններ կատարելիս դոկտորանտն օգտվում է հաստատության գիտական սարքավորումներից, լաբորատորիաներից, համակարգչային տեխնիկայից, գրադարաններից, գործուղումների իրավունքից, հանրակացարանից և այլն: Դոկտորանտների գիտական խորհրդատուների աշխատանքի վարձատրությունը կատարվում է հաստատության կողմից սահմանված կարգով և չափով:

## ՀԱՅՑՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Հայցորդը մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճան, իսկ բժշկական մասնագիտություններով՝ բժշկի որակավորում, կլինիկական ուղղվածությամբ բժշկական

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԴՐՈՒՅԹ

Պարտադիր  
զինվորական  
ծառայության են  
զորակոչվում  
ատենախոսության  
պաշտպանության  
օրվանից 2 ամիս  
հետո



մասնագիտությունների դեպքում՝ բժիշկ-մասնագետի որակավորում ունեցող անձ է: Հաստատություններում հայցորդությունն իրականացվում է վճարովի և անվճար հիմունքներով, տվյալ հաստատության սահմանած կարգով, որի տևողությունը չի գերազանցում 5 տարին: Հայցորդ ձևակերպվելու համար անձի կողմից դիմումը տրվում է հաստատության ղեկավարի անունով՝ կցելով մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կամ օրդինատորի դիպլոմի և դրա հավելվածի պատճենները (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին), հրատարակված գիտական աշխատությունների ցուցակը կամ ընտրած մասնագիտությունից գիտական ռեֆերատ, ինքնակենսագրություն և երեք լուսանկար, ինչպես նաև քաղվածք աշխատանքային գրքույկից՝ եթե դիմողն աշխատում է:

Հաստատության սահմանած կարգի համաձայն հայցորդը ձևակերպվում է հաստատության ղեկավարի հրամանով, և նրա հետ կնքվում է պայմանագիր: Հայցորդի լրիվ բեռնվածությունը համարժեք է 180 կրեդիտային միավորի, որը բաղկացած է երկու փոխկապակցված մասերից՝ կրթական և հետազոտական: Հայցորդը պետք է հանձնի ուսումնական ծրագրով նախատեսված քննությունները և ստուգարքները, կուտակի համապատասխան կրեդիտներ, ավարտի ատենախոսությունը և համապատասխան հաստատությունում անցկացնի ատենախոսության նախնական քննարկում:

Հայցորդը տարեկան մեկ անգամ ատեստավորվում է հաստատության ամբիոնի, բաժնի (սեկտոր, լաբորատորիա) կողմից: Գիտական հետազոտություններ կատարելիս՝ հայցորդն օգտվում է հաստատության գիտական սարքավորումներից, լաբորատորիաներից, համակարգչային տեխնիկայից, գրադարաններից, գործողումների իրավունքից, հանրակացարանից և այլն:

Ատենախոսությունը չպաշտպանած հայցորդին, իր ցանկությամբ, անվճար տրվում է հաստատության կողմից սահմանված ձևի ակադեմիական տեղեկանք՝ հաստատության ղեկավարին հայցորդի կամ նրա լիազորած անձի կողմից դիմումը ներկայացվելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում: Հաստատության ղեկավարը կարող է սահմանված կարգով կատարել հայցորդի գիտական ղեկավարի վարձատրությունը տարեկան առնվազն 30 ժամ:

2002 թվականի դեկտեմբերի 26-ին ՀՀ կառավարության ընդունած N 2140-Ն որոշումը վերաբերում է ատենախոսությունը պաշտպանած, բայց պետական հաստատումը դեռ չստացած և ասպիրանտուրան ավարտած ու ատենախոսության պաշտպանության օրը պաշտոնապես նշանակված անձանց պարտադիր զինվորական

ծառայության զորակոչելու կարգին: Որոշմամբ հանձնարարվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին՝ ապահովել ասպիրանտուրայի ավարտական կուրսի զորակոչային տարիքի արական սեռի քաղաքացիների ատենախոսության պաշտպանության օրվա նշանակումը մինչև ասպիրանտուրան ավարտելը, իսկ ՀՀ ԿԳՄՍ նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից ատենախոսության հաստատումը՝ պաշտպանելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

Ատենախոսությունը պաշտպանած, բայց ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ-ի հաստատումը դեռ չստացած անձինք պարտադիր զինվորական ծառայության են զորակոչվում ատենախոսության պաշտպանության օրվանից 2 ամիս հետո: Ատենախոսության պաշտպանության օրը պաշտոնապես նշանակված անձինք պարտադիր զինվորական ծառայության են զորակոչվում հայտարարված զորակոչի ընթացքում:

### 4.3 ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԱՇՆՈՐՀՄԱՆ ԿԱՐԳԸ

Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման ընթացակարգը սահմանված է «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգով», որը հաստատվել է ՀՀ կառավարության 1997թ. օգոստոսի 8-ի N327 որոշմամբ: Հայաստանի Հանրապետության անունից գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհուրդների ստեղծումը և դրանց աշխատանքի կազմակերպումն իրականացնում է ՀՀ ԿԳՄՍ նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն:

#### ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԴՐՈՒՅԹ

ՀՀ անունից գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհուրդների ստեղծումը և դրանց աշխատանքի կազմակերպումն իրականացնում է ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ-ը



#### ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի հուլիսի 12-ի N 28-Լ որոշմամբ հաստատվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կանոնադրությունը:

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ենթակա մարմին է, որն ստեղծվում, վերակազմակերպվում է, և նրա գործունեությունը դադարեցվում է օրենքով: Կոմիտեն գործում է ՀՀ Սահմանադրության, օրենքների, իրավական այլ ակտերի և իր կանոնադրության հիման վրա:

Կոմիտեի անվանումն է՝

հայերեն՝ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե,

ռուսերեն՝ Комитет по высшему образованию и науке,

անգլերեն՝ Higher Education and Science Committee,

ֆրանսերեն՝ Comité de l'Enseignement Supérieur et de la Science:

Կոմիտեն ունի ՀՀ զինանշանի պատկերով ու իր հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, ինչպես նաև խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ: Կոմիտեի կառուցվածքում ընդգրկված են Կոմիտեի նախագահի, Նախագահի տեղակալների, գլխավոր քարտուղարի, Նախագահի օգնականի պաշտոնները և կառուցվածքային ստորաբաժանումները: Կոմիտեին կարող է վերապահվել պետական բաժնետոմսերի կամ բաժնեմասերի տիրապետման իրավասություն:

Կոմիտեի նպատակներն են՝

-ապահովել մասնակցությունը բարձրագույն կրթության և գիտության ոլորտների ռազմավարական պլանավորմանն ու քաղաքականության մշակմանը,

-ապահովել բարձրագույն կրթության և գիտության ոլորտների ծրագրերի իրականացումը և գնահատումը, ինչպես նաև ուսանողներին աջակցության ցուցաբերումը,

-բարձրագույն կրթության և գիտության ոլորտների գործունեության կարգավորումը և որակի ապահովման ու կատարելագործման արդյունավետ իրավական հենքի ստեղծումը,

-բարձրագույն կրթության և գիտության ոլորտների բնականոն գործունեության ու առաջանցիկ զարգացման ապահովումը՝ որպես տնտեսության զարգացման, երկրի անվտանգության, մրցունակության ապահովման, կրթության, մշակույթի և հասարակական առաջընթացի բացառիկ կարևոր գործոն,

-մարդու և քաղաքացու՝ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն ստանալու իրավունքի ապահովումը,

-եվրոպական և օտարերկրյա այլ պետություններում Հայաստանի Հանրապետության բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության որակավորման աստիճանների համեմատելիությունը և դիպլոմների, դրանց ներդիրների ճանաչելիությունն ապահովելը,

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԴՐՈՒՅԹ

ԲԿԳԿ-ը

հաստատում և  
համապատասխան  
դիպլոմներով  
ամրագրում է  
գիտական  
աստիճանները



- ուսանողների միջազգային շարժունությանը նպաստելը,
- բարձրագույն ուսումնական հաստատությունների ակադեմիական ազատությունը և ինքնավարությունը խթանելն ու զարգացնելը,
- գիտական աստիճանաշնորհման համակարգի աշխատանքի կազմակերպումը,
- գիտական և գիտակրթական կադրերի որակավորման գործընթացին աջակցումը,
- Հայաստանի Հանրապետության գիտական ու գիտատեխնիկական ներուժի պահպանումը և զարգացումը, գիտական ու գիտատեխնիկական կադրերի պատրաստման արդյունավետ համակարգի ձևավորումը,
- գիտության, կրթության և արտադրության ոլորտների արդյունավետ փոխգործակցությանն ու ինտեգրմանը նպաստելը:

Կոմիտեի խնդիրներն են՝

- բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ոլորտում բարեփոխումների իրականացումը,
- բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ոլորտի զարգացման ապահովումը,
- բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բովանդակային հենքի ու կրթական գործընթացի բարելավմանը, արդիականացմանը և որակի ապահովմանը նպաստումը,
- միջազգային գիտակրթական համագործակցության զարգացմանը և դրա ինտեգրմանը նպաստումը, մասնավորապես, եվրոպական բարձրագույն կրթական տարածքին և եվրոպական հետազոտական տարածքին ինտեգրման ապահովումը,
- բարձրագույն ուսումնական հաստատությունների թափանցիկության, հաշվետվողականության, արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացումը,
- բարձրագույն կրթության և գիտության միջազգային տեսանելիության ու գրավչության բարձրացմանը, միջազգայնացմանը խթանող միջավայրի ձևավորման աջակցումը,
- բարձրագույն կրթության հասանելիության և մատչելիության ապահովումը,

**ԱՌԱՆՑՔԱՅԻՆ  
ԴՐՈՒՅԹ**

Գիտական աստիճանաշնորհման համակարգի պետական չափանիշների մշակումը և պահպանումը ԲԿԳԿ խնդիրներից է



## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԴՐՈՒՅԹ

Գիտական  
աստիճաններ  
շնորհող  
մասնագիտական  
խորհուրդների  
ստեղծումը, դրանց  
աշխատանքի  
կազմակերպումն ու  
վերահսկումը ԲԿԳԿ  
խնդիրներից է



-բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության և գիտության ոլորտների զարգացման երկարաժամկետ և միջնաժամկետ պետական ծրագրերի մշակման և դրանց գնահատման ապահովումը,

-Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) մշտադիտարկումը, վերանայումը և Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի համընդհանուր շրջանակի հետ համադրելիության ապահովումը, նոր որակավորումների սահմանումն ու ներառումը ՈԱՇ,

-ՈԱՇ-ի ինքնահավաստագրման գործընթացի համակարգումը,

-գիտական աստիճանաշնորհման համակարգի պետական չափանիշների մշակումը և պահպանումը,

-գիտական և գիտակրթական կադրերի որակավորման պետական չափանիշների մշակումը և վերահսկումը,

-գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհուրդների ստեղծումը, դրանց աշխատանքի կազմակերպումն ու վերահսկումը,

-գիտական և գիտատեխնիկական կադրերի պատրաստման, ինչպես նաև ատեստավորման արդյունավետ համակարգի մշակումը և վերահսկումը,

-գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառի ժամանակակից ենթակառուցվածքի ու տեղեկատվական համակարգի ձևավորմանն ու զարգացմանը, միջազգային գիտատեխնիկական համակարգին ինտեգրմանն աջակցելը,

-գիտական և գիտատեխնիկական փորձաքննության բնագավառում պետական քաղաքականության մշակումն ու իրականացումը,

-տնտեսության պահանջներից բխող, ինչպես նաև երկակի նշանակության բարձր տեխնոլոգիական մրցունակ արտադրանքի ստեղծմանն աջակցելը,

-բաց գիտության և բաց նորարարության սկզբունքների մշակումը և ներդրումը,

-գիտության համակարգի գործունեության որակի և արդյունավետության մշտադիտարկումը,

-գիտական կամ գիտատեխնիկական արդյունքի առևտրայնացմանը և տնտեսության մեջ ներդրմանն աջակցելը:

Քանի որ Կոմիտեն ստեղծվել է Նախարարության ենթակայության 2 կոմիտեի և 1 վարչության միավորմամբ, ապա նրան վերապահված գործառույթները շատ են.

-բարձրագույն կրթության և գիտության ոլորտներում կառավարության քաղաքականության մշակմանը մասնակցությունն ու բարձրագույն կրթության և գիտության ոլորտների վերաբերյալ իրավական ակտերի նախագծերի մշակումը,

-ըստ մասնագիտությունների և համապատասխան կազմակերպությունների բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրերով պետության կողմից ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) ուսուցման տեղերի ցանկերի մշակումը և սահմանված կարգով Կառավարության հաստատմանը ներկայացնելը,

-բարձրագույն ուսումնական հաստատության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցման տրամադրման նկատմամբ վերահսկողության իրականացումը,

-ըստ մասնագիտությունների և կրթական աստիճանների բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության որակավորումների բնութագրերի մշակումը և Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հաստատմանը ներկայացնելը,

**ԱՌԱՆՑՔԱՅԻՆ  
ԴՐՈՒՅԹ**

ԲԿԳԿ

գործառույթներից է՝ բուհերի դիմորդների ընդունելության կարգի և գիտելիքների գնահատման միասնական համակարգի մշակումը

-կրթական ծրագրերի լիցենզավորման կարգի մշակման աշխատանքներին մասնակցությունը,

-ըստ հիմնական կրթական ծրագրերի՝ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասնագիտությունների, դրանց ուսուցման ձևերի և դրանց համապատասխան տրվող որակավորումների ցանկի մշակումը և սահմանված կարգով Կառավարության հաստատմանը ներկայացնելը,

-բարձրագույն ուսումնական հաստատությունների դիմորդների ընդունելության կարգի և գիտելիքների գնահատման միասնական համակարգի մշակումը և սահմանված կարգով Կառավարության հաստատմանը ներկայացնելը,

-բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների շարժունության կարգի մշակումը և սահմանված կարգով Կառավարության հաստատմանը ներկայացնելը,



-բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի մշակումը և սահմանված կարգով Կառավարության հաստատմանը ներկայացնելը,

-բարձրագույն կրթության պետական կրթական չափորոշիչների ձևավորման կարգի մշակումը և սահմանված կարգով Կառավարության հաստատմանը ներկայացնելը,

-հեռավար (դիստանցիոն) և դրսեկության (էքստեռնատի) ձևերով ուսուցման կարգերի մշակումը և սահմանված կարգով Կառավարության հաստատմանը ներկայացնելը,

-բարձրագույն ուսումնական հաստատությունների և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպությունների պետական հավատարմագրման կարգի մշակումը և սահմանված կարգով Կառավարության հաստատմանը ներկայացնելը,

-մասնագետների պատրաստման, գիտական և գիտամանկավարժական աշխատողների որակավորման բարձրացման և վերապատրաստման, պետական բյուջեից գիտության զարգացմանն ուղղված ֆինանսավորման ծավալների մասին առաջարկությունների ձևավորմանը մասնակցությունը,

-բարձրագույն ուսումնական հաստատություններում պետության համար առաջնահերթ և կարևորություն ներկայացնող ոլորտների մասնագիտությունների ցանկի ու տեղերի ձևավորումը և սահմանված կարգով Կառավարության հաստատմանը ներկայացնելը, ինչպես նաև սահմանված կարգով ուսանողների նպաստի փոխհատուցման ապահովելը,

-երկրորդ մասնագիտություն ստանալու կարգի մշակումը և Նախարարի հաստատմանը ներկայացնելը,

-ըստ բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերի պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների առկա ընդունելության կարգի մշակումը և սահմանված կարգով Կառավարության հաստատմանը ներկայացնելը,

-բարձրագույն ուսումնական հաստատություններում բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման ընդունելության և մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության ու ուսուցման կարգերի մշակումը և Նախարարի հաստատմանը ներկայացնելը,

## **ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԴՐՈՒՅԹ**

Ասպիրանտուրայի դիմորդների հետ կնքվող պայմանագրի օրինակելի ձևի մշակումը ԲԿԳԿ գործառույթներից է



**ԱՌԱՆՑՔԱՅԻՆ  
ԴՐՈՒՅԹ**

Բուհերում և  
հետբուհական  
մասնագիտական  
կրթություն  
իրականացնող  
կազմակերպու-  
թյուններում որակի  
գնահատում կամ  
հավատարմագրում  
իրականացնող  
կազմակերպու-  
թյունների կողմից  
կրթության որակի  
ապահովման  
գործընթացի  
իրականացման  
կարգի մշակումը  
ԲԿԳԿ  
գործառույթներից է



-ասպիրանտուրայի ընդունելության և ասպիրանտուրայում ուսուցման, դոկտորանտուրայի և հայցորդության ձևակերպման կարգի մշակումը և սահմանված կարգով Կառավարության հաստատմանը ներկայացնելը,

-ասպիրանտուրայի դիմորդների հետ կնքվող պայմանագրի օրինակելի ձևի մշակումը և սահմանված կարգով Կառավարության հաստատմանը ներկայացնելը,

-բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող ուսումնական կամ գիտական կազմակերպություններում ասպիրանտուրան պետական պատվերի շրջանակներում ուսումնառած և ավարտած մասնագետների աշխատանքի տեղավորման կարգի մշակումը և սահմանված կարգով Կառավարության հաստատմանը ներկայացնելը,

-բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասնագիտությունների, դրանց ուսուցման ձևերի և դրանց համապատասխան տրվող որակավորումների ընդհանրական բնութագրերի և ցանկերի մշակումը և սահմանված կարգով Կառավարության հաստատմանը ներկայացնելը,

-հեռակա, հեռավար (դիստանցիոն) և դրսեկության (էքստեռնատի) ձևերով ուսուցում չթույլատրվող մասնագիտությունների ցանկերի մշակումը և սահմանված կարգով Կառավարության հաստատմանը ներկայացնելը,

-Ֆինանսական միջոցների տրամադրման կարգի, ներառյալ՝ ուսման վարձը փոխհատուցելու (լրիվ կամ մասնակի (զեղչ)), կրթաթոշակ սահմանելու, ուսումնական վարկ ստանալու, կրթական հիմնադրամներին ֆինանսավորելու կարգերի մշակումը և սահմանված կարգով Կառավարության հաստատմանը ներկայացնելը,

-ուսման վարձի առավելագույն չափը՝ ըստ կրթական աստիճանների և հավատարմագրման արդյունքների սահմանված կարգով Կառավարության հաստատմանը ներկայացնելը,

-բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգի մշակումը և Նախարարի հաստատմանը ներկայացնելը,

-միջին որակական գնահատականի հաշվարկման մեթոդաբանության մշակումը և Նախարարի հաստատմանը ներկայացնելը,

-բարձրագույն ուսումնական հաստատություններում և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպություններում ուսումնական հաստատության որակի գնահատում կամ հավատարմագրում իրականացնող կազմակերպությունների կողմից կրթության որակի ապահովման գործընթացի իրականացման կարգի մշակումը և Նախարարի հաստատմանը ներկայացնելը,

-բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ավարտական, ինչպես նաև գիտական աստիճաններին և կոչումներին վերաբերող փաստաթղթերի ձևերի մշակումը և սահմանված կարգով Կառավարության հաստատմանը ներկայացնելը,

-օտարերկրյա պետությունների բարձրագույն ուսումնական հաստատություններում միջպետական համաձայնագրերով սահմանված կրթաթոշակային տեղերի մրցույթի անցկացման կարգի մշակումը և Նախարարի հաստատմանը ներկայացնելը,

## **ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԴՐՈՒՅԹ**

Գիտության ոլորտի կառուցվածքային բարեփոխումների ծրագրերի մշակումը ևս ԲԿԳԿ գործառույթներից է



-գիտության ոլորտի կառուցվածքային բարեփոխումների ծրագրերի մշակումը,

-գիտության զարգացման հեռանկարային ու նպատակային, ինչպես նաև միջպետական համագործակցության շրջանակներում գիտատեխնիկական ծրագրերի մշակումն ու դրանց իրականացման կազմակերպումը,

-գիտական և գիտատեխնիկական ներուժի կառուցվածքի բարելավման ու օգտագործման արդյունավետության բարձրացման ծրագրերի մշակումը, գիտական կադրերի պատրաստման նպատակով ուսումնասիրությունների իրականացումը և պետական պատվերի ձևավորման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը,

-գիտության և տեխնիկայի զարգացման գերակայությունների վերաբերյալ առաջարկությունների մշակումը և դրանք սահմանված կարգով Կառավարության հաստատմանը ներկայացնելը,

-իր իրավասության սահմաններում պետական բյուջեի նախագծի մշակմանը մասնակցությունը,

-փորձաքննության բնագավառի իրավական ակտերի նախագծերի մշակումը,

-փորձաքննության կազմակերպիչներին և փորձագետներին առաջադրվող պահանջների սահմանումը,

-փորձաքննության բնագավառում պետական հավատարմագրման կարգի և չափանիշների մշակումը,

-պետական փորձաքննության մեթոդական և կազմակերպատեխնիկական հիմքերի մշակումն ու հաստատումը,

-փորձաքննության բնագավառում միջազգային համագործակցության պայմանագրերի կնքումը,

-գիտության, կրթության և արտադրության ինտեգրմանն ուղղված գիտական և գիտատեխնիկական գործունեության իրականացման կազմակերպումը,

-բարձրագույն կրթության և գիտության ոլորտներին առնչվող միջազգային պայմանագրերի և համաձայնագրերի մշակմանն ու քննարկմանը սահմանված կարգով մասնակցությունը,

-օտարերկրյա պետությունների, այդ թվում՝ Սփյուռքի գիտնականների ներուժի ներգրավմանն ուղղված ծրագրերի մշակումը և իրականացումը,

-իր իրավասության սահմաններում բարձրագույն կրթության և գիտության ոլորտների բյուջետային գործընթացի իրականացումը,

-Ռազմարդյունաբերական կոմիտեի և համապատասխան պետական մարմինների հետ համատեղ ռազմատեխնիկական ծրագրերի մշակման, փորձաքննության և մշտադիտարկման իրականացման կազմակերպումը,

-գիտության ոլորտի կառավարման միասնական տեղեկատվական համակարգի վարման կարգի մշակումն ու հաստատումը, դրա հիման վրա գիտական կամ գիտատեխնիկական արդյունքների վերաբերյալ տվյալների հավաքագրման, գիտաչափական վերլուծության, հաշվառման ամբողջական համակարգի ձևավորման և վարման իրականացումը,

-օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով համապատասխան վարչական, վիճակագրական հաշվետվությունների (հարցաթերթեր, տեղեկանքներ և այլն) ներդրումը և դրանց միջոցով հավաքագրված տվյալների ու տեղեկությունների հիման վրա սահմանված կարգով վարչական վիճակագրական ռեգիստրների վարումը,

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԴՐՈՒՅԹ

Գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհուրդների ստեղծման և ապահովումը և դրանց աշխատանքների կազմակերպումը, ինչպես նաև գիտական աստիճանների և կոչումների շնորհման կարգերի ու չափանիշների մշակումն իրականացնում է ԲԿԳԿ-ն



-գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհուրդների ստեղծման ապահովումը և դրանց աշխատանքների կազմակերպումը, ինչպես նաև գիտական աստիճանների և կոչումների շնորհման կարգերի ու չափանիշների մշակումը և սահմանված կարգով Կառավարության հաստատմանը ներկայացնելը,

-գիտական աստիճաններ և գիտական կոչումներ շնորհող գիտական մասնագիտությունների անվանացանկի կազմումը և Նախարարի հաստատմանը ներկայացնելը,

-գիտական աստիճանների հաստատումը և համապատասխան դիպլոմներով ամրագրումը՝ հիմք ընդունելով մասնագիտական խորհուրդների որոշումները և որակավորման գործի ուսումնասիրությունը,

-գիտական կոչումների հաստատումը և համապատասխան դիպլոմներով ամրագրումը՝ հիմք ընդունելով բուհերի և գիտական կազմակերպությունների գիտական խորհուրդների որոշումներն ու որակավորման գործի ուսումնասիրությունը,

-նախկին ԽՍՀՄ գիտական աստիճանի վկայագրերի հիման վրա Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանի վկայագրերի հանձնումը,

-օտարերկրյա պետություններում ստացված գիտական աստիճանի վկայագիրը Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանի վկայագրին համապատասխանեցնելու մասին Նախարարին եզրակացության ներկայացնելը,

-օտարերկրյա պետությունների համապատասխան մարմինների հետ համագործակցելը,

-ատենախոսությունների և սեղմագրերի պահպանման և տեղեկագրերի հրատարակման կազմակերպումը,

-գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի աշխատանքի կանոնակարգի մշակումը և Նախարարի հաստատմանը ներկայացնելը,

-ատենախոսությունների արդյունքներն ու դրույթները հրապարակելու համար սահմանվող գիտական պարբերականների ցուցակում ընդգրկվելու չափանիշների մշակումը և Նախարարի հաստատմանը ներկայացնելը,

## **ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԴՐՈՒՅԹ**

Ատենախոսությունների արդյունքներն ու դրույթները հրապարակելու համար սահմանվող գիտական պարբերականների ցուցակում ընդգրկվելու չափանիշների մշակումը ԲԿԳԿ գործառույթներից է



## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ

### ԴՐՈՒՅԹ

ԲԿԳ կոմիտեի կառավարումն իրականացնում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարը, որը հաստատում է Կոմիտեի կանոնադրությունը



-Կոմիտեի տեղեկատվության քաղաքականության և հանրային կապերի ու հանրայնացման ծրագրերի կազմակերպումն ու իրականացումը,

-իր կանոնադրական գործառույթներն ապահովելու նպատակով մասնագիտական փորձագիտական խորհուրդների, մրցութային հանձնաժողովների, աշխատանքային խմբերի ստեղծումը, ինչպես նաև մասնագիտական և խորհրդակցական մարմինների ձևավորումը և դրանց աշխատակարգի և անվանական կազմի հաստատումը:

Կոմիտեի կառավարումն իրականացնում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարը, որը.

-հաստատում է Կոմիտեի կանոնադրությունը, այդ թվում՝ կառուցվածքը, և կատարում կանոնադրության փոփոխություններ,

-օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված գործունեության ոլորտին, նպատակներին և խնդիրներին համապատասխան՝ սահմանում է Կոմիտեի գործունեության հիմնական ուղղությունները,

-իրականացնում է Կոմիտեի գործունեության վերահսկողությունը,

-լսում է Կոմիտեի գործունեության մասին հաշվետվությունները, քննում է գործունեության ստուգման արդյունքները,

-վերահսկողություն է իրականացնում Կոմիտեին ամրացված կամ օգտագործման հանձնված պետական սեփականության պահպանության նկատմամբ և հաստատում է տարեկան հաշվեկշիռը:

Կոմիտեն ղեկավարում է Նախագահը, որին անմիջականորեն հաշվետու են Նախագահի տեղակալները, գլխավոր քարտուղարը, Նախագահի օգնականները, ենթակայությանը հանձնված կազմակերպությունների, հիմնարկների ղեկավարները և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները, ինչպես նաև աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները:

Նախագահը հաշվետու է ՀՀ կառավարությանը, վարչապետին և Նախարարին: Նախագահը՝

-պատասխանատու է Կոմիտեի առջև դրված խնդիրների ու գործառույթների իրականացման համար,

-իր իրավասության սահմաններում առանց լիազորագրի հանդես է գալիս ՀՀ անունից, ինչպես նաև տալիս է ՀՀ անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով,

-իր իրավասության շրջանակներում ստորագրում է բարձրագույն կրթության և գիտության ոլորտներին առնչվող միջազգային համագործակցության փաստաթղթեր,

-իրականացնում է Կոմիտեի ենթակայությանը հանձնված կազմակերպությունների և հիմնարկների կառավարումը,

-օրենքով կամ Կոմիտեի կանոնադրությամբ նախատեսված դեպքերում նշանակում և ազատում է Կոմիտեի համապատասխան աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր,

-հաստատում է ներքին կարգապահական կանոնները,

-օրենքով նախատեսված դեպքերում ընդունում է նորմատիվ, անհատական և ներքին իրավական ակտեր,

-օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով ստեղծում է իրեն կից խորհրդակցական մարմիններ,

-կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում գլխավոր քարտուղարի՝ օրենսդրության պահանջներին հակասող հրամանները,

-կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում իր տեղակալների, գլխավոր քարտուղարի հանձնարարականները,

-կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում Կոմիտեի ենթակայությանը հանձնված կազմակերպությունների և հիմնարկների ղեկավարների՝ օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրությունները, ցուցումները, հանձնարարականները,

-լսում է կառուցվածքային ստորաբաժանումների, ենթակայությանը հանձնված կազմակերպությունների և հիմնարկների հաշվետվությունները, քննում է դրանց գործունեության սուուզման արդյունքները:

Նախագահի բացակայության դեպքում նրան փոխարինում է Նախագահի տեղակալը: Կոմիտեի հաստիքացուցակը Նախագահի առաջարկությամբ հաստատում է Նախարարը:

Նախագահի տեղակալը՝

-գործում է Նախագահից պատվիրակված լիազորությունների ուժով և համակարգում է աշխատանքներն իրեն հանձնարարված ոլորտում,

-իր համակարգման լիազորությունների շրջանակներում Կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումներին, ենթակայությանը

հանձնված կազմակերպություններին և հիմնարկներին փոխանցում է Նախագահի հանձնարարականները, ապահովում է Կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումների, ենթակայությանը հանձնված կազմակերպությունների և հիմնարկների կողմից Նախագահի հանձնարարականների կատարումը, իր համակարգման լիազորությունների շրջանակներում տալիս է հանձնարարականներ և դրանց կատարման նկատմամբ իրականացնում է հսկողություն՝ արդյունքների մասին տեղեկացնելով Նախագահին,

-իր համակարգման լիազորությունների շրջանակներում ստանում է գլխավոր քարտուղարի աջակցությունը, համագործակցում է այլ մարմինների և կազմակերպությունների հետ,

-իր համակարգման լիազորությունների շրջանակներում Նախագահին ներկայացնում է առաջարկություններ,

-իրականացնում է Նախագահի կողմից տրված ցուցումները և հանձնարարականները:

Կոմիտեն իր իրավասության սահմաններում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, ինչպես նաև քաղաքացիաիրավական այլ պարտականություններ է ձեռք բերում և իրականացնում է գլխավոր քարտուղարի միջոցով: Գլխավոր քարտուղարը օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատու է Կոմիտեի լիազորությունների իրականացման կազմակերպական, անձնակազմի կառավարման, ֆինանսատնտեսական գործառնությունների իրականացման և քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակցության համար: Աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներն անմիջականորեն հաշվետու են գլխավոր քարտուղարին: Գլխավոր քարտուղարն օրենքով սահմանված կարգով գույքային պատասխանատվություն է կրում պետությանն իր մեղքով պատճառած վնասի համար: Գլխավոր քարտուղարի լիազորությունների դադարեցումը հիմք էլ պատճառած վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար: Գլխավոր քարտուղարի լիազորությունները դադարեցնող անձը պարտավոր է լուծել նաև նրա՝ պետությանը պատճառած վնասի հատուցման հարցը: Գլխավոր քարտուղարը՝

-առանց լիազորագրի՝ «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված սահմաններում հանդես է գալիս ՀՀ անունից և

**ԱՌԱՆՑՔԱՅԻՆ  
ԴՐՈՒՅԹ**

ԲԿԳԿ

կառուցվածքային  
ստորաբաժանում-  
ներից են՝  
բարձրագույն  
կրթության և  
գիտության  
քաղաքականու-  
թյան, փորձաքնու-  
թյան և վերլուծու-  
թյունների,  
ծրագրերի  
իրականացման  
վարչությունները



ներկայացնում նրա շահերը, կնքում է գործարքներ, իր իրավասությանը վերապահված հարցերով տալիս է լիազորագրեր,

-օրենքով, այլ իրավական ակտերով և կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է Կոմիտեին ամրացված պետական գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները,

-ապահովում է քաղաքացիական ծառայության մասին օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով անձնակազմի կառավարման հետ կապված գործառույթների իրականացումը,

-օրենքով նախատեսված դեպքերում նշանակում և ազատում է Կոմիտեի համապատասխան աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր,

-Նախագահին է ներկայացնում Կոմիտեի հաշվետվչիզը,

-Նախագահին է ներկայացնում առաջարկություններ Կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքների կազմակերպական հարցերի վերաբերյալ,

-Նախագահին է ներկայացնում աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության հաշվետվությունները և մյուս ստորաբաժանումների՝ իր իրավասության շրջանակներին վերաբերող տեղեկատվություն, իսկ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հաշվետվություն,

-իր լիազորությունների շրջանակներում համագործակցում է Նախագահի տեղակալների, այլ պետական մարմինների և կազմակերպությունների հետ,

-իր լիազորությունների շրջանակներում Կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումներին, ենթակա պետական մարմիններին, կազմակերպություններին և հիմնարկներին փոխանցում է Նախագահի հանձնարարականները կամ իր լիազորությունների շրջանակներում տալիս է հանձնարարականներ և դրանց կատարման նկատմամբ իրականացնում հսկողություն՝ արդյունքների մասին տեղեկացնելով Նախագահին,

-անհրաժեշտության դեպքում կնքում է կառուցվածքային ստորաբաժանումների կողմից մշակված, ինչպես նաև իր և Նախագահի կամ Նախագահի տեղակալների անունից մշակված փաստաթղթերը,

-օրենքով նախատեսված դեպքերում ընդունում է անհատական իրավական ակտեր, տալիս հանձնարարականներ:

Նախագահի օգնականը՝ համաձայնեցնելով Նախագահի հետ՝ կազմակերպում է Նախագահի ընթացիկ և հեռանկարային աշխատանքների ծրագրերի նախապատրաստումը և դրանք ներկայացնում Նախագահին, կազմակերպում է Նախագահի խորհրդակցությունների, հանդիպումների, այցերի և ուղևորությունների նախապատրաստումը, համագործակցելով Կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատողների հետ՝ Նախագահի համար նախապատրաստում է տեղեկատվական և վերլուծական նյութեր, ինչպես նաև կատարում է Նախագահի կողմից տրված այլ հանձնարարականներ:

Կոմիտեի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներն են՝

-Բարձրագույն կրթության և գիտության քաղաքականության վարչությունը,

-Փորձաքննության և վերլուծությունների վարչությունը,

-Ծրագրերի իրականացման վարչությունը:

Կոմիտեին աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներն են՝

-Բյուջետավորման և գնումների բաժինը,

-Ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժինը,

-Հանրային կապերի և տեղեկատվության բաժինը,

-Անձնակազմի կառավարման բաժինը,

-Քարտուղարությունը, որն ունի բաժնի կարգավիճակ:

Ընդ որում, Կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները սահմանում է Նախագահը՝ հաստատելով դրանց կանոնադրությունները:

Կոմիտեն ունի ինքնուրույն հաշվեկշիռ: Կոմիտեի գույքը ձևավորվում է օրենսդրությամբ սահմանված կարգով, Կոմիտեի տիրապետմանն ու օգտագործմանը հանձնված գույքից: Կոմիտեին հանձնվող գույքի կազմը և չափը որոշում է Կառավարությունը: Կոմիտեի կարիքների համար գնումները կատարվում են «Գնումների մասին» օրենքով

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԴՐՈՒՅԹ

Գիտական  
աստիճան շնորհում  
է մասնագիտական  
խորհուրդը, իսկ  
գիտական  
աստիճանի  
վկայագիր  
հանձնում է ՀՀ  
ԿԳՄՍՆ ԲԿԳԿ-ն



**ԱՌԱՆՑՔԱՅԻՆ  
ԴՐՈՒՅԹ**

Ատենախոսության  
թեման  
հաստատելու  
իրավունք ունեն այն  
բուհերը կամ գի-  
տական կազմա-  
կերպությունները,  
որոնք ունեն ԲԿԳԿ-  
ի թույլտվությունը:  
Հարկավոր է տվյալ  
մասնագիտությամբ  
գիտական  
աստիճան ունեցող  
առնվազն 3  
(առնվազն 1  
գիտությունների  
դոկտոր)  
աշխատողի  
առկայություն



սահմանված կարգով: Գնումների գործընթացը համակարգում է գլխավոր քարտուղարը: Կոմիտեն վարում է հաշվապահական հաշվառում և օրենքով սահմանված կարգով ներկայացնում հաշվապահական հաշվետվություններ: Կոմիտեի ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել վերստուգման: Կոմիտեն ֆինանսական գործառնություններն իրականացնում է գանձապետական համակարգի միջոցով: Ֆինանսական գործառնությունների իրականացման համար պատասխանատու է գլխավոր քարտուղարը, որն իրականացնում է «Գանձապետական համակարգի մասին» օրենքով սահմանված լիազորությունները:

**ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԱՇՆՈՐՀՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ**

ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի համաձայն շնորհվում են գիտության թեկնածուի և գիտության դոկտորի գիտական աստիճաններ՝ ըստ գիտության բնագավառների: Գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի կարող են հավակնել այն անձինք, որոնք ունեն բարձրագույն կրթություն (դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի որակավորում) և հանձնել են քննություն Հայաստանի գիտական աստիճանաշնորհման անվանացանկի համապատասխան մասնագիտությունից: Գիտությունների դոկտորի գիտական աստիճանի կարող են հավակնել այն անձինք, ովքեր ունեն գիտության որոշակի բնագավառում ներդրած գիտական ավանդ և թեկնածուի գիտական աստիճան:

Գիտական աստիճան շնորհում է մասնագիտական խորհուրդը՝ հիմք ընդունելով ատենախոսության պաշտպանությունը, իսկ գիտական աստիճանի վկայագիր հանձնում է ՀՀ ԿԳՄՍ նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն<sup>1</sup> (այսուհետ՝ ԲԿԳԿ): Օտարերկրյա պետություններում ստացված գիտական աստիճանի վկայագիրը Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանի վկայագրին ևս համապատասխանեցնում է ԲԿԳԿ-ը, եթե միջազգային պայմանագրերով այլ բան սահմանված չի:

<sup>1</sup> Սույն ուսումնական ձեռնարկի հրատարակման ժամանակ ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կարգում դեռևս համապատասխան փոփոխությունները չէին կատարվել: Ենթադրվում է, որ նախկինում ԲՈԿ-ին՝ Բարձրագույն որակավորման կոմիտեին վերապահված լիազորությունները փոխանցվելու են նորաստեղծ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեին: Այս բաժնի նյութը շարադրված է այդ տրամաբանությամբ ԲՈԿ-ի փոխարեն ընթերցողը կգտնի ԲԿԳԿ:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ

### ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԴՐՈՒՅԹ

Ատենախոսության հիմնական արդյունքները և դրույթները մինչև ատենախոսության պաշտպանությունը պետք է հրատարակվեն միջազգային նշանակություն ունեցող գրախոսվող գիտական հրատարակություններում և ԲԿԳԿ-ի սահմանաճցուցակում ընդգրկված գիտական հրատարակություններում



Ատենախոսությունը հեղինակի գիտական հետազոտությունների հիման վրա կազմված աշխատություն է, որը ներկայացվում է գիտական աստիճանի հայցման համար: Առաջին՝ թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսությունն աշխատություն է, որը կարող է գնահատվել իբրև գիտության տվյալ բնագավառում կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծում կամ նոր խնդրի առաջադրում և կամ կիրառական կարևոր խնդրի լուծումն ապահովող գիտականորեն հիմնավորված տեխնիկական, տնտեսական կամ տեխնոլոգիական մշակում: Երկրորդ՝ դոկտորի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսությունն աշխատություն է, որը կարող է գնահատվել իբրև էական նվաճում գիտության տվյալ բնագավառում կամ գիտականորեն հիմնավորված տեխնիկական, տնտեսական, տեխնոլոգիական այնպիսի լուծում, որը հիմնավորապես կնպաստի գիտատեխնիկական առաջընթացին:

Ատենախոսության թեման հաստատելու իրավունք ունեն այն բարձրագույն ուսումնական հաստատությունները կամ գիտական կազմակերպությունները, որոնք ունեն ԲԿԳԿ-ի թույլտվությունը: Թույլտվություն ստանալու համար բարձրագույն ուսումնական հաստատությունը կամ գիտական կազմակերպությունը պետք է դիմի ԲԿԳԿ՝ տվյալ մասնագիտությամբ գիտական աստիճան ունեցող առնվազն 3 (առնվազն 1 գիտությունների դոկտոր) աշխատողի առկայության դեպքում, որոնց համար տվյալ բարձրագույն ուսումնական հաստատությունը կամ գիտական կազմակերպությունը հիմնական աշխատավայր է:

Ատենախոսության թեմա հաստատելու համար հայցորդը դիմում է բարձրագույն ուսումնական հաստատության կամ գիտական կազմակերպության ղեկավարին: Ատենախոսության թեման պետք է լինի արդիական: Ատենախոսության թեմայի հաստատման վերաբերյալ որոշման մեջ նշվում են թեմայի անվանումը, գիտության բնագավառը և մասնագիտությունն ըստ աստիճանաշնորհման անվանացանկի:

Գիտական խորհուրդը հաստատում է նաև ատենախոսության գիտական ղեկավար՝ թեկնածուական ատենախոսության համար, անհրաժեշտության դեպքում խորհրդատու՝ դոկտորական ատենախոսության համար: Գիտական ղեկավարի կամ խորհրդատուի համաձայնությունը պարտադիր է: Գիտական ղեկավար կարող են նշանակվել տվյալ բնագավառի գիտության

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԴՐՈՒՅԹ

Թեկնածուական  
ատենախոսություն-  
ների պաշտպա-  
նությունների  
համար անհրաժեշտ  
է առնվազն 6  
գիտական հոդված  
կամ առնվազն 3  
գիտական հոդված,  
այդ թվում՝  
առնվազն մեկ  
հոդված «Web of  
Science» կամ  
«Scopus» շտեմա-  
րաններում  
ընդգրկված գիտա-  
կան հրատա-  
րակություններից  
որևէ մեկում



դոկտորները, և այն թեկնածուները, ովքեր ստացել են ԲԿԳԿ-ի թույլտվությունը: Թույլտվություն ստանալու համար ԲԿԳԿ է ներկայացվում կազմակերպության ղեկավարի միջնորդությունը և թեկնածուի՝ համապատասխան գիտական բնագավառում առնվազն 30 տպագիր գիտական աշխատանքների ցուցակը, որոնցից առնվազն 5-ը՝ վերջին հինգ տարում: Ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման վերաբերյալ որոշման մասին տվյալ կազմակերպությունը տեղեկացնում է ԲԿԳԿ-ին:

Ատենախոսության հիմնական արդյունքները և դրույթները մինչև ատենախոսության պաշտպանությունը պետք է հրատարակվեն միջազգային նշանակություն ունեցող գրախոսվող գիտական հրատարակություններում և ԲԿԳԿ-ի սահմանած ցուցակում ընդգրկված գիտական հրատարակություններում: Թեկնածուական ատենախոսությունների պաշտպանությունների համար անհրաժեշտ է առնվազն վեց գիտական հոդված, այդ թվում առանց համահեղինակների՝ երկուսը կամ առնվազն երեք գիտական հոդված, այդ թվում առնվազն մեկ հոդված «Web of Science» կամ «Scopus» շտեմարաններում ընդգրկված գիտական հրատարակություններից որևէ մեկում և մեկ հոդված առանց համահեղինակների: Դոկտորական ատենախոսությունների պաշտպանության համար անհրաժեշտ է առնվազն քսան գիտական հոդված, այդ թվում՝ առնվազն հինգը՝ «Web of Science» կամ «Scopus» շտեմարաններում ընդգրկված գիտական հրատարակություններից որևէ մեկում: Հայագիտական բնույթի աշխատանքների դեպքում անհրաժեշտ է առնվազն քսան գիտական հոդված, այդ թվում՝ առնվազն մեկը՝ «Web of Science» կամ «Scopus» շտեմարաններում ընդգրկված գիտական հրատարակություններից որևէ մեկում: Առանց համահեղինակների աշխատանքների թիվը պետք է լինի առնվազն հինգ (փորձարարական կամ կլինիկական բնույթ ունեցող ատենախոսությունների դեպքում՝ երկու): Մենագրության դեպքում (առնվազն 14 տպագրական մամուլ ծավալով) գիտական հոդվածների թիվը կրճատվում է մինչև տասնհինգ: Գիտական զեկուցմամբ պաշտպանության դեպքում անհրաժեշտ է առնվազն հիսուն գիտական հոդված տվյալ թեմայի շրջանակներում, որոնցից առնվազն հինգը՝ «Web of Science» կամ «Scopus» շտեմարաններում ընդգրկված գիտական հրատարակություններից որևէ մեկում: Գիտական զեկուցման ձևով ատենախոսության պաշտպանության թույլտվությունը տալիս է ԲԿԳԿ-ը՝ համապատասխան մասնագիտական խորհրդի ներկայացմամբ:

**ԱՌԱՆՑՔԱՅԻՆ  
ԴՐՈՒՅԹ**

Ատենախոսության մեջ հայցորդը պարտավոր է նշել այն հեղինակներին և աղբյուրները, որոնցից նա փոխառել է առանձին դրույթներ կամ նյութեր



**ԱՌԱՆՑՔԱՅԻՆ  
ԴՐՈՒՅԹ**

Աենախոսության պաշտպանության, ինչպես նաև սեղմագրի տպագրության ծախսերը ՀՀ քաղաքացիների համար հատուցվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից



Ատենախոսության մեջ հայցորդը պարտավոր է նշել այն հեղինակներին և աղբյուրները, որոնցից նա փոխառել է առանձին դրույթներ կամ նյութեր:

Ատենախոսությունը պետք է ունենա համառոտ շարադրանք՝ սեղմագիր: Սեղմագիրն արտացոլում է ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումները, արդյունքների նորությունը, կիրառական նշանակությունը: Սեղմագիրը տպագրվում է մասնագիտական խորհրդի թույլտվությամբ՝ թեկնածուի գիտական աստիճանի համար՝ մինչև մեկ, դոկտորի գիտական աստիճանի համար՝ երկու տպագրական մամուլ ծավալով: Սեղմագիրը տպագրվում է մասնագիտական խորհրդի սահմանած քանակով՝ առնվազն 50 օրինակ: Գիտական զեկուցման ձևով ատենախոսության համար սեղմագիր չի կազմվում, այն ընդունվում է որպես սեղմագիր: Սեղմագրերը պետք է հրապարակվեն համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատության կամ գիտական կազմակերպության կայքում, որտեղ գործում է մասնագիտական խորհուրդը: Ատենախոսությունը և սեղմագիրը ներկայացվում են հայերեն: Մասնագիտական խորհրդի համաձայնությամբ դրանք կարելի է ներկայացնել այլ լեզվով: Սեղմագրի վերջում տրվում են ռուսերեն և անգլերեն ամփոփագրեր (հայերեն ամփոփագիր, եթե սեղմագիրն այլ լեզվով է): Անհրաժեշտության դեպքում, մասնագիտական խորհրդի որոշմամբ, սեղմագրի տպաքանակի մի մասը կարող է լինել նաև այլ լեզվով:

**ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ**

Մասնագիտական խորհուրդը ստեղծվում և գործում է ըստ ԲԿԳԿ-ի հաստատած մասնագիտական խորհրդի աշխատանքի կանոնակարգի: Խորհուրդը ստեղծում է ԲԿԳԿ-ը՝ գիտական և բարձրագույն կրթական այն հաստատություններում, որոնք համապատասխան բնագավառներում հայտնի են գիտական նվաճումներով: Խորհուրդը ստեղծվում է հիմնարկի հայտով՝ խորհրդի անհրաժեշտության, տվյալ հիմնարկում գործունեության նպատակահարմարության հիմնավորմամբ և աշխատանքային պայմանների երաշխավորմամբ: Հիմնարկի հայտին և միջնորդությանը կցվում են խորհրդի անդամների մասին տվյալները: Խորհրդում ընդգրկվում են խորհրդի մասնագիտություններով գիտությունների դոկտորներ, որոնք վերջին հինգ տարում ունեն առնվազն մեկ հրատարակված մենագրություն կամ առնվազն 5 գիտական հոդված կամ եղել են պաշտպանած ատենախոսության

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԴՐՈՒՅԹ

Նախնական  
քննարկումը  
խորհրդում  
կազմակերպվում է  
թեկնածուի  
գիտական  
աստիճանի համար՝  
2, դոկտորի  
գիտական  
աստիճանի համար՝  
3 ամսվա  
ընթացքում



գիտական ղեկավար: Եթե տվյալ մասնագիտությամբ գիտությունների դոկտորների թիվը չի բավարարում պաշտպանություն կազմակերպելու համար, ապա խորհրդում կարող են ընդգրկվել հարակից բնագավառների կամ մասնագիտությունների գիտությունների դոկտորներ, ովքեր խորհրդի մասնագիտություններով ունեն առնվազն 5 գիտական հոդված, ինչպես նաև տվյալ մասնագիտությամբ գիտության թեկնածուներ, ովքեր վերջին հինգ տարում ունեն առնվազն մեկ հրատարակված մենագրություն կամ առնվազն 10 գիտական հոդված: Խորհուրդը ԲԿԳԿ-ի կողմից հաստատվում է մինչև երեք տարի ժամկետով, որից հետո նրա գործունեության ժամկետը կարող է երկարացվել: Խորհուրդն օգտագործում է տվյալ հաստատության կնիքը և ձևաթուղթը:

Մեկ տարվա ընթացքում 3 անգամ գիտական աստիճան շնորհելու մասին մասնագիտական խորհրդի միջնորդությունը չհաստատելու դեպքում ԲԿԳԿ-ը կարող է վերակազմավորել խորհուրդը: Նման դեպքերում ԲԿԳԿ-ը դիմում է համապատասխան կազմակերպությանը՝ տվյալ աշխատանքների գիտական ղեկավարներին և ընդդիմախոսներին պետական բյուջեից ֆինանսավորվող ծրագրերում ընդգրկելու հետագա նպատակահարմարությունը քննարկելու հարցով:

Խորհրդում ատենախոսության պաշտպանության, ինչպես նաև սեղմագրի տպագրության ծախսերը ՀՀ քաղաքացիների համար հատուցվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից այդ նպատակով ԲԿԳԿ-ին հատկացված միջոցների հաշվին:

## ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԱՇՆՈՐՀՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Թեկնածուի գիտական աստիճանի հայցորդը պետք է քննություն հանձնի մասնագիտությունից: Գիտական կազմակերպությունը ԲԿԳԿ է ներկայացնում մասնագիտական քննություն ընդունող հանձնաժողովի կազմը: Հանձնաժողովը հաստատվում է հետևյալ կազմով՝ նախագահ (գիտության դոկտոր) և 2-4 անդամներ (գիտության դոկտոր և թեկնածու): Մեկ անձը կարող է լինել միայն մեկ հանձնաժողովի անդամ: Քննությունը հանձնվում է այն մասնագիտությունից, որով հաստատվել է ատենախոսության թեման՝ ԲԿԳԿ-ի հաստատած ծրագրով: Այն դեպքերում, երբ հայցորդի բարձրագույն կրթությունը չի համապատասխանում գիտության այն բնագավառին, որով հաստատվել է ատենախոսության թեման, հայցորդը պետք է հանձնի լրացուցիչ քննություն ընդհանուր մասնագիտությունից:

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԴՐՈՒՅԹ

Խորհուրդն  
ատենախոսությունը  
կարծիքի է  
ուղարկում գիտու-  
թյան տվյալ  
բնագավառում  
հայտնի՝  
առաջատար հիմ-  
նարկ, որը գնահա-  
տում է  
ատենախոսու-  
թյունը, նշում արդ-  
յունքների  
նշանակությունը



Քննությունը կազմակերպվում է երկու քննաշրջանով՝ մայիս-հունիս և հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին: Քննության ընթացքում յուրաքանչյուր հայցորդի համար լրացվում է արձանագրություն, որտեղ գրանցվում են քննական հարցերը և քննության վերջնական արդյունքը: Մասնագիտական քննությունը գնահատվում է 4 բալային համակարգով՝ «գերազանց», «լավ», «բավարար» և «անբավարար»: Քննությունը համարվում է հանձնված «գերազանց» կամ «լավ» գնահատականի դեպքում: Արձանագրությունը ստորագրում են քննական հանձնաժողովի նախագահը և անդամները: Արձանագրությունը պահպանվում է քննություն ընդունող կազմակերպությունում, որը և տալիս է տեղեկանք քննության հանձնման մասին: Քննությունը չհանձնելու դեպքում հայցորդը կարող է այն հանձնել հաջորդ քննաշրջաններում:

Այն հիմնարկը, որտեղ հաստատվել է ատենախոսության թեման, ատենախոսության նախնական փորձաքննությունից հետո տալիս է իր եզրակացությունը՝ նշելով հեղինակի կոնկրետ մասնաբաժինը ստացված արդյունքներում, հետազոտության արդյունքների հավաստիությունը, նորությունը, կիրառական նշանակությունը, ատենախոսությանը համապատասխանող մասնագիտությունն ըստ գիտական աստիճանաշնորհման անվանացանկի, հեղինակի հրատարակած աշխատություններում հետազոտման արդյունքների ընդգրկման լիարժեքությունը: Եզրակացությունը հայցորդին պետք է տրվի ատենախոսությունը նախնական փորձաքննության հանձնելուց հետո՝ թեկնածուի գիտական աստիճանի համար՝ երկու, դոկտորի գիտական աստիճանի համար՝ երեք ամսվա ընթացքում:

Անհրաժեշտ փաստաթղթերի առկայության դեպքում ատենախոսությունն ընդունվում է խորհուրդ՝ նախնական քննարկման: Նախնական քննարկումը կազմակերպվում է թեկնածուի գիտական աստիճանի համար՝ երկու, դոկտորի գիտական աստիճանի համար՝ երեք ամսվա ընթացքում:

Ատենախոսությունը պաշտպանության ընդունելու դեպքում խորհուրդը նշանակում է ատենախոսության պաշտոնական ընդդիմախոսներ՝ գիտական աստիճան ունեցող, գիտության տվյալ բնագավառի մասնագետ գիտնականների. թեկնածուի գիտական աստիճանի համար՝ երկու ընդդիմախոս (ընդ որում, նրանցից առնվազն մեկը՝ գիտության դոկտոր), դոկտորի գիտական աստիճանի համար՝ երեք ընդդիմախոս՝ գիտության դոկտորներ: Տվյալ ատենախոսությունը պաշտպանության ընդունած խորհրդի

**ԱՌԱՆՑՔԱՅԻՆ  
ԴՐՈՒՅԹ**

Գիտական  
աստիճան շնորհելու  
մասին խորհրդի  
որոշումը դրական է,  
եթե «կողմ» է  
քվեարկել նիստին  
ներկա անդամների  
առնվազն երեք  
քառորդը



անդամ, որպես կանոն, կարող է լինել ընդդիմախոսներից միայն մեկը:

Պաշտոնական ընդդիմախոսներ, որպես կանոն, չեն կարող լինել ԲԿԳԿ-ի աշխատողները, ատենախոսությունը պաշտպանության ընդունած խորհրդի նախագահը և գիտական քարտուղարը, հայցորդի գիտական ղեկավարը, ատենախոսության թեմայով հրատարակված աշխատանքների համահեղինակները, այն հիմնարկների ղեկավարները, որտեղ հաստատվել է ատենախոսության թեման և կամ որտեղ կատարվում են գիտահետազոտական աշխատանքներ, որոնց պատվիրատուն կամ կատարողը հայցորդն է:

Պաշտոնական ընդդիմախոսը, ուսումնասիրելով ատենախոսությունը և այդ թեմայով հրատարակված աշխատանքները, խորհրդին, վերջինիս սահմանած ժամկետում, ներկայացնում է կարծիք, որտեղ գնահատում է ատենախոսության թեմայի արդիականությունը, գիտական դրույթների և եզրահանգումների ճշտությունը, նորությունը և հիմնավորման աստիճանը, ատենախոսության համապատասխանությունը ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի պահանջներին:

Խորհուրդը պաշտոնական ընդդիմախոսների կարծիքների պատճենները հայցորդին հանձնում է ատենախոսության պաշտպանությունից առնվազն տասն օր առաջ: Խորհուրդն իրավասու է պաշտոնական ընդդիմախոսին վերադարձնել կարծիքը վերամշակման համար, եթե այն չի համապատասխանում նշված պահանջներին: Ատենախոսության պաշտպանությունը կարող է կայանալ նաև ընդդիմախոսներից մեկի բացակայության դեպքում, եթե առկա է բացակա ընդդիմախոսի գրավոր կարծիքը, որը հրապարակվում է խորհրդի նիստում:

Խորհուրդն ատենախոսությունը կարծիքի է ուղարկում գիտության տվյալ բնագավառում հայտնի՝ առաջատար հիմնարկ, որը գնահատում է ատենախոսությունը, նշում արդյունքների նշանակությունը գիտության և արտադրության ոլորտներում, տալիս հանձնարարականներ դրանք օգտագործելու համար: Կարծիքը հաստատում է առաջատար հիմնարկի ղեկավարը: Խորհուրդը կարծիքի պատճենը հայցորդին է հանձնում ատենախոսության պաշտպանությունից առնվազն տասն օր առաջ: Խորհուրդն իրավասու է փոխելու առաջատար հիմնարկը կամ վերադարձնելու առաջատար հիմնարկի կարծիքը, եթե այն չի համապատասխանում նշված պահանջներին:

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԴՐՈՒՅԹ

Կանոնակարգային  
խախտումներ  
չհայտնաբերելու  
դեպքում ԲԿԳԿ-ը  
եզրակացություն  
ստանալու  
նպատակով  
ատենախոսությունը  
տալիս է  
համապատասխան  
գիտության բնա-  
գավառից գիտական  
աստիճան ունեցող  
մասնագետի



Ատենախոսության պաշտպանությունը, ինչպես խորհրդի բոլոր նիստերը, անցկացվում է հայերեն: Հայցորդն իրավունք ունի գրավոր դիմումով հանելու ատենախոսությունը պաշտպանությունից՝ մինչև գաղտնի քվեարկությունն սկսվելը: Եթե առանց սկզբնաղբյուրները նշելու այլ հեղինակներից օգտագործվել են որոշակի դրույթներ և նյութեր, խորհուրդը բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ, ատենախոսությունը հանում է պաշտպանությունից՝ առանց տվյալ ատենախոսության նոր պաշտպանության իրավունքի և ԲԿԳԿ է ուղարկում իր որոշումը՝ սեղմագրի և նիստի սղագրության հետ միասին: Նման դեպքում ատենախոսությունը պաշտպանությունից հանելու մասին հայցորդի դիմումը չի ընդունվում:

Ատենախոսության պաշտպանությունից հետո գիտական աստիճան շնորհելու մասին որոշումը խորհուրդն ընդունում է գաղտնի քվեարկությամբ: Գիտական աստիճան շնորհելու մասին խորհրդի որոշումը դրական է, եթե «կողմ» է քվեարկել նիստին ներկա անդամների առնվազն երեք քառորդը:

Գաղտնի քվեարկությունից հետո, դրական որոշման դեպքում, խորհուրդը բաց քվեարկությամբ ընդունում է ատենախոսության մասին եզրակացություն: Եզրակացության մեջ պետք է արտացոլվեն ատենախոսության էական գիտական արդյունքները, դրանց նորության, հավաստիության գնահատականը, տեսական և կիրառական նշանակությունը և այլն: Դրական որոշման դեպքում խորհուրդը ԲԿԳԿ է ուղարկում որակավորման գործը, որն ընդգրկում է ատենախոսությունը, սեղմագիրը և խորհրդի աշխատանքի կանոնակարգով սահմանված փաստաթղթերը: Բացասական որոշման դեպքում խորհուրդն այդ մասին գրավոր հայտնում է ԲԿԳԿ-ին և հայցորդին է տալիս քաղվածք խորհրդի նիստի արձանագրությունից՝ գաղտնի քվեարկության արդյունքների մասին:

### ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸ ԲԿԳԿ-ում

Որակավորման գործը՝ ատենախոսությունը և ուղեկցող փաստաթղթերը, ԲԿԳԿ-ը ուսումնասիրում է մասնագիտական խորհրդից ստանալուց հետո և ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 10-րդ, 11-րդ, ինչպես նաև 13-րդ կետերի պահանջներին անհամապատասխանություն հայտնաբերելու դեպքում՝ մերժում է գիտական աստիճան շնորհելու մասին խորհրդի միջնորդությունը և մերժման մասին որոշումը ուղարկում է խորհուրդ: Այն անձը, որի գիտական աստիճան շնորհելու մասին խորհրդի որոշումը մերժվել է արտագրություն հայտնաբերելու հիմքով,

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԴՐՈՒՅԹ

Գիտական  
աստիճանի  
վկայագրի  
համապատասխանեցումը՝ համարժեքության ճանաչումը  
և հաստատումը, կատարվում է գիտնականի դիմումի հիման վրա



ատենախոսությունը կարող է ներկայացնել պաշտպանության մերժելու մասին որոշման ընդունումից մեկ տարի հետո: Տպագրած գիտական հոդվածների կամ սեղմագրի անհամապատասխանության հիմքով գիտական աստիճան շնորհելու մասին խորհրդի որոշումը մերժելու դեպքում պաշտպանություն կարող է կազմակերպվել խախտումները վերացնելուց հետո:

Կանոնակարգային խախտումներ չհայտնաբերելու դեպքում ԲԿԳԿ-ը եզրակացություն ստանալու նպատակով ատենախոսությունը տալիս է համապատասխան գիտության բնագավառից գիտական աստիճան ունեցող մասնագետի, ով վերջին հինգ տարում ունի հրապարակած առնվազն 5 գիտական աշխատանք՝ հրատարակված միջազգային նշանակություն ունեցող կամ ԲԿԳԿ-ի ցուցակում ընդգրկված գրախոսվող գիտական հրատարակություններում: ԲԿԳԿ-ը մասնագետի հետ կնքում է պայմանագիր, որտեղ ամրագրվում են մասնագետի աշխատանքի կատարման պայմանները և ժամկետը: ԲԿԳԿ-ը կարող է մասնագետի մասին տեղեկություն հրապարակել միայն նրա գրավոր համաձայնության դեպքում: Մասնագետի դրական եզրակացության դեպքում ԲԿԳԿ-ը հաստատում է խորհրդի որոշումը՝ թեկնածուական ատենախոսության համար՝ այն ԲԿԳԿ մուտքագրվելու օրվանից երեք, իսկ դոկտորական ատենախոսության համար՝ հինգ ամսվա ընթացքում և հանձնում է գիտական աստիճանի վկայագիր:

Որակավորման գործի վերաբերյալ մասնագետը կարող է տալ բացասական եզրակացություն՝ պատճառաբանված հիմնավորմամբ: Այդ դեպքում ԲԿԳԿ-ը այն ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում որակավորման գործը ուղարկում է խորհուրդ՝ բացասական եզրակացության հիման վրա քննարկում կազմակերպելու և որոշում կայացնելու համար: Խորհուրդը ատենախոսության հեղինակին առաջարկում է 6 ամիս ժամկետում ատենախոսությունը ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի պահանջներին համապատասխանեցնել և խորհուրդ ներկայացնել: Ատենախոսության հեղինակը կարող է վեցամսյա ժամկետը լրանալուց հետո պատճառաբանված հիմնավորմամբ՝ առանց փոփոխությունների ատենախոսությունը վերադարձնել խորհուրդ: Ներկայացված ատենախոսությունը խորհուրդը քննարկում և կայացնում է գիտական աստիճան շնորհելու մասին դրական կամ բացասական որոշում, որը եռօրյա ժամկետում ուղարկում է ԲԿԳԿ: Խորհրդի դրական որոշման հիման վրա գիտական աստիճանի վկայագիրը հայցորդին հանձնելուց հետո մեկ ամսվա ընթացքում ԲԿԳԿ-ը ատենախոսությունն ուղարկում է Հայաստանի ազգային գրադարան:

Գիտական աստիճանի վկայագրի համապատասխանեցումը՝ համարժեքության ճանաչումը և հաստատումը, կատարվում է գիտնականի դիմումի

հիման վրա՝ լիազոր մարմնի կողմից սահմանված փաստաթղթերի և հրատարակված գիտական աշխատանքների առկայությամբ: ԲԿԳԿ-ը համապատասխանեցման մասին ընդունում է դրական որոշում, եթե համակարգչային ծրագրերով ստուգելուց հետո ատենախոսության մեջ չեն հայտնաբերվել այլ աղբյուրներից առանց հղումների փոխառված նյութեր: Ընդ որում Մասնագիտական խորհրդի և ԲԿԳԿ-ի որոշումները կարող են բողոքարկվել օրենքով սահմանված կարգով:

#### 4.4 ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ

##### ԱՌԱՆՑՔԱՅԻՆ

##### ԴՐՈՒՅԹ

Մասնագիտական խորհուրդ ստեղծում է բուհերում և գիտական կազմակերպություններում, որոնք ունեն տվյալ մասնագիտությամբ առնվազն 3 գիտությունների դոկտոր



Գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհուրդը աստիճանաշնորհման համակարգի հիմնական օղակն է, որը ստեղծվում է ՀՀ կառավարության 1997 թվականի օգոստոսի 8-ի N 327 որոշմամբ հաստատված Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 15-րդ և 16-րդ կետերին համապատասխան՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թվականի հունվարի 18-ի N 03-Ն հրամանով հաստատված ՀՀ գիտական աստիճաններ շնորհելու մասնագիտությունների անվանացանկի հիման վրա:

Խորհուրդ ստեղծում է ՀՀ ԿԳՄՍ նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն բուհերում և գիտական կազմակերպություններում, որոնք ունեն տվյալ մասնագիտությամբ հիմնական աշխատող առնվազն երեք գիտությունների դոկտոր: Կազմակերպության առաջարկությամբ ԲԿԳԿ-ն նշանակում է համապատասխան մասնագիտության գիտական քարտուղար: Գիտական քարտուղարը ԲԿԳԿ-ի ներկայացուցիչն է կազմակերպությունում:

Խորհրդում ստեղծվում է խորհրդի կազմ՝ մեկ կամ մի քանի մասնագիտությունների համապատասխանող ատենախոսությունների պաշտպանությունը կազմակերպելու համար: Խորհրդի կազմում մասնագետներն ընդգրկվում են ատենախոսության բովանդակության՝ ըստ գիտական աստիճանաշնորհման անվանացանկի մասնաբաժնի համամասնությանը համապատասխան: Հայցորդն ատենախոսությունը ներկայացնում է իր ատենախոսության մասնագիտությանը համապատասխանող գիտական քարտուղարին: Ատենախոսության նախնական քննարկման դրական եզրակացության և ատենախոսության մասնագիտությանը համապատասխան խորհրդի կազմի

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ

### ԴՐՈՒՅԹ

Խորհրդի մեկ նիստի ընթացքում կարող է կայանալ մեկ ատենախոսության պաշտպանություն կամ քննարկում: Խորհրդի նիստն օրինական է, եթե նիստին մասնակցում է խորհրդի անդամների առնվազն երկու երրորդը



առկայության դեպքում ատենախոսության պաշտպանությունն իրականացվում է այդ խորհրդի կազմով: Հայցորդն իր ատենախոսության պաշտպանությունը կազմակերպելու համար կարող է դիմել խորհրդի նոր կազմ ստեղծելու համար: Խորհրդի կազմ ստեղծվում է կազմակերպության հայտով՝ նախնական քննարկմանը դրական եզրակացություն ստացած ատենախոսության պաշտպանությունը կազմակերպելու համար: Գիտական քարտուղարը, հայցորդի համաձայնությամբ և կազմակերպության միջնորդությամբ ԲԿԳԿ-ին ներկայացնում է վեց մասնագետների անուն, որոնց տվյալները լրացվում են Ձև N 1-ին համապատասխան (տես հավելվածը) և կցվում են հայտին՝ ԲԿԳԿ-ի կողմից այդ ցուցակից առնվազն չորս մասնագետ ընտրելու և խորհրդի կազմը համալրելու նպատակով: Խորհրդի կազմը բաղկացած է առնվազն յոթ անդամից, առավելագույնը՝ տասներեք, ներառյալ խորհրդի նախագահը, խորհրդի նախագահի տեղակալը և գիտական քարտուղարը: Խորհրդի կազմի ձևավորման որոշման մեջ նշվում է խորհրդի գործունեության ժամկետը և թույլատրելի պաշտպանությունների քանակը: Խորհրդի կազմից որևէ անդամի դուրս գալու դեպքում գիտական քարտուղարի կողմից և կազմակերպության միջնորդությամբ ԲԿԳԿ-ի հաստատմանն է ներկայացվում նոր մասնագետ: Խորհրդի կազմը կարող է ստանալ տվյալ մասնագիտություններով դոկտորական ատենախոսության պաշտպանություն կազմակերպելու իրավասություն, եթե խորհրդի կազմի անդամների առնվազն կեսը դոկտորներ են: Խորհրդի կազմը կարող է ստանալ տվյալ մասնագիտություններով թեկնածուական ատենախոսության պաշտպանություն կազմակերպելու իրավասություն, եթե խորհրդի կազմի անդամների առնվազն մեկ քառորդ մասը դոկտորներ են: Խորհրդի մեկ նիստի ընթացքում կարող է կայանալ մեկ ատենախոսության պաշտպանություն կամ քննարկում: Խորհրդի նիստն օրինական է, եթե նիստին մասնակցում է խորհրդի անդամների առնվազն երկու երրորդը:

Հայցորդն իր մասնագիտությանը համապատասխանող գիտական քարտուղարին ներկայացնում է՝

- ատենախոսության տպագիր և էլեկտրոնային տարբերակները,
- ատենախոսության նախնական քննարկման համար պահանջվող Ձև N 2, Ձև N 6 փաստաթղթերը (տես հավելվածը),
- երեք մասնագետների անուն, որոնք տվել են համաձայնություն իրականացնել ատենախոսության նախնական ուսումնասիրությունը և տալ եզրակացություն: Հայցորդի գիտական ղեկավարը/խորհրդատուն, համատեղ գիտական աշխատանք

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ

### ԴՐՈՒՅԹ

Ատենախոսությունն ուղարկվում է 3 մասնագետի, ովքեր 15 օրվա ընթացքում ներկայացնում են եզրակացություններ



ունեցող անձը, աշխատավայրերից որևէ մեկում նրա անմիջական ղեկավարը չեն կարող ընդգրկվել այդ ցուցակում:

Ատենախոսությունը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում գիտական քարտուղարը ստուգում է փաստաթղթերի ամբողջականությունը և ատենախոսության ֆայլն ու երեք մասնագետների անուններով ցուցակն ուղարկում ԲԿԳԿ-ին՝ վերջինիս հետ երեք մասնագետի թեկնածությունների համաձայնեցման նպատակով: Գիտական քարտուղարը մասնագետներին է ուղարկում ատենախոսությունը, ովքեր տասնհինգ օրվա ընթացքում ատենախոսության վերաբերյալ ներկայացնում են եզրակացություններ: Եզրակացության մեջ նշվում են՝

- ատենախոսության համապատասխանությունը հաստատված թեմայի թվանիշին (անհրաժեշտության դեպքում նշելով առկա այլ թվանիշերի մասնաբաժինները),

- հրատարակված հոդվածներում ատենախոսության հիմնական դրույթների ընդգրկման ամբողջականությունը,

- ատենախոսության համապատասխանությունը Կանոնակարգի 10-րդ կետին: Եթե մասնագետներից երկուսը չեն ներկայացնում եզրակացությունը, ապա ԲԿԳԿ-ն նշանակում է նոր մասնագետներ: Գիտական քարտուղարի և եզրակացություն ներկայացրած մասնագետների համատեղ քննարկման արդյունքում կայացվում է ատենախոսությունը պաշտպանության ընդունելու վերաբերյալ որոշում: Եզրակացություն չներկայացրած մասնագետը չի կարող ընդգրկվել տվյալ հայցորդի պաշտպանության մասնագիտական խորհրդի կազմում: Անհրաժեշտության դեպքում գործող մասնագիտական խորհրդի կազմը փոխվում է՝ կազմակերպության և գիտական քարտուղարի առաջարկությամբ:

Ատենախոսությունը պաշտպանության չընդունելու դեպքում հայցորդին հանձնվում են ներկայացված փաստաթղթերը և պաշտպանության մերժումը հիմնավորող որոշումը՝ կցելով մասնագետների եզրակացությունները և քվեարկության արդյունքները: Նյութերի կրկնօրինակը պահվում է ԲԿԳԿ-ում՝ ատենախոսության ֆայլի հետ մեկտեղ:

Մասնագետներից դրական եզրակացություն ստանալուց հետո, ատենախոսությունը պաշտպանության ընդունող մասնագիտական խորհրդի կազմի բացակայության դեպքում, ձևավորվում է մասնագիտական խորհրդի կազմ:

Ատենախոսությունը պաշտպանության ընդունելու մասին դրական որոշումից հետո խորհրդի կազմը նշանակում է ընդդիմախոսներ, առաջատար կազմակերպություն, պաշտպանության օր, թույլատրում սեղմագրի տպագրությունը՝ Ձև N 7, Ձև N 8 (տես հավելվածը):

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ

### ԴՐՈՒՅԹ

Ատենախոսության 1 և սեղմագրի 2 օրինակ պաշտպանությունից առնվազն 30 օր առաջ տրվում է այն կազմակերպության գրադարանին, որտեղ գործում է խորհուրդը



Պաշտպանությունից առնվազն 30 օր առաջ հայցորդն ատենախոսության սեղմագիրը առաքում է՝

- խորհրդի կազմի անդամներին,
- խորհրդի որոշած հասցեներով,
- ԲԿԳԿ հաստատած ցուցակի հասցեներով՝ Ձև N 5 (տես

հավելվածը): Ատենախոսության մեկ և սեղմագրի երկու օրինակ պաշտպանությունից առնվազն 30 օր առաջ տրվում է այն կազմակերպության գրադարանին, որտեղ գործում է խորհուրդը: Կազմակերպությունը պարտավոր է ատենախոսությունը պաշտպանության ընդունելուց առավելագույնը 5 օր անց իրենց պաշտոնական կայքէջերում տեղադրել հայցորդի ատենախոսության սեղմագիրը:

Ատենախոսության պաշտպանության նիստն ընթանում է խորհրդի կազմի նախագահի, բացակայության դեպքում՝ նախագահի տեղակալի ղեկավարությամբ: Խորհրդի կազմի նախագահի և նախագահի տեղակալի միաժամանակյա բացակայության դեպքում նիստը չի կայանում: Խորհրդի գիտական քարտուղարի բացակայության դեպքում նիստի անդամներն ընտրում են գիտական քարտուղարի պարտականությունների կատարող: Նիստը սկսում է խորհրդի կազմի նախագահը, եթե համաձայն ներկայաթերթիկի՝ Ձև N 9 (տես հավելվածը) նիստը կարող է օրինական համարվել: Նախագահը հայտարարում է պաշտպանվող ատենախոսության թեման, նշում պաշտոնական ընդդիմախոսներին և առաջատար կազմակերպությանը, որից հետո խոսքը տրվում է գիտական քարտուղարին՝ հայցորդի ներկայացրած փաստաթղթերին ծանոթացնելու համար:

Հայցորդը ներկայացնում է իր ատենախոսության հիմնական և առանցքային դրույթներն ու նյութերը, որից հետո նրան տրվում են հարցեր: Այնուհետև կարող է ելույթ ունենալ գիտական ղեկավարը կամ խորհրդատուն: Ապա գիտական քարտուղարը հրապարակում է ատենախոսության թեման հաստատած կազմակերպության եզրակացությունը, առաջատար կազմակերպության կարծիքը, ինչպես նաև ատենախոսության և սեղմագրի վերաբերյալ ստացված կարծիքները: Դրական կարծիքները, խորհրդի կազմի անդամների համաձայնությամբ, կարող են ներկայացվել ամփոփ, նշելով դիտողությունները, իսկ բացասական կարծիքներն ընթերցվում են ամբողջությամբ: Կարծիքների հրապարակումից հետո, դիտողություններին պատասխանելու համար, խոսքը տրվում է հայցորդին: Այնուհետև իրենց կարծիքները հրապարակում են պաշտոնական ընդդիմախոսները: Եթե ընդդիմախոսը բացակայում է, ապա գիտական քարտուղարն ընթերցում է նրա կարծիքը:

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ

### ԴՐՈՒՅԹ

Յուրաքանչյուր ընդդիմախոսի ելույթից հետո հայցորդը ստանում է պատասխանի իրավունք



Յուրաքանչյուր ընդդիմախոսի ելույթից հետո հայցորդը ստանում է պատասխանի իրավունք: Նիստից կարող է բացակայել միայն մեկ ընդդիմախոս: Հետագա բանավեճին, ինչպես նաև ատենախոսության քննարկման ամբողջ ընթացքին, մասնակցելու իրավունք ունեն նիստին բոլոր ներկա գտնվողները: Վերջում հայցորդին տրվում է եզրափակիչ խոսքի իրավունք: Հայցորդի եզրափակիչ խոսքից հետո խորհուրդը գիտական աստիճան շնորհելու հարցով անցկացնում է գաղտնի քվեարկություն: Գաղտնի քվեարկության համար բաց քվեարկությամբ նիստին մասնակից խորհրդի կազմի ձայների պարզ մեծամասնությամբ ընտրվում է հաշվիչ հանձնաժողով՝ առնվազն երեք հոգի: Գաղտնի քվեարկությանը մասնակցում են միայն նիստին մասնակից խորհրդի անդամները, որոնց հաշվիչ հանձնաժողովը ստորագրությամբ հանձնում է քվեաթերթիկները՝ Ձև N 10 (տես հավելվածը):

Պաշտպանությունից ուշացած կամ մինչև պաշտպանության ավարտը հեռացած խորհրդի անդամները քվորումը որոշելիս չեն հաշվառվում և քվեարկությանը չեն մասնակցում: Եթե հայցորդը խորհրդի անդամ է, ապա նա չի ընդգրկվում իր պաշտպանության նիստի խորհրդի անդամների ցուցակում և չի մասնակցում քվեարկությանը: Քվեարկողը քվեաթերթիկի «քվեարկության արդյունքներ» սյունակում թողնելով իր նախընտրած տարբերակը՝ ջնջում է մյուսը և քվեաթերթիկը գցում կնքված քվեատուփի մեջ: Քվեատուփը բացում են հաշվիչ հանձնաժողովի անդամները, հաշվում քվեաթերթիկները, և ըստ քվեարկության արդյունքների կազմում արձանագրություն՝ Ձև N 11 (տես հավելվածը): Նախքան գաղտնի քվեարկության սկսվելը, չբաժանված քվեաթերթիկները, հետագա օգտագործումը բացառող նշանով, պահվում են հաշվիչ հանձնաժողովի մոտ, որի մասին նշվում է արձանագրության մեջ: Այն քվեաթերթիկները, որոնք հստակ չեն արտահայտում խորհրդի անդամի կարծիքը, համարվում են անվավեր, որի մասին նշվում է արձանագրության մեջ: Քվեարկության արդյունքների արձանագրությունը ձևակերպելուց հետո հաշվիչ հանձնաժողովը քվեաթերթիկները կցում է արձանագրությանը: Գաղտնի քվեարկությանը մասնակցած խորհրդի անդամները բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ հաստատում են հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը: Արձանագրությունը չհաստատվելու դեպքում քննարկումը շարունակվում է և խորհուրդը կրկին անցկացնում է գաղտնի քվեարկություն՝ նոր քվեաթերթիկներով: Գիտական աստիճան շնորհելու մասին խորհրդի կազմի որոշումը դրական է, եթե «կողմ» են քվեարկել նիստին մասնակից անդամների առնվազն երեք քառորդը: Հաշվիչ հանձնաժողովի արձանագրության հաստատումից հետո քննարկվում

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ

### ԴՐՈՒՅԹ

Եզրակացության տեքստն ընդունվում է բաց քվեարկությամբ՝ նիստին մասնակից խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ



է խորհրդի կազմի եզրակացության նախագիծը: Եզրակացության տեքստն ընդունվում է բաց քվեարկությամբ՝ նիստին մասնակից խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Գիտական աստիճան շնորհելու մասին խորհրդի կազմի բացասական որոշման դեպքում եզրակացություն չի ընդունվում: Եթե հայցորդը ատենախոսությունը հանում է պաշտպանությունից, ապա նրան վերադարձվում են ներկայացված փաստաթղթերը, բացի դիմումներից, ատենախոսության և սեղմագրի մեկական օրինակներից, որոնք մնում են խորհրդում: Գիտական աստիճան շնորհելու մասին դրական որոշման դեպքում, պաշտպանությունից հետո 15-օրյա ժամկետում, խորհուրդը ԲԿԳԿ է ուղարկում հայցորդի որակավորման գործը՝ ատենախոսության մեկ օրինակը, սեղմագրերը և որակավորման փաստաթղթերը՝ Ձև N 3 (տես հավելվածը): Բացասական որոշման դեպքում հայցորդին վերադարձվում են խորհուրդ ներկայացված փաստաթղթերը և քաղվածք խորհրդի նիստի արձանագրությունից՝ գաղտնի քվեարկության արդյունքների մասին: Ատենախոսության մեկ օրինակը հանվում է կազմակերպության գրադարանից և կարծիքների, սեղմագրի, նիստի արձանագրության հետ միասին հնգօրյա ժամկետում ուղարկվում է ԲԿԳԿ:

## 4.5 ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԵՂՄԱԳՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

**Ատենախոսությունը** պետք է ունենա հետևյալ բաղադրիչ մասերը՝ սահմանված ձևի տիտղոսաթերթ (տե՛ս հավելված 6), բովանդակություն, առաջաբան կամ ներածություն՝ ներառելով ատենախոսության հիմնական դրույթները, տեքստ՝ առանձին գլուխներով, եզրակացություն, օգտագործված գրականության ցանկ, անհրաժեշտության դեպքում՝ գիտագործնական երաշխավորություններ կամ առաջարկներ, հավելված, նշանակումների, հապավումների, միավորների և տերմինների ցանկ:

Ատենախոսությունը տպագրվում է A4 (210x297 մմ) չափի թղթի մի կողմի վրա, համակարգչով (Microsoft Word ծրագրով, Unicode, հայերենը՝ GHEA Grapalat տառատեսակ), այնպես, որ էջում լինի 28-30 տող: Էջերը պետք է ունենան լուսանցքներ՝ ձախից՝ 30 մմ, վերևից՝ 20 մմ, աջից՝ 10 մմ, ներքևից՝ 25 մմ:

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ

### ԴՐՈՒՅԹ

Ատենախոսության գլուխների անվանումները պետք է լինեն մեծատառերով և սկսվեն նոր էջից: Թեկնածուական ատենախոսության համար ընդունելի է 100-150 էջ, իսկ դոկտորական ատենախոսության համար՝ 200-300 էջ ծավալը՝ առանց հավելվածների



## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ

### ԴՐՈՒՅԹ

Ատենախոսության գլուխների անվանումները պետք է լինեն մեծատառերով և սկսվեն նոր էջից: Ատենախոսության բոլոր էջերը, ներառյալ լուսաբանող նկարները, աղյուսակները, հավելվածը և այլն, համարակալվում են: Տիտղոսաթերթը համարվում է առաջին էջ, որի վրա համարը չի դրվում: Ատենախոսության յուրաքանչյուր օրինակի տիտղոսաթերթին հայցորդը ստորագրում է:

Թեկնածուական ատենախոսության համար ընդունելի է 100-150 էջ, իսկ դոկտորական ատենախոսության համար՝ 200-300 էջ ծավալը՝ առանց հավելվածների: Հասարակական գիտությունների համար նշված ծավալները կարող են ավելանալ 30%-ի չափով, որոշ տեսական բնույթի ատենախոսություններ, խորհրդի միջնորդությամբ և ԲԿԳԿ-ի համաձայնությամբ, կարող են ունենալ ավելի փոքր ծավալ:

Առաջաբանը կարող է լինել 5-15 էջի սահմաններում:

Աղյուսակների, նկարների, գծապատկերների, գծագրերի անվանումները, նշանակումների բացատրությունները տրվում են ներքևում կամ վերևում: Դրանք կարելի է տեղադրել ուղղաձիգ կամ հորիզոնական դիրքով: Եթե մեկ թերթի վրա աղյուսակը չի տեղավորվում, պետք է շարունակել մյուս թերթի վրա՝ նշելով, որ շարունակությունն է: Աղյուսակի սյունակներում ազատ տեղեր չպետք է մնան. պետք է դնել գծիկ կամ գրել «չկա» («չի որոշված»):

Գրականության ցանկը կարելի է ներկայացնել կամ այբբենական կարգով՝ նշելով հղումների համարները տեքստում, կամ համարակալված ըստ ատենախոսության մասերի հղումների: Ցանկում աղբյուրները պետք է ընդգրկեն՝ հեղինակի/ների/ ազգանունը և անվան առաջին տառը, նյութերի լրիվ անվանումը, հրատարակության տվյալները (տեղը, հրատարակչությունը, քաղաքը, տարեթիվը, հատորը, էջերը): Տեղեկատվական պաշտոնական, այդ թվում՝ էլեկտրոնային աղբյուրների, համակարգչային ծրագրերի, հաշվետվությունների, հրահանգների, հեղինակային իրավունքի արտոնագրերի, պատենտների դեպքում ներկայացվում են լրիվ տվյալները:

Աղբյուրները բերվում են բնօրինակի լեզվով: Ատենախոսության էջերում ուղղումներ չի թույլատրվում:

Ատենախոսությունը պետք է ունենա համառոտ շարադրանք՝ **սեղմագիր**: Սեղմագիրը պետք է ունենա սահմանված ձևերի կազմ և 2-րդ էջ (տե՛ս հավելվածներ 7 և 8): Սեղմագրում՝ այսինքն աշխատանքի համառոտ բնութագրում, պետք է հիմնավորվի՝ ատենախոսության թեմայի արդիականությունը, դրա նպատակն ու խնդիրները, արդյունքների նորությունը, կիրառական նշանակությունը: Ապա պետք է ներկայացվի

Ատենախոսությունը պետք է ունենա համառոտ շարադրանք՝ սեղմագիր: Սեղմագրում պետք է հիմնավորվի ատենախոսության թեմայի արդիականությունը, դրա նպատակն ու խնդիրները, արդյունքների նորությունը, կիրառական նշանակությունը



ատենախոսության գլուխների խիստ համառոտ բովանդակությունը, ատենախոսության հիմնական դրույթները, անհրաժեշտության դեպքում՝ փորձարկման մասին տեղեկություններով, եզրակացություն և ատենախոսության թեմայով հրատարակված աշխատանքների ցանկ (անվանումները՝ բնօրինակի լեզվով, նշելով հեղինակի (ների) ազգանունը և անվան առաջին տառը, հրատարակության տվյալները և էջերը):

Սեղմագրի վերջում տրվում են ռուսերեն և անգլերեն ամփոփագրեր՝ յուրաքանչյուր լեզվով երկու էջ (հայերեն և անգլերեն, եթե սեղմագիրը ռուսերեն է, հայերեն և ռուսերեն, եթե սեղմագիրն այլ լեզվով է):

Սեղմագիրը տպագրվում է համակարգչով՝ 9 տառաչափով, A5 (148x210 մմ) չափի սպիտակ թղթի վրա, թեկնածուական ատենախոսության սեղմագիրը առնվազն 1 տպագրական մամուլ (մինչև 22 էջ), դոկտորականինը՝ առնվազն 2 տպագրական մամուլ (մինչև 38 էջ) ծավալով:

Սեղմագրում բանաձևերը, աղյուսակները, նկարները, գծապատկերները ձևավորվում են այնպես, ինչպես ատենախոսության մեջ:

Սեղմագրի բնօրինակի վրա ստորագրում են մասնագիտական խորհրդի գիտքարտուղարը (2-րդ էջում) և հայցորդը (վերջին էջում):

#### **4.6 ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ**

ՀՀ-ում բարձրագույն կրթության երրորդ աստիճանում՝ ասպիրանտուրայում, ուսուցման կազմակերպման, ինչպես նաև գիտական աստիճանաշնորհման իրավական հիմքերը ամրագրված են «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» և «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքներում: Ուստի այս ոլորտում բարեփոխումների (որոնց մասին արդեն քննարկումներն առկա են որոշում կայացնողների մակարդակում) ու դրանց իրավական ամրագրման մասին խոսելիս պետք է, անշուշտ, սկսել հենց օրենքներից: Ինչպես տեսանք, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքում ամրագրված է, որ բարձրագույն կրթության որակավորման համակարգը երկաստիճան է՝ բակալավր և մագիստրոս (հոդված 5): Ասպիրանտուրան արդեն երկու տասնամյակ գործող օրենքում համարվում է հետբուհական կրթություն, չնայած

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ

### ԴՐՈՒՅԹ

Օրենքում անհրաժեշտ է ամրագրել, որ դոկտորանտուրան (այժմ՝ ասպիրանտուրա) բարձրագույն կրթության երրորդ մակարդակն է, միաժամանակ, հրաժարվելով «հետբուհական» բառից



իրականացվում է հիմնականում հենց բուհերում: Մեր կարծիքով, օրենքում անհրաժեշտ է ամրագրել, որ դոկտորանտուրան (այժմ՝ ասպիրանտուրա) բարձրագույն կրթության երրորդ մակարդակն է, միաժամանակ, հրաժարվելով «հետբուհական» բառից: Մեկ այլ կարևոր հանգամանք՝ օր առաջ հարկավոր է փոխել օրենքում «հետազոտողի որակավորում» արտահայտությունը: Դա որակավորման աստիճանն է, որ պիտի տրվեր «հետազոտողի» կրթական ծրագրով ուսանողներին՝ ծրագիրն հաջողությամբ ավարտելուց հետո (հոդված 8, հոդված 9): Սակայն անցած շուրջ քսան տարիների ընթացքում, ստացվում է, օրենքն ըստ էության չի գործել. համալսարանները կա՛մ հետազոտողի որակավորում չեն տվել, կա՛մ այն որևէ գործատուի, այդ թվում և հենց համալսարանների համար որևէ նշանակություն չի ունեցել և դեռևս կիրառելի չէ: Այսպիսով, ինչպես Բոլոնիայի գործընթացն է մեզ հուշում և ինչպես արևմտյան երկրներում է՝ բարձրագույն կրթության երրորդ մակարդակն ավարտելիս պետք է շնորհել դոկտորի (մեզ մոտ՝ գիտությունների թեկնածուի) գիտական աստիճան՝ ատենախոսության պաշտպանության արդյունքում:

Օրենքում ամրագրված մյուս չգործող ինստիտուտը դոկտորանտի ինստիտուտն է՝ «գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող և գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման նպատակով ատենախոսություն պատրաստելու համար համապատասխան կարգով ձևակերպված անձը» (հոդված 3): Ըստ էության սա նախկինից մնացած, օրենքում ամրագրված, սակայն այժմ որևէ կերպ չօգտագործվող ինստիտուտ է: Առավել ևս, երբ գիտական առաջին աստիճանը ստանա «դոկտոր» անունը, ինչպես երաշխավորում է UNESCO-ն<sup>2</sup>, բարձրագույն կրթության երրորդ աստիճանը տրամաբանորեն կարելի է անվանել «դոկտորանտուրա»՝ «ասպիրանտուրայի» փոխարեն: Գիտական երկրորդ՝ գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման համար անհրաժեշտություն չկա կրթական որևէ ծրագիր իրականացնելու, առավել ևս, որ այժմ էլ ոչ ոք դրա կարիքը չի զգում: Ավելին, գիտական երկրորդ աստիճանը (մենք մեր նախկին աշխատանքներից մեկում առաջարկել ենք այն անվանել Ավագ դոկտոր կամ Grand Doctor)<sup>3</sup> ուղղակի կապ չպիտի ունենա կրթության հետ, դա զուտ գիտական, հետազոտական աշխատանքի արդյունք է, ուրույն ներդրում, ավանդ գիտության որոշակի բնագավառում: Գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հավակնորդը, թերևս, պետք է

<sup>2</sup> <http://www.uis.unesco.org/Education/Documents/iscde-2011-en.pdf>

<sup>3</sup> Մխիթարյան Ա., Գիտական աստիճանի կայացման հետազոտող, ինչո՞ւ դոկտոր, Հանրային կառավարում, 2016, հ3, էջ 24-32

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ

### ԴՐՈՒՅԹ

Գիտական երկրորդ՝ գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման համար անհրաժեշտություն չկա կրթական որևէ ծրագիր հրականացնելու



բավարարի միայն մեկ պայմանի՝ ունենա գիտական առաջին՝ դոկտորի աստիճան:

Օրենքում ամրագրված հիմնական հասկացություններից հաջորդը, որը ևս հետինականների կարծիքով պետք է դուրս գա օրենսդրությունից, հայցորդն է՝ «բարձրագույն մասնագիտական կրթություն (մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում) ունեցող և առանց ասպիրանտուրայում սովորելու՝ գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման նպատակով ատենախոսություն պատրաստող անձը, որը սահմանված կարգով կցված է հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպությանը» (հոդված 3): Սա, ինչպես նկարագրել ենք մեր նախկին աշխատանքում<sup>4</sup>, Հայրենական մեծ պատերազմից հետո ԽՍՀՄ-ում ներդրված ինստիտուտ էր, որ պետք է ծառայեր որպես գիտական կադրերի պատրաստման ժամանակավոր միջոց՝ առաջացած բացը լրացնելու համար: Մինչդեռ այն դեռևս մնալով մեր գիտակրթական համակարգում՝ ավելի շատ ծառայում է որպես գիտության ոլորտի հետ որևէ ուղղակի կապ չունեցող անհատների համար գիտական աստիճան ձեռք բերելու հեշտ միջոց: Պատճառներից մեկը, թերևս, դա է, որ ՀՀ ԿԳՄՍ ԲԿԳԿ ներկայացվող ատենախոսությունների զգալի մասն անորակ է: Հայցորդության համակարգը հեշտությամբ կարելի է փոխարինել հեռակա դոկտորանտուրայով (ասպիրանտուրա): Համակարգային բարեփոխումների լույսի ներքո էական փոփոխությունների կարիք ունի Հայաստանի Հանրապետությունում աստիճանաշնորհման ողջ համակարգը, որը կարելի է ամրագրել, թերևս, առանձին օրենքով:

Բերենք օրենսդրական կամ ենթաօրենսդրական այն հայեցակարգային հիմնական դրույթները, որոնք, մեր կարծիքով, հստակեցման կամ փոփոխությունների կարիք ունեն:

Ատենախոսությունների պաշտպանության համար պահանջվում է նախապես առնվազն վեց գիտական հոդված ունենալ ԲԿԳԿ-ի սահմանած ցուցակում ընդգրկված գիտական հրատարակություններում կամ առնվազն մեկ գիտական հոդված ունենալ «web of science» կամ «scopus» միջազգային շտեմարաններում ընդգրկված գիտական հրատարակություններից որևէ մեկում, ու այդ դեպքում կպահանջվի ևս երկու տպագրված հոդվածի առկայություն: Ընդ որում, այս պահանջը ունիվերսալ է ու տարածվում է բոլոր մասնագիտություններով պաշտպանվող ատենախոսությունների վրա: Եթե բնագիտության՝

<sup>4</sup> Երիցյան Ս., Ճուղուրյան Ա., Մխիթարյան Ա., Դոկտորանտուրա. բարձրագույն կրթության երրորդ աստիճանի կազմակերպման հիմունքներ, Երևան 2017, Էդիթ պրինտ, 206 էջ

## ԱՈՒՆՑՔԱՅԻՆ

### ԴՐՈՒՅԹ

Անհրաժեշտություն կա օրենսդրորեն կարգավորելու հայկական գիտական պարբերականներին ներկայացվող պահանջները այնպես, որ բարձրանա արհեստավարժության մակարդակը և ամրապնդվի գիտականությունը



Ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության, մեխանիկայի կամ մաթեմատիկայի բնագավառներում միջազգային շտեմարաններում ընդգրկված ու որոշակի ազդեցության գործակից ունեցող գիտական պարբերականներում հոդված ունենալը մեծ խնդիր չէ, ապա նույնը չի կարելի ասել հումանիտար ու հասարակագիտական բնագավառում պաշտպանության ներկայացվող ատենախոսությունների համար: Առաջադրվող պահանջը շատ կարևոր է, և, անշուշտ, նպաստում է հայրենական գիտության միջազգային ճանաչմանն ու ազդեցության աճին: Սակայն, ցավոք, մյուս կողմից, շատ են հայկական գիտական պարբերականներն ու շատ ցածր է դրանց ազդեցության աստիճանը: Անհրաժեշտություն կա օրենսդրորեն կարգավորելու նաև հայկական գիտական պարբերականներին ներկայացվող պահանջները այնպես, որ բարձրանա արհեստավարժության մակարդակը, ամրապնդվի գիտականությունն ու դուրս գա արհեստականությունը: Ցանկալի է ստեղծել գիտական հրատարակությունների ազգային գրանցամատյան, մշակել ու իրականացնել գիտական ամսագրերի ու ժողովածուների ուժեղացման քաղաքականություն, խրախուսել դրանց ընդգրկումը միջազգային շտեմարաններում: Նշենք, որ այս հարցն օրախնդիր է հատկապես հայագիտության համար, որի միակ ու հիմնական աջակիցը պետք է հայոց պետությունը լինի:

Հետաքրքիր է, որ Հայաստանն այն փոքրաթիվ երկրների շարքում է, որտեղ ատենախոսությանը զուգահեռ պարտադիր է ունենալ սեղմագիր, որը պետք է արտացոլի ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումները, արդյունքների նորությունը, կիրառական նշանակությունը: Ընդ որում, սեղմագիրը պետք է հրապարակվի համապատասխան բուհի կամ գիտական կազմակերպության կայքում: Սա լավ հնարավորություն է երկրի գիտական նորույթը մեկտեղելու ու համակարգված ներկայացնելու համար, առավել ևս, որ սեղմագրերի պարագայում, ի տարբերություն ատենախոսությունների, հեղինակային իրավունքի խնդիրներ չեն կարող առաջանալ, դրանք տպագրվում են առնվազն 50 օրինակով ու տարածվում մասնագետների շրջանում, տրամադրվում գրադարաններին ու մասնագիտական կազմակերպություններին: Այստեղ, թերևս, սեղմագրերի թարգմանության ու օտար լեզվով (անգլերենով) միջազգային հանրությանը ներկայացնելու խնդիրն է կարևորվում: Իսնդրի լուծումը կարելի է տալ պետականորեն ֆինանսավորվող առանձին ոչ մեծ ծրագրով, որի իրականացումը, մի կողմից կնպաստի հայ գիտնականների ու հայրենական գիտական արդյունքի միջազգայնացմանը, մյուս կողմից՝ այդքան տարածված գրագողության կանխմանը:

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ

### ԴՐՈՒՅԹ

Անհրաժեշտ է հրաժարվել ոչ արդյունավետ, մշտապես գործող մասնագիտական խորհուրդներից և փոխարենը յուրաքանչյուր պաշտպանության համար կազմավորել փոքր մասնագիտական խմբեր



Մասնագիտական խորհուրդները նախկինից մնացած, ատենախոսությունների պաշտպանությունը կազմակերպող ու իրենց, կարելի է ասել, սպառաժ օղակներ են: Աստիճանաշնորհման խորհրդային համակարգը ժառանգած գրեթե բոլոր երկրները հրաժարվել են 1-2 տասնյակ անդամ ունեցող մասնագիտական խորհուրդների «ծառայություններից», իսկ արևմտյան երկրներում արդյունավետորեն գործում են 3-5 հոգանոց մասնագիտական խմբերը: Մեզանում ևս օր առաջ անհրաժեշտ է հրաժարվել ոչ արդյունավետ, մշտապես գործող մասնագիտական խորհուրդներից և փոխարենը յուրաքանչյուր պաշտպանության համար կազմավորել փոքր մասնագիտական խմբեր: Խմբերում հնարավորինս ընդգրկել մասնագետներ արտասահմանից: Ասենք, որ վերջին շրջանում նույնիսկ Ռուսաստանում են սկսել կազմակերպել «արևմտյան տիպի» պաշտպանություններ: Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանում, օրինակ, ատենախոսության պաշտպանության համար ստեղծվում է յոթ հոգանոց խումբ, որում առնվազն երկուսը նույն համալսարանից են, առնվազն երկուսն արտասահմանից են, առնվազն երկուսն արտասահմանյան համալսարաններից: Ընդ որում, այսպիսի պաշտպանությունների արդյունքում ատենախոսին շնորհվում է ոչ թե գիտությունների թեկնածուի, այլ դոկտորի (PhD) գիտական աստիճան: Հայաստանի գիտական պոտենցիալը, մեր բուհերի, գիտնականների ու գիտական կազմակերպությունների ունեցած կապերը լիովին բավարար են Հայաստանում միջազգային ստանդարտներին համապատասխան պաշտպանությունների կազմակերպման համար: Այս դեպքում կկարողանանք հրաժարվել նաև պաշտոնական ընդդիմախոսների ծառայություններից. մասնագիտական խմբում ընդգրկված բոլոր մասնագետները հավասարապես նաև ընդդիմախոսներ կլինեն:

### ԻՆՔՆԱՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ օրենսդրական և ենթօրենսդրական ակտերով է կարգավորվում գիտական աստիճանաշնորհման համակարգը ՀՀ-ում (4.1):
2. Ի՞նչպիսի՞ պահանջներ են առաջադրվում ասպիրանտուրայի ընդունելության ժամանակ (4.2):
3. Ի՞նչ գործառույթներ է իրականացնում Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն (4.3):



4. Ինչպե՞ս է ձևավորվում մասնագիտական խորհուրդը, ինչպիսի՞ գործառույթը ունի այն (4.4):
5. Ինչպիսի՞ն են ատենախոսության և սեղմագրի ձևավորման պահանջները (4.5):
6. Ինչո՞վ կբացատրեք բարձրագույն մասնագիտական կրթության և գիտական աստիճանաշնորհման համակարգի օրենսդրական բարեփոխումների անհրաժեշտությունը (4.6):

## Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ Ն Ե Ր

Ձև N 1

### ՑՈՒՑԱԿ

ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ ՇՆՈՐՀՈՂ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ԱՆԴԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ

(խորհուրդը, մասնագիտությունները և բնագավառը)

h/h	Ազգանուն, անուն, հայրանուն	Ծննդյան թիվ	Հիմնական աշխատավայրը և պաշտոնը	Գիտական աստիճանը, մասնագիտության թվանիշն ըստ պաշտպանած ատենախոսության	Գիտական աշխատությունները վերջին 5 տարում, ղեկավարած հայցորդները
1	2	3	4	5	6

Ձև N 2

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ

### ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

1. Հայցորդի դիմումը:
2. Կադրերի հաշվառման անձնական թերթիկը (2 օրինակ):
3. Հայցորդի բարձրագույն կրթության դիպլոմի վավերացված պատճենը կամ թեկնածուի գիտական աստիճանը հավաստող վկայագրի վավերացված պատճենը (1 օրինակ):
4. Տեղեկանք մասնագիտական քննության հանձնման մասին (1 օրինակ):
5. Ատենախոսության թեմայով հրատարակված աշխատությունների ցուցակը (1 օրինակ):
6. Քաղվածք ատենախոսության թեմայի հաստատման որոշումից (1 օրինակ):
7. Թեման հաստատած հիմնարկի եզրակացությունը (1 օրինակ):
8. Ատենախոսությունը անհրաժեշտ քանակով՝ ԲԿԳԿ-ին, հիմնարկի գրադարանին, առաջատար կազմակերպությանը և պաշտոնական ընդդիմախոսներին ուղարկելու համար: Ատենախոսության օրինակները ներկայացվում են հայցորդի ստորագրությամբ՝ տիտղոսաթերթի վրա:

Ձև N 3

### ԲԿԳԿ ՈՒՂԱՐԿՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

1. Խորհրդի ուղեկցող նամակը (բլանկի վրա)՝ մասնագիտական խորհրդի նախագահի ստորագրությամբ:
2. Տեղեկանքն ըստ Ձև N 12-ի:

3. Կադրերի հաշվառման անձնական թերթիկը:

4. Խորհրդի նիստի սղագրությունը խորհրդի նիստին ներկա անդամների ցուցակով, խորհրդի նախագահի և գիտական քարտուղարի ստորագրությամբ:

5. Խորհրդում նախնական քննարկման եզրակացությունները, ատենախոսությունը պաշտպանության ընդունելու վերաբերյալ որոշումը:

6. Խորհրդի եզրակացությունը:

7. Պաշտոնական ընդդիմախոսների և առաջատար կազմակերպության կարծիքները:

8. Քաղվածք ատենախոսության թեմայի հաստատման որոշումից:

9. Թեման հաստատած հիմնարկի եզրակացությունը (1 օրինակ):

10. Տեղեկանք մասնագիտական քննության հանձնման մասին (1 օրինակ):

11. Հայցորդի բարձրագույն կրթության դիպլոմի վավերացված պատճենը կամ թեկնածուի գիտական աստիճանի վկայագրի վավերացված պատճենը:

12. Անձնագրի պատճենը:

13. Փաստաթղթերի ցուցակն ըստ Ձև N 13-ի:

**Ձև N 4**

#### **ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ ՊԱՀՊԱՆՎՈՂ**

#### **ՓԱՍՏԱԹՂԹԵՐ**

1. Կադրերի հաշվառման անձնական թերթիկը:

2. Նիստի հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունն Ձև N 11-ի:

3. Ներկայաթերթիկն Ձև N 9-ի:

4. Սեղմագրի առաքման ցուցակը՝ ամսաթվի նշումով, գիտական քարտուղարի ստորագրությամբ:

**Ձև N 5**

#### **ՍԵՂՄԱԳՐԵՐԻ ԱՌԱՔՄԱՆ ՑՈՒՑԱԿ**

1. Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե  
0028, Երևան, Օրբելի եղբայրների 22

2. Հայաստանի ազգային գրադարան (2 օրինակ)  
0009, Երևան, Տերյան փող. 72

3. Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն, գիտատեխնիկական գրադարան  
0051, Երևան, Կոմիտաս պ. 49/3

**ԱՏԵՆԱԽՍՈՒԹՅԱՆ ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹԸ**

Հիմնարկի անվանումը, որտեղ հաստատվել է  
ատենախոսության թեման

Ազգանուն, անուն, հայրանուն  
Ատենախոսության անվանումը

Ատենախոսություն

\_\_\_\_\_ մասնագիտությամբ  
\_\_\_\_\_ գիտությունների

դոկտորի (թեկնածուի) գիտական  
աստիճանի համար

Գիտական ղեկավար՝

քաղաք-տարեթիվ

**ՍԵՂՄԱԳՐԻ ԿԱԶՄԸ**

Հիմնարկի անվանումը, որտեղ գործում  
է ատենախոսությունը պաշտպանության ընդունած մասնագիտական  
խորհուրդը

Ազգանուն, անուն, հայրանուն  
Ատենախոսության անվանումը

\_\_\_\_\_ մասնագիտությամբ  
\_\_\_\_\_ գիտությունների

դոկտորի (թեկնածուի) գիտական աստիճանի  
հայցման ատենախոսության սեղմագիր

քաղաք-տարեթիվ

ՍԵՂՄԱԳՐԻ 2-ՐԴ ԷՋՐ

Ատենախոսության թեման հաստատվել է \_\_\_\_\_

*հիմնարկի անվանումը*

Գիտական ղեկավար (խորհրդատու) \_\_\_\_\_

*գիտական աստիճանը, ա.ա.հ.*

Պաշտոնական ընդդիմախոսներ \_\_\_\_\_

*գիտական աստիճանը, ա.ա.հ.*

Առաջատար կազմակերպություն \_\_\_\_\_

*անվանումը*

Պաշտպանությունը կայանալու է \_\_\_\_\_

*ամսաթիվ, ժամ*

*հիմնարկի անվանումը (հասցեն)*

\_\_\_\_\_ մասնագիտական խորհրդում

*խորհրդի անվանումը և համարը*

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ \_\_\_\_\_

գրադարանում

Սեղմագիրն առաքված է \_\_\_\_\_

*ամսաթիվ*

Մասնագիտական խորհրդի

գիտական քարտուղար \_\_\_\_\_

*(ստորագրություն)*

*(ա.ա.)*

**ՆԵՐԿԱՅԱԹԵՐԹԻԿ**

\_\_\_\_\_ անուն, ազգանուն  
 \_\_\_\_\_ մասնագիտությամբ  
 \_\_\_\_\_ մասնագիտության անվանումը  
 ատենախոսության պաշտպանության \_\_\_\_\_  
 \_\_\_\_\_ խորհրդի անվանումը  
 մասնագիտական խորհրդի \_\_\_\_\_ նիստի  
 \_\_\_\_\_ ամսաթիվը և արձանագրության համարը

Անուն, ազգանուն	Գիտական աստիճանը	Ներկայությունը (ստորագրություն)	Քվեաթերթիկը ստացել է (ստորագրություն)

Մասնագիտական խորհրդի  
 գիտական քարտուղար

**ՔՎԵԱԹԵՐԹԻԿ**

\_\_\_\_\_ մասնագիտական խորհրդի  
 \_\_\_\_\_ խորհրդի անվանումը  
 \_\_\_\_\_ նիստի  
 \_\_\_\_\_ արձանագրության համարը և ամսաթիվը

Հայցորդի անունը, ազգանունը	Արժանի է գիտական աստիճանի <sup>1</sup>	Քվեարկության արդյունքներ <sup>1</sup>
		համաձայն եմ համաձայն չեմ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ հ. \_\_\_\_\_

\_\_\_\_\_ մասնագիտական խորհրդի հաշվիչ

*խորհրդի անվանումը*

հանձնաժողովի նիստի «\_\_\_\_» \_\_\_\_\_ 20 թ.

Հաշվիչ հանձնաժողովի կազմը \_\_\_\_\_

*(ազգանուն, անուն)*

Հանձնաժողովն ընտրված է \_\_\_\_\_-ին դոկտորի (թեկնածուի) գիտական աստիճան շնորհելու հարցով խորհրդի գաղտնի քվեարկության արդյունքները հաշվելու համար:

Մասնագիտական խորհրդի անդամների քանակը \_\_\_\_\_

Խորհրդում լրացուցիչ անդամների քանակը \_\_\_\_\_

Նիստին մասնակից անդամների քանակը \_\_\_\_\_ այդ թվում՝ քննարկվող

ատենախոսության մասնագիտությանը համապատասխան դոկտորների քանակը \_\_\_\_\_

Բաժանված քվեաթերթիկներ \_\_\_\_\_

Չբաժանված քվեաթերթիկներ \_\_\_\_\_

Քվեաթերթիկներ քվեատուփում \_\_\_\_\_

Քվեարկության արդյունքները

\_\_\_\_\_ -ին \_\_\_\_\_

գիտությունների դոկտորի (թեկնածուի) գիտական աստիճան շնորհելու համար քվեարկել են \_\_\_\_\_ -ը, որից

«կողմ» \_\_\_\_\_

«դեմ» \_\_\_\_\_

անվավեր քվեաթերթիկներ \_\_\_\_\_

*Հաշվիչ հանձնաժողովի նախագահ*

*Հանձնաժողովի անդամներ*

**ՏԵՂԵԿԱՆՔ**

**1. Հայցորդ**

- 1.1 ազգանուն, անուն, հայրանուն \_\_\_\_\_  
(հայերեն, ռուսերեն)
- 1.2 ծննդյան օրը, ամիսը և տարեթիվը \_\_\_\_\_
- 1.3 քաղաքացիությունը, ազգությունը \_\_\_\_\_
- 1.4 որտեղ, երբ է ընդունվել և ավարտել բուհը \_\_\_\_\_
- 1.5 մասնագիտությունը \_\_\_\_\_
- 1.6 ինչ լեզուների է տիրապետում \_\_\_\_\_
- 1.7 որտեղ, երբ է ընդունվել և ավարտել ասպիրանտուրան \_\_\_\_\_
- 1.8 աշխատավայրը, պաշտոնը, հեռախոսի համարը \_\_\_\_\_
- 1.9 բնակվելու հասցեն, հեռախոսի համարը \_\_\_\_\_
- 1.10 հրատարակված աշխատությունների քանակը \_\_\_\_\_  
(մենագրություն, հոդված և այլն)

**2. Ատենախոսություն**

- 2.1 անվանումը (հայերեն և ռուսերեն) \_\_\_\_\_
- 2.2 թվանիշը և մասնագիտությունը \_\_\_\_\_
- 2.3 որտեղ և երբ է հաստատվել թեման \_\_\_\_\_
- 2.4 տեսակը (ատենախոսություն, մենագրություն, գիտական զեկուցում) \_\_\_\_\_

**3. Գիտական ղեկավար(ներ), գիտական խորհրդատու.** (ա. ա. հ.) \_\_\_\_\_

**4. Պաշտոնական ընդդիմախոսներ.** (ա. ա. հ.) \_\_\_\_\_

**5. Առաջատար կազմակերպությունը** \_\_\_\_\_

**6. Մասնագիտական խորհուրդ**

- 6.1 համարը \_\_\_\_\_
- 6.2 հիմնարկը, որտեղ գործում է խորհուրդը \_\_\_\_\_

**7. Պաշտպանություն**

- 7.1 օրը \_\_\_\_\_
- 7.2 նիստի մասնակիցների քանակը \_\_\_\_\_
- 7.3 քվեարկության արդյունքները \_\_\_\_\_  
«կողմ» \_\_\_\_\_  
«դեմ» \_\_\_\_\_  
անվավեր քվեաթերթիկներ \_\_\_\_\_
- 7.4 խորհրդի որոշումը (դրական, բացասական) \_\_\_\_\_
- 7.5 շնորհված գիտական աստիճանը \_\_\_\_\_

*Մասնագիտական խորհրդի նախագահ*

*Գիտական քարտուղար*

**ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑՈՒՑԱԿ**

(ազգանուն, անուն)

Փաստաթղթերի անվանումը	Թերթերի քանակը	Էջեր ից մինչև

*Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար*

**ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՑ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ**

ա/ համապատասխանեցման ենթակա վկայագիրը և դրա պատճենը (վկայագրի բնօրինակը վերադարձվում է պատճենի հետ համեմատելուց հետո),

բ/ վկայագրի վավերացված թարգմանությունը հայերեն,

գ/ թեկնածուի գիտական աստիճանի դեպքում բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը, դոկտորի գիտական աստիճանի դեպքում թեկնածուի գիտական աստիճանի վկայագիրը,

դ/ կադրերի հաշվառման անձնական թերթիկ,

ե/ ատենախոսությունը (կամ դրա հավասարագորը),

զ/ սեղմագիրը (կամ դրա հավասարագորը),

է/ հրատարակված գիտական աշխատանքները,

ը/ անձնագրի պատճենը:

Փաստաթղթերը ներկայացվում են մեկ օրինակից, թղթապանակում կարված:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Կրթության մասին» ՀՀ օրենք, ՀՕ -297, 14/04/1999
2. «Լեզվի մասին» ՀՀ օրենք, ՀՆ-0773, 30/03/1993
3. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, 10/07/2009
4. «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենք, 15/11/2005
5. «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, ՀՕ-164-Ն, 08/07/2005
6. «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, 14/12/2004
7. «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, 23/10/2001
8. «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենք, 05/12/2000
9. Ճուղության Ա., Մխիթարյան Ա., Ասպիրանտուրայից դոկտորանտուրա, Հյուսիսայան համալսարան, Երևան, 2016
10. Երիցյան Ս., Ճուղության Ա., Մխիթարյան Ա., Դոկտորանտուրա. բարձրագույն կրթության երրորդ աստիճանի կազմակերպման հիմունքներ, Էդիթ պրինտ, 206 էջ, Երևան 2017
11. Mkhitarian A., Khachatryan N., Effective Teaching Strategy in Doctoral Programs, Review of Armenian Studies, 1, 2019, pp 198-208
12. Mkhitarian A., Khachatryan N., Effective Management of Doctoral Studies, LAMBERT Academic Publishing 2019, 100 pages, ISBN 978-620-0-08248-0
13. Mkhitarian A., Khachatryan N., Khalafyan N., Management of doctorate in the market of science, Katchar scientific periodical, Yerevan, 2020, pp. 65-82
14. Mkhitarian A., Begoyan K., Development of Doctoral Studies Management Process in NAS RA, Katchar 1, 2022, pp. 139-153, DOI: 10.54503/2579-2903-2022.1-139
15. <https://escs.am/am>, <https://hesc.am/>

## LEGISLATIVE REGULATIONS OF EDUCATION MANAGEMENT

### Introduction

#### CHAPTER 1: REGULATIONS OF THE LAW ON EDUCATION

- 1.1 Legislative regulations and key concepts
- 1.2 State policy in the field of education
- 1.3 The education system and the organization of the education process
- 1.4 Different levels of education and admission requirements
- 1.5 Educational institutions
- 1.6 Management of the education system
- 1.7 Economic foundations and social guarantees of the education system

#### CHAPTER 2: LEGISLATIVE REGULATIONS OF THE VOCATIONAL AND MIDDLE PROFESSIONAL EDUCATION

- 2.1 Basic concepts of the field of vocational and middle professional education
- 2.2 State policy in the field of vocational education
- 2.3 Vocational and middle professional education system
- 2.4 Vocational and middle professional education management
- 2.5 Subjects and economic foundations of vocational education system

#### CHAPTER 3: REGULATIONS OF THE LAW ON HIGHER AND POST-GRADUATE PROFESSIONAL EDUCATION

- 3.1 Basic concepts of the field of higher education
- 3.2 State policy in the field of higher education
- 3.3 Autonomy, jurisdiction and academic freedoms of universities
- 3.4 Higher education system
- 3.5 Higher educational institutions
- 3.6 Management of the higher educational institution
- 3.7 Subjects of educational activity
- 3.8 Management of higher professional education system

#### CHAPTER 4: THE LEGAL FIELD OF POSTGRADUATE EDUCATION MANAGEMENT

- 4.1 Legislation on academic degree awarding and the third level of higher education
- 4.2 The procedure of admission and training in postgraduate studies
- 4.3 The academic degree awarding regulations
- 4.4 The regulation of the work of the specialized council
- 4.5 Dissertation and abstract design requirements
- 4.6 The need for legislative reforms in the field of postgraduate professional education

### Appendixes

### References

ԱՏՈՄ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ԱՐՄԵՆ ՃՈՒՂՈՒԹՅԱՆ

**ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ  
ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ**

АТОМ МХИТАРЯН

АРМЕН ДЖУГУРЯН

**ЗАКОНОДАТЕЛЬНЫЕ РЕГУЛИРОВАНИЯ УПРАВЛЕНИЯ  
ОБРАЗОВАНИЕМ**

*Համակարգչային ձևավորող՝ Ա. Քյասինյան*

*Կազմի ձևավորումը՝ PRactice agency*

Չափսը՝ A4 210 x 297,

թուղթը՝ օֆսեթ

Ծավալը՝ 9 տպ. մամուլ

Տպաքանակ՝ 200

